ԷՋՄԻԱԾԻՆ

ՌՆԷ
ԺԵ ՏԱՐԻ
Փեբրուար - Մարտ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Բ - Գ

1958

697

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Խորհուրդ Վարդանանց	3
Դ. Պ.— Աշխարհազանցություններ	6
ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ—Աստվածային խաղաղությունը	11
Վարդանանց տոնը և Վեհափառ Հայրապետի անվանակոչության հանդեսը Մայր Աթոռում	14
ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԹԱԲՅԱՆ— Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի այցելությունը Մուղնու Ս. Գևորգ վանքին	17
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	21
Դերապատիվ Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյան	23
Սուրբ Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ոսկյա աղամանդակուռ շքանշանի հանձնումը Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտոր Ժոզե դե Ազեբեդո Պերդիկաոյին	25
Թուրքիայի հայոց Պատրիարքության Սուրբ Խաչ դպրեվանքի նորակերտ ուսումնարանի բացումը	27
Հայ եկեղեցի Շվեյցարիայում	29
Ռուսերի Հայոց «Կոմիտաս» երգչախումբը	30
Գյոմրիի հայոց «Շնորհալի» երգչախմբի 25-ամյակը	31
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ— Ներսես Շնորհալին և իր ժամանակաշրջանը	32
ՂԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼԱՄԴԱՐՅԱՆ— Մեսրոպ արքեպիսկոպոս Սրմբատյան	36
Դ. ՍԱՐԳՍՅԱՆ— Վարդանանց հիշատակին	41
ԹԱԴԵՈՍ ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ— Զվարթնոցի շուրջը	46
Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ— Մակար եկմալյան	52
Ա. ԵՐԵՄՅԱՆ— Միշնադարի հայ երաժշտության անհայտ դրոշակակիրները	59

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ. ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1988 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՉԳԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԽՈՐՀՈՒՐԴ ՎԱՐԴԱՆԱՆՑ

«Քաջութեամբ միայն մեռցուք, զանուն և զոգիս ևեր ժառանգեսցուք... Բայց միայն յաւուրիւս քաջութեան վասուրիւն մի՛ խառնեսցուք»:

(ՎԱՐԴԱՆ ԱՌԱՐԱՊԵՏ)

Մեր ազգային-եկեղեցական մեծ տոների շարքում Ս. Ղևոնդյանց և Ս. Վարդանանց տոնը բացառիկ տեղ է գրավում, որպես հայ ժողովրդի դարավոր ազատագրական պայքարի պատմության համաժողովրդական հերոսամարտ, որը դարերից ի վեր մեր ժողովրդի սիրտը լցրել է կրոնական և հայրենասիրական ջերմ զգացմունքներով և խոհերով:

Վարդանանց պատերազմը և Ղևոնդյանց նահատակությունը ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ հավատական ՍՐԲԱՑՈՒՄՆ էր և ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԵՐՈՍԱՑՈՒՄԸ: Այդ իսկ պատճառով նրանց տոնը Մեծ պահոց նախօրյակին միշտ կլ տոնվել է ազգային հպարտության անխառն զգացմունքով: Ս. Վարդանանք և Ս. Ղևոնդյանք, Ավարայրի հակատամարտից մինչև այսօր, մեր ժողովրդի համար հանդիսացել են հոգևոր անկախության, խղճի ազատության, հայրենասիրության չզիջունող և հավետ կենդանի խորհրդանշանը:

Ու Վարդանանց պատերազմը ամենասրբատուռուչ մեկ հանգրվանն է հանդիսանում հայոց պատմության՝ որպես նրա «ազգապանծ և հոգեզմայլ մի էջը»:

Վարդանանք Ավարայրի հակատամարտում իրենց հավատքի զորությամբ և «զգնականութեամբն Աստուծոյ» այնպիսի հերոսություն գործեցին, որի «համբաւն պատմեսցի մինչև ցյաւիտեան»:

Վարդանանց հերոսամարտի պատմական նշանակությունը առավել պայծառ և հասկանալի է դառնում ե դարի տարբեր հասարակական-քաղաքական և կրոնական բախումների և գաղափարախոսությունների լույսի տակ:

Մի դար առաջ, Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակվելը բացավառել էր Սասանյանների և Մազդեզական կրոնի հետևորդների անհաշտ թշնամությունը հայերի նկատմամբ մյուս կողմից: Քրիստոնեությունը հեղաշրջել էր հայ ժողովրդի ազգային կյանքը:

Ե դարի սկզբներին, Հայ եկեղեցին իր ստեղծած հայերի քրիստոնեական նոր մշակույթով, լեզվով ու դպրությամբ, Աստվածաշնչի թարգմանությամբ, հայ ժողովրդի գիտակցության մեջ առաջ էր բերել բարոյական խոր հեղաշրջում, նրա հոգիների մեջ ներարկելով ոգեկան մի այնպիսի զորու-

թյուն, որը նրան դարձրեց արի և տոկուն՝ գալիք բոլոր չրհեղեղների դեմ:

Մյուս կողմից, «Քրիստոնյա» Բյուզանդիան ձգտում էր իր մշակույթի մեջ ձուլել հայ ժողովրդին: Մեսրոպյան տառերը փրկեցին հայ լեզուն և մշակույթը բյուզանդական խառնարանի մեջ սուզվելուց: Իսկ Վարդանանց մերկացրած սրերը փրկեցին մեր հոգու, հավատի ազատությունը, ինքնուրույնությունը: «Ցայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրեշտակք և ոչ մարդիկ, ոչ սուր, ոչ հուր...»: Այս խոսքը, անվեհեր խոսքերը մարտահրավեր էին պարսկական բռնապետությանը հանուն գաղափարի, հանուն խորին համոզմունքների, հանուն հայ հողի, ջրի, հայ հավատի, մարտահրավեր «ճայոց պատերազմի, վասն Հայրենեաց և վասն Հիսուսի»:

Պարսից արքունիքը շատ ճիշտ էր հասկացել, որ չնչելու համար իրեն ենթակա ժողովուրդների ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ, պետք էր նախ չնչել նրանց ՀԱՎԱՏԸ, ԿՐՈՆԸ: Պարսիկները աշխատում էին չնչել քրիստոնեությունը, ապա ձուլելու համար հայ ժողովուրդը:

Վարդան և իր զինակիցները մի պատասխան միայն ունեին այդ քաղաքականության. «Քաջութեամբ մեռցուք», «մի՛ երկուցեալ զանգիտեսցուք ի բազմութենէ հեթանոսաց... սատակեսցուք զզօրութիւն նոցա, զի բարձրասցի ԿՈՂՄՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ, և եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց, սուրբ մահուամբ պատերազմեալ, ընկալցուք խընդութեամբ սրտի, քայց միայն ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԱՋՈՒԹԵԱՆ ՎԱՏՈՒԹԻՒՆ Մի՛ ԽԱՌՆԵՍՑՈՒՔ»:

Մարտի դաշտ չիջած՝ Վարդանանք հաստատել էին, որ իրենց ՀԱՎԱՏԸ ԵՎ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈԳԻՆ արդեն իսկ անպարտելի են, և իրենք ջանել են հաղթությունը՝ հայ ժողովրդի հոգեկան ազատությունն ու անմահությունը, որովհետև Ավարայրում կռվող հայ ժողովրդի համար քրիստոնեությունը ոչ թե «փրկ զհանդերձ» էր, այլ «փրկ զգոյն մարմնոյ», որը ոչ մի բռնապետ «չկարէ շրջել, թերևս և ոչ այլ կարասցէ մինչև ի կատարած»: Այս իմաստով և այս ըմբռնումով ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՐԱՆԱԼ նշանակում էր ուրանալ ոչ միայն ՀԱՎԱՏՆ ու ԵԿԵՂԵՑԻՆ, այլ նաև ԱԶԳՈՒԹՅՈՒՆ և ՀԱՅՈՒԹՅՈՒՆ: Վարդանանց հոգեկան այս միությանը բուն գաղտնիքը պետք է փնտռել այն նշմարտության մեջ, որ Վարդանանց օրով, ինչպես և հետագայում, միացել և նույնացել էին մեր ժողովրդի գիտակցության մեջ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ և ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ, ԺՈՂՈՎՈՒՐԴ և ՀԱՎԱՏ, ԱԶԳ և ԵԿԵՂԵՑԻ:

Միությանը այդ ոգին փառավորվեց Վարդանանց հերոսամարտով, հաղթանակեց Վահանյան շարժման ժամանակ, որով և հավերժացավ հայ ժողովրդի կյանքում և դարձավ անխորտակելի վեմը մեր ժողովրդի գոյության:

Այս իմաստով Վարդանանց տոնը լոկ մի սրտագին վերհիշում չէ դյուցազնական մի դրվագի, այլ 1 500 տարիներից ի վեր տևող, ապրող, ներշնչող, կազմակերպող, անտեսանելի բայց միշտ զգալի ու ներկա մի մեծ ՈՒԺ, մի մեծ ՍԿԶԲՈՒՆՔ, մի հրաշափառ ՈԳԻ է:

Վարդանանց հերոսամարտը, տոգորված ազգային արժանապատվության բարձր գիտակցությամբ, սրատուչ և անձնուրաց հայրենասիրությամբ, հերոսությամբ, նահատակությամբ, ապրեցնում է մեզ, ցնցում, ամրապնդում և մղում հավատարիմ մնալու նրանց ՈԳՈՒՆ և ՊԱՏՔԱՐԻՆ: Վարդանանք և Ղևոնդյանք Մեռան, որպեսզի ԱՊՐԵՆ հայ ժողովուրդն ու Հայ Եկեղեցին:

Մեծ և անմոռաց է երախտիքը Ս. Ղևոնդյանց և Ս. Վարդանանց՝ Հայ Եկեղեցու կյանքում: Նրանք «քաջուք պատերազմն» մղեցին և հասան «աւետեաց», պատվով կատարելով իրենց սրբազան պարտքը Եկեղեցու, Հայրենիքի և ժողովրդի առաջ:

Մենք, ինչպես մեր նախորդ սերունդները, երախտագիտությամբ ոգեկոչում ենք Ս. Ղևոնդյանց և Ս. Վարդանանց խնկելի հիշատակը սուրբ պատարագով, խնկով ու աղոթքով, հանդեսներով:

Մեր նախնյաց առաքինություններով պարծենալը բավական չէ: Իսկանն այն է, որ այսօր էլ ապրենք և ներշնչվենք Վարդանանց ոգով, գնանք մեր սրբազան նախնյաց առաքինության ճանապարհով, որովհետև

Աստված կարող է այս բառերից էլ վարդանի և Ղևոնդի որդիներ հարուցել:

Բայց, դժբախտաբար, միշտ չէ, որ այդ հաջողվում է մեզ: Հաճախ, մենք մոռանում ենք մեր մեծ նահատակներին և նրանց օրինակով ու բաջությամբ, նախանձախնդրությամբ չենք պայքարում մեր եկեղեցու և ժողովրդի թշնամիների դեմ:

Այսօր, դժբախտաբար, Սփյուռքի մեր ազգային-եկեղեցական կյանքում ականատես ենք լինում այնպիսի խորթ և տխուր երևույթների, որոնք բնդհանուր ոչինչ չունեն Վարդանանց ոգու և պայքարի հետ:

Այսօր Անթիլիասում որոշ մութ ուժեր և մի շարք ոտեկորույս մարդիկ, ե դարի Հազկերտի նման, փորձում են նորից մակտել սրբազան «ուխտն հաւատոց մերոց», որի պաշտպանության համար նահատակվեցին Վարդանանք:

Այդ բանն անել չհաջողվեց Հազկերտին, չի հաջողվի և նրանց, որովհետև սրբազան «ուխտն հաւատոց մերոց ոչ եթէ ընդ մարդոյ..., այլ անլուծութեամբ Աստուծոյ, որում չիք հնար խանդել և ի բաց ելանել ոչ այժմ, և ոչ յապա և ոչ յաւիտեանս և ոչ յաւիտենից յաւիտեանս»:

Ս. Ղևոնդյանց և Ս. Վարդանանց խնկելի հիշատակի առիթով, վերանորոգենք մեր ուխտը և Ղևոնդ Երեցի պես ասենք. «Ի բաց թողցուք ՉԵԱՒԱՐԱՑԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՍ ՄՈԼՈՐԵՆՈՑՆ, եղկելիս և ողորմելիս խաբ զամենայն մարդիկ զսոսա համարեսցուք», և Վարդանի ոգով հաստատենք. «Պատրաստ եմք... ի հալածանս և ի մահ... եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց... բայց միայն յարութիւնս հաջութեան՝ վառուիւն մի խառնեսցուք»:

ՃՇՄԱՐՏԱԶԱՆՑՈՒԹՑՈՒՆՆԵՐ

Հայ Եկեղեցվո և անոր Հայրապետական Սայր Աթոռին մասին վերջտարիի շփոթություն մը և թյուրիմացության մը մշուշը կտիրե միտքերուն մեջ։ Կա նաև կամավոր խեղաթյուրում մը կարգ մը շրջանակներու մեջ։

Մտային այս մոլորական վիճակը ավելի շեշտվեցավ ու տարածվեցավ Անթիլիասի ծանոթ ու ցավոտ խնդրին հետևանքով։ Եվ ավելի ողբերգականն այն է, որ այս կացության դիխավոր պատասխանատուն հանդիսացավ Անթիլիասի Հայրապետական Աթոռի միաբանության մեկ մասը, դիխավորությամբ՝ անբաղձալի պայմաններու տակ ընտրված և ոչ օրինական ձևով օծված՝ «կաթողիկոս»-ին։ Եվ բոլոր փորձերը, բանավոր սրբագրությամբ մը վեճը հարթելու և այդ Աթոռին վերադարձնելու վրդովված խաղաղությունն ու խանգարված կարգուսարքը, համաձայն քրիստոնեական-ավետարանական ոգվույն և անոր վրա հիմնված Հայաստանյայց Եկեղեցվո սկզբունքներուն,— մնացին ապարդյուն։ Ճեղքվածքը՝ այդ Աթոռին պատկանող մոտավորապես 150 000 ժողովուրդին միջև, փոխանակ գոցվելու՝ ավելի բացվեցավ ու լայնցավ։ Եվ վարակիչ հոսանքը, կաթողիկոսական տիտղոսի շուքով, տարածվեցավ մինչև օվկիանոսեն անդին, ուր գտավ պատրաստ դետին։ Եվ մոլորական այդ շուքը պտտցնողը, մինչև քաղաքական մթնոլորտի բարձր խավերուն մեջ, եղավ նույնպես հոգևորական մը, դրժելով իր ուխտին և իր կրոնական կոչումին, և կուսակցական փքոցով հրահրելով եղբայրասպանությունը եկեղեցիներեն ներս։

Եվ այս ակտը կոչվեցավ սկզբնավորումը «նոր ժամանակաշրջան»-ի մը, արժանի ծափահարությունի և քաջալերության։ Եվ այդ քայլը առնվեցավ, որպեսզի «Հայաստանյայց Եկեղեցին ազատ մնա քաղաքական մարդանքներե և սովետական քարոզութենե, հայ եկեղեցականները դառնան ճշմարիտ հայ քրիստոնյաներ և ծառայեն միայն Հայ Եկեղեցվո և հայ ժողովուրդին, ազատ մնան չար ազդեցություններե և ազատ պահեն հայ հավատացյալներու պանդուխտ բազմությունները։ Դարձյալ, որպեսզի «Հայոց Եկեղեցին կրկես չդառնա քաղաքական գունավոր ու շիլ հաշիվներու, և որպեսզի հայ ժողովուրդի հոգևոր ու մշակութային շանքերը ազատ զարգացման, ծաղկելու հնարավորություն ունենան։

Գեղեցիկ խոսքեր, զորս չէ կարելի չատորագրել, իբրև միտքերը մեկու մը, որ վեր ու զերծ ըլլա, իր համախոհներով, աքաղաքական—մենք կավելցնենք՝ կուսակցական (Գ. Պ.)— գունավոր ու շիլ հաշիվներենն։

Եվ ինչո՞ւ այս եռվարը, ինչո՞ւ այս սահմանազանցությունը՝ Հայ Եկեղեցվո ծոցին մեջ փնտռելու նոր ավարներ, որպես թե զորացնելու համար ճակատը և պայքարելու նույնինքն Եկեղեցիին դեմ, թունավոր սլաքներ արձակելով անոր կեդրոնական պատնեշին դեմ, որ կրոնական է և որուն ետև անհողդողդ կանգնած է մեր Եկեղեցվո Պետը— Ընդհանրական Հայրապետը՝ իր հոգևոր սպառազինությամբ և մեր «Հավատքի Զորագլուխ»-են միայն առաջնորդված։ Տեսնել այս Պետին մեջ «կալանավորը» և «անվանական հեղինակությունը», առնվազն անբարեխղճություն է։ Կխնայենք ավելի ծանր որակումը. կամ ըսենք ավելի թեթևը՝ ճըշմարտազանցություն է։

Հակառակը պնդելու և հաստատելու համար՝ փաստերը պետք է խոսին։

Առնենք, օրինակ, նույնիսկ Կահիրեի եպիսկոպոսական ժողովը, զոր անպատասխանատու գրիչ մը չքաշվեցավ կոչելու «չա-

ռաղետ»: Այո, կար աղետ մը, և այդ աղետին աղբյուրը, որմե բխեցավ ՁԱՐԸ: Եվ այդ Ձարը խափանելու համար թափված բոլոր ջանքերը՝ Եկեղեցվո Պետին և Անոր գործակիցներուն կողմե, հանգիպեցան ապառաժի։ Ձարափոխվեցավ, որոշ նկատառումներով ու կանխամտածումներով, այն ոգին, որ ներշնչած էր այդ ջանացողները, տեսնելով, կամ տեսնել կարծելով անոր մեջ ծածկամտություն մը՝ այդ Արոոը ջնջելու։

Արդարև կար բան մը ջնջելիք, բայց ոչ Աթոռը, այլ դայն շրջապատող և անոր տիրացողը կալանավորող և Հայաստանյայց Եկեղեցվո ոգիին և ավանդություններուն անհավատարիմ կազմակերպության մը անտեղի միջամտությունը։ Չի՞նչ հն այդ չար ոգին և ավանդությունները, եթե ոչ նույն ինքն քրիստոնեական ոգին և անկե ծնունդ առած ավանդությունները Հայ Եկեղեցվո պրիսմակեն անցած ու բյուրեղացած։ Եվ այս Եկեղեցին կրոնական հաստատություն մըն է լոկ՝ յուրահատուկ կազմակերպությամբ, նվիրապետությամբ և սարքավորումով։ Եվ վեր կմնա ան, և պարտի մնալ, որևէ քաղաքական-կուսակցական ստորոգելիներե և ազդեցություններե։

Եվ ի՞նչ է մեր Եկեղեցիին կեցվածքը քաղաքական իշխանության հանդեպ։ Շատ հստակ է այն և առաքելական տեսությամբ պարզաբանված,— ենթազանգիլ Ի ՔԱՂԱՔԱԿԱՆՍ այն իշխանության, որուն հովանավորության տակ կապրին իր հավատացյալները (Հռոմ. ԺԳ 1—5)։ Այս առողջ ու խոհական տեսությունեն թելադրված՝ նույնիսկ Ս. Էջմիածնի «վերջին դույզ կաթողիկոսները» հաճախ կրկնած են, իրենց կոնդակներուն մեջ և դրավոր թե բերանացի հրահանգներով,— ապրիլ ու գործել տեղական պայմաններուն համաձայն», առանց անշուշտ զոհելու իրենց զուտ կրոնական և հոգևոր իրավասություններեն հովտ մ'անցգամ։ Եվ մեր երկրորդական Աթոռները—մեջն ըլլալով նաև Անթիլիասի Մասնավորը,— «հայրապետահաստատ ըլլան անոնք կամ ոչ, կհետևին անշեղ այս ուղղության, պահելով միանգամայն իրենց վարչական անկախությունը, բավական է, որ անոնք չմատնեն հավակնոտ ձգտում դեպի ի հոգևորս անկախություն ևս։ Այս՝ դուռ կբանա ներձվածողության և բաժանումներու։ Եկեղեցվո օրենքներն ու կանոնները, որ ունին հոգևոր բնույթ ու բովանդակություն, կմնան անբռնաբարելի՝ ամեն տեղ և ամեն երկրի մեջ, ինչ փոփոխական վարչաձևի տակ որ ալ գտնված ըլլա Եկեղեցին։

Քաղաքական հեղաշրջումներ մերթ կբստեղծեն ցավալի անբնականոնություններ ևս։ Ասոնք իրենց ժամանակավոր ծայրահեղություններով կցնցեն նաև կրոնական հաստատությունները—Եկեղեցին։ Այսպես եղավ, տարակույս չկա, նույնպես այն երկրին մեջ, ուր կգտնվի մեր կրոնական կենտրոնը։ Բայց ինչո՞ւ դժկամակիլ և չհաստատվանիլ, թե մեր Եկեղեցին, հակառակ այդ սկզբնական ցնցումներուն, կարողացավ, ոչ առանց վնասներու, անկասկած, պահել իր ինքնությունը անվթար, և շարունակել իր հոգևոր առաքելությունը ոչ բոլորովին աննշան հաշողություններով։ Եվ այդ սկսավ երջանկահիշատակ Տ. Գեորգ Զ կաթողիկոսի օրով։ Ս. Էջմիածինը, իր Մայր Աթոռով, մնաց միշտ իր հոգևոր կեդրոնը և բարձրագույն հեղինակությունը։ Դժվարին և դժպհի պայմաններու մեջ անգամ Սփյուռքը գիտցավ հարգել այս հեղինակությունը, պատվավոր—թե իսկ երբեմն՝ ըստ երևույթին քննադատական, բայց ավելի ճիշտ լուսաբանական—կեցվածքով, առանց զեղծանելու իր քաղաքացիական պարտականությանց մեջ։ Սրբագրվեցան, վարչական դետնի վրա, իրավասական թյուրիմացություններ և կարգապահական զանցառություններ։

Իսկ եթե շրջանի մը մեջ, ողբերգությամբ մը ծայր ուղող պառակտումի մը հետևանքով, որոշ չափով նման խնդիր մը մնաց անլույծ,— ադոր պատասխանատվությունը չէ կարելի և խղճի հետ հաշտ չէ բեռցնել Մայր Աթոռի վրա։ Եկեղեցական կարգապահության բացակայությունը՝ քաջալերվեցավ դարձյալ ոչ-եկեղեցական նկատումներով ու հաշիվներով։ Կուսակցական կարգապահությունը՝ անհանդուրժող ու աքցանող, ծանր դատավ, որ եկեղեցական կարգապահությունն ալ իր հեղինակությունը դներ ի դրած՝ անասաստղներ պատժելու ի զգաստություն։ Եվ չզիջավ ու չհամբերեց, որ ամենաբուռ ժամանակը իր դերը կատարեր՝ տխուր և ընդվզեցուցիչ դեպքերը բյուրեղացնելու, կացությունը պտղերու և խաղաղությունն ու բնականոնությունը վերադարձնելու։

Հիշեցնե՞նք ավելի հեռավոր—կիսադարյան—տխուր անցյալ մը, ուր շփոթվեցան երկու դերեր,— եկեղեցականն ու կուսակցականը։ Դրվագ մը միայն և «մնացածը իմաստասիրել», պիտի ըսեր մեր Նարեկացին։

Ապարթանական, չըսելու համար՝ ապերասան խրոխտությունը Ե-ի մը գրչին, որ կհանդգներ գլխիվայր շրջել իմաստը Լեռան քարոզի «երանի»-ներուն, և հակադրել անոնց իր երանելի «երանիները», պատգամե-

յով. «Հիսուս ըսած է... իսկ ես կըսեմ...»: Եվ նա, իր այս հակաքրիստոնեական պատգամին մեջ կխտացներ և՛ իր անձնական, և՛ իր կուսակցական դավանանքը։ Նա պատկառանքն իսկ զլացած էր Տերունական աղոթքի մը ընթացքին...։ Ավելի չենք ընդարձակվիր, չերթալու համար մինչև դեպքերու ներքադաս քննություն, մինչև խղճագիտություն։

Եվ հիմակ, Ե-ին ժառանգորդներն ու հաջորդները այլ թմբուկ կթակեն կամ կդափեն։ Հոգեփոխությո՞ւն, դժվար է հաստատել։ Բայց եթե ստուգիվ ասոնք ունեցեր են իրենց հոգեփոխությունը, ինչո՞ւ չեն ուզեր հավատալ, թե իրենց երբեմնի ճամբեն քալող ուրիշներ ալ կրնան ունենալ նույն հոգեփոխությունը։ Եթե երեկ ուրացիր են և ճայնոյիր, և այսօր կթողուն, որ փափագողներ ունենան իրենց դավանանքն ու օրենքը, ինչո՞ւ տարակուսիր։ Ի՞նչ տարբերություն՝ ըստ էության՝ այս երկու մակընթացությանց և տեղատվությանց միջև։— Ձեզի կանգնած քաղաքական գետնի վրա՝ որ մերը չէ։— Ուստի կըսենք, կա՛ այս փոփոխությունը. կուլրերն ալ կարող են տեսնել այդ. բայց ոչ հոգևոր կուլրերը։ Այս վերջինները «կալանավոր» մը պիտի տեսնեն եկեղեցվո բարձրագույն հեղինակության մեջ, որ ազատորեն կկիրարկե իր ավետարանչի և եկեղեցաշինության—նյութական և բարոյական իմաստով— սրբազան պաշտոնը։ Իր խոսքը, այնքան սրտագին, ոչ թե թելադրված է քաղաքական հշխանությենե, այլ լեցված է «ոստվածեղեն շող»-ով և Հոգվույն շնորհքով։ Եթե ունի նաև հայրենասիրական խոսք՝ այդ ոչ թե ոչ-եկեղեցական և ապակրոնական գաղափարաբանության մը ժրխտական դրույթե մը, այլ առաքելական պատվերի մը ողջախոհությենեն կառնե առավելապես իր ներշնչումն ու արդարացումը։

Մենք գիտենք, թե Մայր Աթոռի հանդեպ կասկածոտ ու բացասական դիրքի վրա գտնվողներուն մեջ անգամ կան համոզվածներ այս ճշմարտության։ Բայց ասոնք ալ ուրիշ կերպով կալանավորներ են և իրենց լեզուն կաշկանդված է։ Եվ այս կացությունը կկոչվի կուսակցական կարգապանություն։ Եվ զորավոր են ասոր մեջ, ի գին ճշմարտության զոհաբերումին, եթե այդ կպահանջե կուսակցական տեսակետը կամ շահը։ Բայց երանի թե այս ոգին չառաջնորդեր ճշմարտապանցությանց՝ իսկապես իրենց չպասկանան մարդին մեջ։

Եվ ահա այսօր, կուսակցական նույն այս կարգապահությամբ կթաթաբերվի տակավին Անթիլիասի մեջ ծնունդ առած և եկեղեցվո ՄԻ ՄԱՐՄԻՆը փեռեկող շարժումը։

Ողջմտորեն և անաչառապաշարորեն թող դիտվի ու դատվի այս շարժումը և պիտի ճշմարտվի այս իրողությունը։ Այս լույսին տակ թող բերվի Կահիրեի Եպիսկոպոսական ժողովին «Համաձայնագիր»-ը, տեսնելու համար, թե ինչ կա անոր մեջ կասկածահարույց՝ երևակայված դավադրության մը առնչությամբ։ «Անթիլիասի Աթոռը քանդել...»— և ո՞ւր ծածկված է այս եղբերվաքաղը, երբ այդ Համաձայնագրին մեջ, ոչ միայն անձեռնմխելի հայտարարված է այդ Աթոռին վարչական անկախությունը, անշուշտ իր սեղմ—և այժմ ոչ իսկ պատմական, սահմաններուն մեջ, այլ նաև ու մանավանդ ավելցված է նոր ու պատվաբեր առաջադրություն մը՝ այս Աթոռի պետին անունն ալ հիշատակելու, սուրբ պատարագի միջոցին, ի չարս նվիրապետական մյուս Աթոռներուն և Ամենայն Հայոց Հայրապետի անունեն անմիջապես հետո, բոլոր եկեղեցիներուն մեջ, Ընդհանրական Հայրապետության իրավական սահմաններեն ներս իսկ։ Ահա այդ Համաձայնագրին սույն առաջադրության վերաբերյալ է հոդվածը. «Սուրբ պատարագի միջոցին, Ամենայն Հայոց Կաթողիկոսին անվան հիշատակությունը կկատարվի Հայաստանյայց եկեղեցվո բոլոր թեմերուն մեջ անխտիր, ինչպես նաև Հայրապետական մաղթանք յանուն Ս. Էջմիածնի և Ընդհանրական Հայրապետի։ Նույնպես, այդ բոլոր թեմերուն մեջ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվան հիշատակությենեն անմիջապես հետո, ՊԻՏԻ ՀԻՇԱՏԱԿԻՍ ՆԱԵՎ ԱՆՈՒՆԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ»։

Այո, այդ ժողովը, իր ըրածին դիտակից և հետու հետին միտքե, դատապարտելով դատապարտած է անչափողական ոգին, որ կբխի անհանդուրժող և անհանդուրժելի հավակնության մը մոայլեն և որուն հետ չի կրնար հաշտվիլ երբեք եկեղեցվո միության կամ միասնականության անփոփոխելի գաղափարը։

Պիտի չուզեի ծանրանալ Ս. Էջմիածնի ներկա Գահակալին, Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա շնորհազարդ Կաթողիկոսին, այս խնդրի առնչությամբ, ունեցած կեցվածքին վրա, որ այնքան բուռն հարձակումներու թիրախ կդառնա, այնքան անիրավ ու երեվակայածին վերագրումներով։ Անշուշտ դժվար է, որ լույսը թափանցե նախապաշարումներով մթագնած միտքերեն ներս՝ շոշափելու համար ճշմարտությունը իր մերկության մեջ, և չիմանալու, կամա թե ակամա, հշմարտազանցություններու մեջ։ Չու-

նենալու երազական սարսափը՝ «կալանավոր» տեսնելու Ամենայն Հայոց Հայրապետը— Մասիսի «Քաջքո-ե՞ն արդյոք— և անոր հեղինակությունը «կաշկանդված»:

Նույն այդ Կաթողիկոսն էր, որ, ճամարձակ, հրավեր ուղղեց քանիցս՝ Անթիլիասի Կաթողիկոսության արժանի դասված Տ. Զարեհ սրբազանին, կողմերու ներկայացուցիչներով երթալու Ս. Էջմիածին և Մայր Աթոռին մեջ, անհասկացողությանց բարձումով և երկուստեք բանավոր զիջումներով լուծել կնճիռը 'բարյացակամորեն և ամենապատվավոր եղանակով։ «Դա՞վ», այս ա՛յնքան սրտցավ ու սրտախոսիկ հրավերին մեջ,— թող ան երևան գար, նույնիսկ այն երևակայական հետևանքներուն,— կամայեմ ըսելու եղերական,— որոնց դեմ արիական կեցվածք մը կակնվալվի կուսակցական գաղափարաբանությամբ կամ գաղափարապաշտությամբ զինված հերոսներու կողմեն։ Իսկ մենք հարյուր առ հարյուր վստահ էինք և ենք, որ Հայրապետին այս հրավերները անխարդախ սիրո մը և աներկյուղ համոզումի մը անկասկածելի վկայությունն ունեին միայն։ Այդ կերպով, և պատմական սքանչելի դրվագով մը, պիտի իրականանար եկեղեցվո վտանգված միությունը և պիտի զորանար ու ամրապնդեր օրիստոնեական հավատքի կապը մեր Միածնահիմն եկեղեցիի բոլոր զավակներուն մեջ։ Պիտի ցնդեր նախապաշարումներու հետզհետե թանձրացող մշուշը։ Կուսակցական խորշակը այլևս պիտի չկրնար շնչել ու խարշատել եկեղեցվո զուտ կրոնական ոգին՝ մեր հայրերու շունչով և Լուսավորչի մշտավառով անշեջ բոց առած։ Պիտի տապալեր ոտքի պատվանդան մը և խորտակվեր կռվան մը՝ անչառողական ձեռնարկը իր նպատակին հասցրնելու։

Մենք պիտի կրնայինք հրատարակել նաև մեր երեք գրությունները՝ անձնական և մտերմական, ուղղված անոր՝ որ արժանի տիտղոսը չէ գտեր անոնց վրա և կարդացեր է միայն «առ ի ճեռամբ»։ և մանավանդ տեսեր է անոնց մեջ «անճշտություններ, վիրագրումներ» և... «գրգռություններ»։ Ա՞ռդյոք մեր եղբայրական թելադրություններ՝ նկատած է «գրգռություններ», այս երկու բառերը շփոթելով իրարու հետ։

Դարձյալ իրեն հետ տեսակցողի մը հարցումին, թե «Ինչ պատասխանեցի՞ք Գարեգին պատրիարքին», պատասխաներ է. «Մենք մեր պատասխանելը ճանաչեցինք Տ. Զարեհ եպիսկոպոսին...»։ Պատասխանին հեղնական ձևը չէ, որ կվրդովե մեր հոգին, այլ այն մտածումը, թե Տ. Զարեհ եպիսկոպոս մեռած է (գոնե բառոյապես) կաթողիկոսի տիտղոսով շքավորված նույն Տ. Զարեհ եպիսկոպոսին մեջ, որ չի գիտեր, թե այդ տիտղոսը չի շնչեր, ոչ միայն եպիսկոպոսական, այլ նաև քահանայական օծումն ու աստիճանը։ Թողունք, որ իր վրա կատարված կաթողիկոսական օծումն ալ չի կրեր դժբախտաբար կնիքը օրինավորության։ Եվ գիտնալու էր գոնե, թե կաթողիկոս մը կկոչվի նաև եպիսկոպոսապետ և քահանայապետ. և երբ պատարագե՝ կմերկանա և՛ եպիսկոպոսական. և՛ կաթողիկոսական զգեստավորումեն և որպես պարզ քահանա կկատարե սուրբ պատարագի խորհուրդը։ Յամենայն դեպս, Շնորհալի մը այս վերաբերումը չէ ունեցած իր «ժպիրհ» հակառակորդին հանդեպ նույնիսկ, առանց նկատի առնելու անոր լոկ քահանայական աստիճանը։ Եվ երևակայել, որ այս Աթոռը երբեմն կփորձվի արժեքավորել պիտակաբար՝ կոչելով դայն «Շնորհալիի Աթոռ»։

Փակագիծ մը ևս, և վերջացնենք։

Վաղեմի և շատ սիրելի ու մտերիմ բարեկամ մը,— բարեկամ նաև անոր, որ «կաթողիկոսական տիտղոսներուն և եկեղեցական կանոններուն անձանոթ մը» կարծել կեղծած է վերոհիշյալ նամակները ստորագրողը,— որուն հետ, այս խնդրին շուրջ, ունեցեր ենք բազում թղթակցություններ, ինձ կգրեր իր վերջին նամակներեն մեկուն մեջ բառ առ բառ. «Անթիլիասի մեջ Կիլիկիո եպիսկոպոսները ժողով կունենան և կհանգին ան եզրակացության, թե ՊԵՏՔ է ԸՆԴՈՒՆԻՆ ԿԱՀԻՐԵԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (մեծագրությունները մերն են—Գ. Պ.). ուրեմն ընդունելով կստորագրեն Էջմիածնի Վեհին ուղղված թուղթը։ Փառեն սրբազան, երբ կտեսնե, որ առանց զայմազալի գործը վերջացած է, ետ կառնե իր ստորագրությունը, որուն կհետևի Դերենիկը։ Խորհրդածություն ու մեկնությունը կթողունք ընթերցողի սրամտության և ողջադատության...։

Մենք ակամա կամքով տուն տվինք մեր գրչին սույն տխուր անդրադարձումները, վրշտահար սրտով տեսնելով անգուսպ և անկշիռ քայլերը՝ ճշմարտաղանցությանց մեջ թարթափող ու խարխափող միտքերու կողմե առնված։ Զուսինք միամտությունը, թե անոնք կարող են ետ քաշել տալ այդ քայլերը հոգևոր մարզին մեջ անպատասխանատու անձերուն. բայց մեծ է իղձը մեր սրտին, որ գոնե բուն պատասխանատուն և իր եկեղեցական մեծ ու փոքր գործակիցները աստվածային շնորհն ու իմաստությունը ունենան՝ արիական ցնցումով մը գտնելու ավետարանական լայնը հանող «նեղ ճամբան» և հոն մտնելու։ Այդ ճամբան միայն կարող է հասցնել փրկարար ճշմարտության։ Գ. Պ.

Այս գրությունը վերջացուցեր էինք արդեն, երբ մեր ձեռքն անցավ «Այգ»-ի հոկտեմբեր 29-ի թիվը, որուն մեջ «նոր դարագլխի մը մասին» հոդված մը ստորագրած էր պր. Մանասեն Կ. Սևակ։ Այնտեղ կփառաբանվի այս «ազգի դարագլուխը» բացող փիմաստուն և ուրախ որոշումը՝ Ամերիկահայ ԱԶԳԱՅԻՆ (կթվի, թե չէ այն եկեղեցական. հետևաբար կապ չի կրնար ունենալ Հայաստանյայց Եկեղեցվո հետ) բիմի և Մեծի Տանն Կիլիկիո նորին Ս. Օծություն Տ. Տ. Զարեհ Ա կաթողիկոսին կողմե տրված»։

«Իմաստունները իմաստությունը կորսնցնող» գերագույն Իմաստությունը կա։ Ան միայն գիտե ժամանակը դարագլուխներ բանալու, ոչ թե հակառակության համար, այլ բանավոր համաձայնության ոգեմիտ ոգիով, ոչ թե ամբարտավանությամբ, այլ խոնարհամտությամբ։ Այս պարտի ըլլալ հիմը փիմաստուն և դրական որոշում»-ին։ Դարագլուխ մը անդրադարձ աշխատանքի, ինքնամփոփման, ԱՊԱՇԽԱՐԱՆՔԻ (մենք խոշորագրած ենք— Գ. Պ.) և նվիրումի՝ կրացվի միայն ու միայն ա՛յս ոգիով։ Այս ոգիով և սրտագին իղձով քանիցս հրավեր կարդացվեցավ բայց լստնվեցավ ականջ մը, որ լսեր։ Ակնարկված «պատմական խայլ» ուրիշ բան ունի արձանագրելիք Հայաստանյայց Եկեղեցվո պատմության մեջ։ «Ապաշխարանք» մը անկարելի է, արդարև, անոր կամ անոնց կողմե, որ իմաստություն չեն ունենար մոտենալու այդ ոգիին։

Գ. Պ.

(«ՇՈՂԱԿԱԹ», պաշտոնաթերթ Ս. Խաչ Դպրեվանքի Պատրիարքության նայող Թուրքիա, 1957 թ. հոկտեմբեր—նոյեմբեր, № 10—11)

ՔԱՐՈԶ

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

(Վերատեսուչ Հոգևոր Ժեմարանի)

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ

(Խոսված Մայր Տաճարում, ուրբաթ, փետրվարի 28-ի երեկոյան, Մեծ պաճոց առաջին հսկումի ժամանակ և ձայնասփռված Երևանի ռադիոկայանից շաբաթ, փետրվարի 29-ի գիշերը):

«Ծանուն Հոր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»։

«Ցամաքեալն ժամ աղօթս արարէք... Զի խախատուութիւնն Քրիստոսի ճաստատեսցի ի սիրտս ձեր»։

(ԿՈՂՈՍ. Գ 15)

Սարունակ աղոթեցեք, որպեսզի Քրիստոսի խաղաղությունը հաստատվի ձեր սրտերուն մեջ։

Քառասնորդական պահոց և ապաշխարության խորհրդավոր և տրտմալից օրեր են, որոնք իրենց խորհուրդով կխոսին հավատացյալներու սիրտին և հոգիին։

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին Մեծ պահոց, ապաշխարության և աղոթքի շրջանի մեջ է։

Եվ ահա աղոթքի, հսկումի, ապաշխարության այս օրերուն մեջ, մեր Եկեղեցին կհրավիրե իր հավատացյալները Մեծ պահոց խորհուրդով ապրելու և ներընչվելու, որպեսզի, առաքյալի ըսածին պես, աղոթքի միջոցով, աղոթքի թևերով, Քրիստոսի խաղաղությունը հաստատվի մեր սիրտերուն մեջ, մեր ընտանիքներուն մեջ, աշխարհի ժողովուրդներու մեծ ընտանիքին մեջ, որովհետև խաղաղության մեջ է, որ կծաղկի կյանքը և կհասունանան ու կրարգավաճին բոլոր բարի գործերը։

Եկեղեցին դարերե ի վեր կավետարանե մարդկության՝ «Խաղաղություն արարէք ընդ միմեանսդ։ Այս ձայնը սակայն հաճախ չի լսվիր դժբախտաբար, և այդ պատճառով մարդոց մեջ կտկարանա սիրը, գթության և ներողամտության զգացումը, կթուլնա միության և իրարհասկացողության ոգին. և ասոր արդյունքը. աշխարհը կդառնա Բաբելոն մը, ուր ամեն ոք իրարու դեմ սուր կվերցնե, մոռնալով Քրիստոսի պատվերը որ կըսե. «Ով սուր կվերցնե, սուրով ալ կիյնա»։ Մոռնա՞նք Ավետարանի այս պատգամը. երբե՛ք։ Ընդհակառակը, աղոթքով զորացնենք մեր հոգին և այն դարձնենք հաստատուն թումբ մը բոլոր տեսակի չարիքներուն դեմ, մինչև որ տեսական խաղաղությունը հաստատվի թե՛ երկրի վրա և թե՛ յուրաքանչյուր

մարդու հոգին ներսը։ Մեր աղոթքները պետք է զորացնեն նաև մեր գործելու հավատքը և բարի կամքը, այսինքն՝ մեր հավատքին միացնենք նաև մեր գործունեությունը, վասնզի «հաւատք առանց գործոց մեռեալ են», կըսե առաքյալը։

Հավատացյալ ժողովո՛ւրդ հայոց. ահա այսպիսի հավատքով, այսպիսի կամքով է, որ այս սրբազան կամարներուն տակ աղոթեց մեր հոգիներու լուսավորիչը, և Քրիստոս նորին մարմին առավ այս հոգին վրա, հատկապես հայ ժողովուրդի համար, մեզի պարգևելով այս սրբազան կոթողը՝ Ս. Էջմիածինը։ Գործի վերածված աղոթքով էր, որ մեր մեծ հայրապետները, Ներսեսներն ու Սահակները, Մեսրոպ և իր աշակերտներն ու անոնց հաջորդները, դարերու փոթորիկներեն անվտանգ առաջնորդեցին Հայ Եկեղեցվո նավը։ Նարեկացին իր ճենճերող հոգին բուրվառը դարձուց աստվածային սիրո և խաղաղության, և անոր գուլա՜-գուլա՜ բարձրացող մուխին մեջեն տվավ մեզի իր սքանչելի աղոթագիրք մատյանը՝ Նարեկը։ Շնորհալին նույն հոգիով երգեց իր հոգևոր երգերը, որոնք այսօր գոհար զարդն են մեր շարակնոցին։ Երկար, շա՜տ երկար է ցանկը տեսական խաղաղության և ստեղծագործության համար տքնող ու մաքառող հոգիներու։

Այսօր մանավանդ, ավելի քան երբեք, մարդկությունը ընդհանրապես, և հայ ժողովուրդը մասնավորապես, պետք ունին խաղաղության։ «Պտուղ արդարութեան խաղաղութեամբ սերմանի այնոցիկ, որք առնեն զխաղաղութիւն» (Յակ. Գ 8)։ Այս գաղափարներու լույսին տակ, Վեհափառ Հայրապետը Ս. Մենդյան Իր պատգամին մեջ գեղեցկորեն կգրեր. «Մեր Ս. Եկեղեցին և ամբողջ հայ ժողովուրդը կուզեն խաղաղ ապրիլ, որպեսզի շինեն և ստեղծագործեն մեր մեծ Հայրենիքի և ամբողջ աշխարհի խաղաղասեր ու մարդասեր ազգերու կողքին։

Հայաստանյայց Եկեղեցին և հայ ժողովուրդը, արտասահմանի մեջ մանավանդ, կարիքն ունին խաղաղ կյանքի և ներդաշնակ, շինարար աշխատանքի։ Խաղաղության մեջ է, որ պիտի աճի ու զարգանա հայ ժողովուրդը, և հայ ժողովուրդի խաղաղ կյանքի մեջեն է, որ պիտի ծաղկի ու պտղաբերի Հայաստանյայց Եկեղեցվո սուրբ գործը։ Սփյուռքի մեջ, այսօրվան անխաղաղ վիճակը մեր սիրելի ժողովուրդին, մանավանդ հոգևոր մարզի մեջ, դժբախտաբար հեռու է մխիթարական ըլլալե։ Ժամանակավոր ալեկոծությունի մեջ է կարծես Հայաստանյայց Ս. Եկեղեցին և այդ պարագան խորունկ վիշտ պատճառած է թե՛ մեր ժողովուրդին և թե՛ մեր սիրեցյալ Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն Կաթողիկոսին, որուն հոգին կուլա ի լուր Իր զավակաց ցրված վիճակին և անոնց հոգեկան տագնապներուն։ «Գոնե,— կըսե Ազգիս աստվածարյալ Հայրապետը՝ Իր խոսքն ուղղելով բովանդակ հայության,— Եկեղեցվո կամարներուն տակ, հոգևոր կյանքի շինության ճամբուն, մեկ կողմ դրեք ամեն կողմնակի նկատում կամ խմբակցական շահ։ Սիրով ճմլեցե՛ք հայու սիրտը ձեր և հաղթահարեցե՛ք քենի ու ատելության դավադիր ոգին»։

Վեհափառ Հայրապետի խաղաղասիրական ու հաշտարար ձայնը շարունակ հնչած է այս սուրբ բարձունքեն, Իր կոնդակներուն և քարոզներուն միջոցով, հայ հավատացյալ հոտին և անոր ղեկավարներուն, որպեսզի անոնք անսալով իրենց խղճմտանքի ձայնին, հեռու մնան ամեն պառակտումե և անջատումե, հավաքվին Հայ Եկեղեցվո հովանիին տակ, ի սեր Աստուծո և Ազգին, դառնալու համար մեկ հոտ և մեկ հովիվ։ Անտեսե՛լ այս կոչը և հրավերը՝ պիտի նշանակեր ընկերանալ շարին, առաջնորդել հայ հավատացյալ հոտը դեպի անխուսափելի կորուստ և նշավակ դառնալ դարերու խիստ դատաստանին։ Ի վերջո, մինչև ե՞րբ պիտի շարունակվի այս բոլորը։

Արդյո՞ք մեր ազգային-եկեղեցական կյանքի մեջ գոյություն ունեցող երկրորդական տարակարծություններ ավելի մեծ և բարձր են Հայ Եկեղեցվո և հայ ժողովուրդի դերագույն շահերեն։ Ժամանակն է, որ մեկ կողմ թողած արհեստական պառակտումներ ստեղծող բոլոր երկրորդական հարցերը, իրարհասկացողությամբ և ողջմտությամբ, արդար սրտով և մաքուր ձեռքերով գլուխ բերենք մեր ազգային-եկեղեցական միասնությունն ու միությունը, ի սեր Աստուծո և Ազգի, ինչպես

միշտ առաջարկած է մեր սիրելի Վեհափառ Հայրապետը։ Մենք այսօր ավելի շատ և ավելի խոր պատճառներ ունինք միությանը բաժանման և պառակտումի։ Մեր Եկեղեցվո և Ազգի գերագույն շահերը կպահանջեն, որ մենք՝ Եկեղեցի, ժողովուրդ-միանանք, որովհետև անմիաբանությունը բոլոր չարիքներու մայրն է։

Հավատացյալ ժողովո՛ւրդ հայոց, մեկ է Հայաստանյայց Եկեղեցին թե՛ իր նվիրապետությամբ և թե՛ իր դավանանքով, որպես միակ հոգևոր կեդրոն ունենալով Ս. Էջմիածինը, և մեկ է նաև քրիստոսասեր հոտը՝ հայ ժողովուրդը։ Ամեն բաժանում և պառակտում Հայ Եկեղեցվո մեջ՝ կտկարացնե անոր միությունը. ըստ ավետարանական պատգամին՝ «Թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր աւերիս»։ Ի՞նչ բանի մեջ պետք է փնտռել բաժանման առաջնորդող այս ոգին, եթե ոչ թյուր հասկացողության և կողմնակի նկատումներու, անցողական կիրքերու և մանավանդ Քրիստոսի խաղաղության և սիրո պակասին մեջ՝ մարդոց հոգիներեն ներս։

Այսօր, աղոթքի, հսկումի այս նվիրական պահուն, մեր բոլորիս աղոթքները այն պիտի ըլլան, որ Աստված վերադարձնե մեզի ժամանակավորապես մեզմե խլված Իր աստվածային խաղաղությունը, ի սեր Եկեղեցվո և հայ ժողովուրդի։

Մեր ամենուս սիրեցյալ Վեհափառ Հայրապետը Ս. Լուսավորչի Գահեն կոչ կընե բոլորիդ անխտիր՝ Գահոց առաջիկա որերը նվիրել աղոթքի և կենդանի գործի՝ վասն խաղաղության, վասն շինության և միաբանության Ս. Եկեղեցվույս և Ազգիս Հայոց։

Հայաստանյայց Եկեղեցվո հարազատ զավակնե՛ր, փնտռեցե՛ք ամեն տեղ նախ հոգեկան խաղաղությունը, քննեցե՛ք ձեր խմբտանքը և մաքուր սիրտով ու հոգիով բոլորվեցե՛ք ձեր հոգևոր կեդրոնին՝ Ս. Էջմիածնին շուրջը, որուն Իշխան Ս. Սեղանն է, որ կուգան ձեզի այս խոսքերը։

Անխախտ մնացե՛ք ձեր հավատքին ու սիրուն մեջ, և թող խաղաղության Աստվածը բնակի ձեր մեջ։ Ամեն։

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅՈՆ ՀԱՆԴԵՍԸ ՄԵՏՐ ԵՊՓՈՒՈՒՄ

Փետրվարի 13-ին, հինգշաբթի, «Տօն Սրբոց Վարդանանց զօրավարացն մեռոց հապար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին»:

Եղանակը գարնանային է, Վարդանանց պատերազմի օրվա նման։ Ջերմ արև և կապույտ երկինք։

Ժամը 11.30-ին Մայր Տաճարում սկըսվում է հանդիսավոր սուրբ պատարագը, նվիրված հայ հավատի և Հայրենիքի անձնուրաց մարտիկների և նահատակների խընկելի հիշատակին։

Պատարագում է Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը։ Մայր Տաճարում աղոթում է հավատացյալների բազմությունը։

Ժամը 12-ին, եկեղեցական թափորով և պանդերի ավետավոր հնչյունների տակ, Մայր Տաճար է իջնում Վեհափառ Հայրապետը։

Հոգևոր Ճեմարանի երգեցիկ խումբը ոգևորյալ ներդաշնակությամբ երգում է սուրբ պատարագը, ղեկավարությամբ բարեշնորհ Խորեն սարկավագ Պալյանի։

«Հայր մերս-ից առաջ Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ կատարվում է Հոգեհանգիստ «վասն համօրեն ննջեցելոց», որոնք ընկան մարտի դաշտում, «վասն Հիսուսի և վասն Հայրենեաց»։

Հանդիսավոր սուրբ պատարագի վերջում, իջման Ս. Սեղանի առաջ, կատարվում է Հայրապետական մաղթանք՝ Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնի երջանիկ առիթով։ Պատարագիչ սրբազանը Հայրապետական մաղթանքից առաջ քարոզում է «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւնս բնաբանով։ Քարոզիչ սրբազանը հանգամանորեն ծանրանում է Վարդանանց և Ղևոնդյանց մեծ նահատակության պատմական նշանակության վրա, դեղեցիկ դասեր քաղելով հավատացյալների համար օրվա տոնի խորհրդից և սրտագին բարեմաղթություններ է անում Մայր Աթոռի հավերժության, Հայրենիքի պայծառության և Վեհափառ Հայրապետի թանկագին կենաց արևշատության համար։

Հայրապետական մաղթանքից հետո Մայր Տաճարում Վեհափառ Հայրապետն ընդունում է բազմաթիվ շնորհավորություններ Իր անվանակոչության տոնի ուրախ առիթով։

Այնուհետև Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է Մատկյա դահլիճը և բազմելով Հայրապետական Գահի վրա, ընդունում է Գերագույն Հոգևոր Խորհրդի, միաբանության, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմի և վանքի պաշտոնեության շնորհավորությունները։ Բոլոր ներկաների զգացմունքների թարգմանն է հանդիսանում գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանն իր շնորհավորական խոսքերով։

Վերջում Վեհափառ Հայրապետը, խորապես զգացված Իր անվանակոչության տոնի առթիվ արտահայտված ջերմ խոսքերից, շնորհակալություն է հայտնում այդ բոլորի համար և մի անգամ ևս ոգեկոչում է պայ-

ծառ հիշատակը Ս. Ղևոնդյանց և Վարդանանց քաջամարտիկ նահատակների, և նրանց ոգով ու հավատով օրհնում է Հայաստանյայց Եկեղեցին, Հայրենիքն ու ժողովուրդը։

❖❖❖

Ժամը 3-ին, Վեհարանում, Գերագույն Հոգևոր Խորհուրդը կազմակերպել էր ընդունելություն ի պատիվ Վեհափառ Հայրապետի։

Ընդունելության ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, Ճեմարանի տեսչական ու դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը և հրավիրյալներ։

Սեղանը բացվեց Վեհափառ Հայրապետի Տերունական աղոթքով։

Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնը շնորհավորեցին պրոֆ. Ա. Առաքելյանը՝ հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի, պր. Ե. Ալեքսանյանը՝ հանուն Վերստուգիչ հանձնաժողովի, դասախոս պր. Հ. Հարությունյանը՝ ի դիմաց Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմի, պր. Ա. Գալիկյանը՝ վանքի պաշտոնեության անունից, բարեշնորհ Սարգիս սարկավագ Սարգսյանը՝ Մայր Աթոռի սարկավագների կողմից, Արարատյան թեմի Հայրապետական ներկայացուցիչ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանը՝ հանուն իր թեմի հոգևորականության և օծակից վարդապետ եղբայրների։

Բարեշնորհ Խորեն, Սարգիս, Պետրոս, Հակոբ և Ծիրայր սարկավագները, Վարդանանց հիշատակին նվիրված իրենց երգերով և արտասանություններով, սեղանների շուրջը ստեղծեցին հայրենասիրական խանդավառ մթնոլորտ։

Վերջում Վեհափառ Հայրապետը նորից շնորհակալություն հայտնելով իր անվանակոչության տոնի առթիվ հայտնված ջերմ խոսքերի և բարեմաղթությունների համար, սեղանը փակեց խմբովին երգված «Հայր մեր»-ով և «Պահպանիչ»-ով։

❖❖❖

Երեկոյան ժամը 7-ին, Տյառնընդառաջի նախատոնակից հետո, Մայր Տաճարից վառված մոմերով և թափորով Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց սրահը՝ նախագահելու համար Վարդանանց հիշատակին նվիրված գրական-գեղարվեստական երեկույթին։

Նախագահության սեղանի շուրջ տեղ էին գրավել Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները և Հոգևոր Ճեմարանի վերատեսուչը։

Ս. Ղևոնդյանց և Ս. Վարդանանց հիշատակին նվիրված գրական-գեղարվեստական երեկույթի բացումը կատարեց Հոգևոր Ճեմարանի փոխ-տեսուչ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը՝ ձեռնարկից ելնելով։

Ճեմարանի երգչախումբը, դիկավարությամբ երաժշտության ուսուցիչ պր. Մ. Շառաթյանի, փայլուն հաջողությամբ կատարեց մի շարք քառաձայն շարականներ և երգեր՝ «Խորհրդաշ պսակաւոր», «Թէ Հայրենեաց պսակադիր», «Բա՜մ, փորոտան», «Իմ Հայրենեաց հոգի Վարդան», Խորեն սարկավագ Պալյանը հուզումով մեներգեց «Վռնց Ամպերը...», Սարգիս սարկավագ Սարգսյանը և Բ դասարանի ուսանող Արամայիս Սահակյանը արտասանեցին առաջինը՝ Վահան Թեքեյանի «Խորհուրդ Վարդանանց»-ը, երկրորդը՝ Նաիրի Զարյանի «Ցայն Հայրենական»-ը։ Վարդանին նվիրված հատվածը, հղիշեից գրաբար լեզվով «Տիկնայք փափկասունք»-ը կարդաց Ծիրայր սարկավագը, իսկ Գ դասարանի ուսանող Տիգրան Ուլուբյանը հանդես եկավ Վարդանանց հիշատակին նվիրված հետևյալ շարադրությամբ.

«Այսօր ողջ հայությունը տոնում է իր ազգային մեծագույն տոներից մեկը՝ Վարդանանց սրբազան տոնը։ Չկա մի հայ, որ խորին երկյուղածությամբ և անհուն երախտագիտությամբ ու հպարտությամբ շարտասանի Մեծն Վարդանի և նրա զինակիցների մեր պատմությամբ իսկ նվիրագործված անմահ անունները։

Հայրենիքը սրբազան հասկացողություն է հայ ժողովրդի համար։ Հայրենիք բառը խորհրդանշում է այն բոլորը, ինչ ձեռք են բերել մեր պապերը իրենց դարերի քրտնաջան աշխատանքով՝ հանուն իրենց ժողովրդի և ապագա սերունդների գոյատևման իրավունքի։ Մեր ժողովուրդը թեև փոքր է թվով, բայց մեծ է իր պատմությամբ և մշակույթով։ Դարեր շարունակ Հայաստանը կովախնձոր է եղել բռնակալ պետությունների միջև։ Բայց նրանց ճնշման քաղաքականությունը միշտ էլ դեմ է առել հայ ժողովրդի համառ և հերոսական դիմադրության։ Հայ ժողովրդի պայքարը ամեն ժամանակ պայմանավորված է եղել ինքնապաշտպանության անկապտելի իրավունքով։ Նա կռվել է միշտ՝ իր ապրելու իրավունքի համար։

Ծանոթանալով մեր ժողովրդի հերոսական պայքարի պատմության, մենք օրինական հպարտությամբ ենք լցվում մեր Հայրենիքի նկատմամբ։ Օտարերկրյա բռնակալության դեմ հայ ժողովրդի մղած պայքարի պատ-

մության հերոսական էջերից մեկն է 451 թվականի Վարդանանց պատերազմը։

Պարսկական արքունիքը ցանկանում էր հարկադրել հայերին՝ ընդունելու մազդեզական կրոնը։ Այստեղ իր ամբողջ ուժով ծառացավ Հայ Եկեղեցին՝ հայ ժողովրդի խղճի և ազգային արժանապատվության ամրոցը։ Հայ հոգևորականությունը ակտիվ մասնակցություն ցուցաբերեց այս կռվում։

Երբ խնդիրը հասավ դավանափոխության, հայ ժողովրդի կուտակված զայրույթը պոռթկաց։ Ե՛վ ռամիկը, և՛ իշխանը, և՛ հոգևորականը միասնաբար դուրս խոյացան իրենց խրճիթներից, ապարանքներից և աղոթատներից՝ պաշտպանելու համար համառ մարտերում իրենց նախնիքների արյունով սրբագործված միասնական Հայրենի հողը և սուրբ հավատը։

Հայ ժողովրդի կյանքում Հայրենիքի սերը, Եկեղեցու հավատը դարերի ու հազարամյակների ընթացքում ամրացած ամենախոր զգացմունքներից մեկն է եղել։ Պարսկական բռնակալության և արհավիրքի դեմ Հայրենիքի սերը շաղախեց հայ ժողովրդի բոլոր հասարակական շերտավորումները անքակտելի և միաձույլ դաշինքով։ Նրանք մեկ ցանկություն միայն ունեին՝ փրկել հայ ժողովրդին ու քրիստոնեական կրոնը։

Ավարայրի ահեղ ճակատամարտում ընկան հայ անձնվեր մարտիկները իրենց առաջնորդների հետ։ Նրանք մեռան, բայց չկորան։ Միշտ վառ մնաց նրանց ոգին ապագա հայ սերունդների հոգում։

Վարդանանց անմահ ոգին առաջիկայում մեզ ոգեշնչեց՝ հանուն մեր ժողովրդի ազատության մղած մարտերում։

Բյուր օրհնությո՛ւն Ս. Ղևոնդյանց և Ս. Վարդանանց հերոսների ու նահատակների խնկելի հիշատակին։

Օրվա գլխավոր բանախոսն էր Հոգևոր ճեմարանի դասախոս և «Էջմիածին» ամսագրի խմբագիր պր. Արքուն Հատիսյանը, որն իր խոսքի մեջ ծանրացավ Վարդանանց պատերազմի ազգային և միջազգային պատմական նշանակության վրա, այն բնութագրելով նախ որպես հայ ժողովրդի կրոնա-ազգային և քաղաքական իրավունքների պաշտպանության պատերազմ, ինչպես նաև քրիստոնեության պաշտպանության պատերազմ Արևելքում, մազդեզական կրոնի հեղեղի դեմ։

Վարդանանց հիշատակին նվիրված երեկոյում փակման խոսքն ասաց Վեհափառ Հայրապետը։ Նա ծանրացավ այն գեղեցիկ մտքի վրա, որ հայ ժողովրդի պատմությունը իր հերոսական դրվագներով ուրիշ բան չէ, եթե ոչ մեր ժողովրդի նյութապես, հոգեպես, իմացապես շինելու և շինածը արյունով պաշտպանելու պատմություն։ Պատմության մեջ ապրել և տևել են միայն այն ժողովուրդները, որոնք իմացել են շինել ու մնայուն արժեքներ ստեղծել, և այդ բոլորը պահել ու պաշտպանել հերոսաբար։ Վեհափառ Հայրապետն Իր մտքը պարզեց Վարդանանց հերոսամարտի պատմության օրինակով։ Այսպես, 451 թվականին, Վարդանն Արևելքում Հազկերտի հափշտակիչ քաղաքականության դեմ կռվում էր՝ պաշտպանելով հայ ժողովրդի դարերով շինած բարիքները՝ Հայրենիք, քրիստոնեական հավատ, եկեղեցի, լեզու, Աստվածաշնչի թարգմանություն։

Վարդանանց հիշատակին նվիրված հանդեսը վերջացավ Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով։

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑՑՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՒՂՆՈՒ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ՎԱՆՔԻՆ

Նորին Ս. Օծութիւն Վեհափառ Հայրապետը փետրվարի 17-ին մեկնեց Աշտարակի շրջանը՝ Մուղնու Ս. Գևորգ վանքը այցելելու համար։ Նորին Վեհափառությանն ընկերակցում էին Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանը և դավազանակիր հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը։

Էջմիածնից դեպի Մուղնու Ս. Գևորգ վանքը տանող ճանապարհը անցնում է Օշականի և Աշտարակի միջով։ Առաջին անգամ ինքնաշարժը կանգ է առնում Օշականում։ Վեհափառ Հայրապետը ուխտի է եկել Ս. Մեսրոպի, մեծ Օշականցու, հայ ժողովրդի ամենապանծալի դավակի շիրմին։ Եկեղեցու դռները բացվում են, երկյուղածությամբ ներս է մտնում Վեհափառ Հայրապետը։ Մինչ այդ, ժողովրդի բազմությունը սկսում է արագորեն հավաքվել ու խտանալ եկեղեցու մեջ։ Վեհափառ Հայրապետը իջնում է Մեծ Վարդապետի շիրիմը տանող սանդուղքներով և իր հայրապետական երախտագետ համբույրը դրոշմում մարմարյա շիրմաքարի վրա։ Նույնն են անում Նորին Վեհափառության ընկերակցող հոգևոր հայրերը։ Ո՞վ գիտի ինչպիսի՞ խորունկ խոկումներ ու մտորումներ էր ապրում այդ պահին Վեհափառ Հայրապետը, բայց և այնպես պարզ էր այսքանը, որ այդ մեծ Սուրբի և հանճարեղ վարդապետի համար փոքր ու անշուք էր այդ գերեզմանը։ և Ն.ա. Վեհափառն վրա իսկ հայտնեց իր հիանալի ծրագրի մասին, այդ պատմական շիրիմը արժանի շուքի և վեհության մեջ պահելու համար։ Դուրս գալիս Նորին Ս. Օծությունն Իր առաջ գտավ հավատացյալների ստվար բազմությունն։ Վեհափառ Հայրապետի հայրական և անմիջական մի քանի հարցերին ներկաները սրտի անհուն գոհունակությամբ պատասխանեցին և ապա սկսեցին համբուրել Նրա Ս. Աջը։

Ս. Մեսրոպի համբուրելի շիրմից և օշականցիներից հրաժեշտ առնելուց հետո, Նորին Վեհափառությունը մեկնեց Մուղնի, ժողովրդական խանդավառ ցույցերի մեջ։ Ինքնաշարժն անցավ Աշտարակի միջով։ Տեղի եկեղեցու այցելությունը հետաձգվեց վերադարձին։ Աշտարակից ոչ հեռու, գովասուն և գեղեցիկ բարձրության վրա, ծերադիր աղոթող հայ վանականի նման խորհրդով ու վեհությամբ օծուն, երևում է Մուղնու Ս. Գևորգ վանքը։ Ինքնաշարժը կանգ է առնում վանքի բակում, Վեհափառ Հայրապետն Իր շքախմբով ուղևորվում է դեպի վանք։ Հայ շինականները ամեն կողմից ուրախ ու հրճվալից ժպիտով շրջապատում են Վեհափառ Հայրապետին։ Ջնայած այն բանի, որ նրանց ոչինչ չէր հայտնված Վեհափառ Հայրապետի այցելության մասին, այդ փոքրիկ գյուղի բնակիչ-

[illegible]

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕՇԱԿԱՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՇՏԱՐԱԿԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋ

ները ստվար բազմություն կազմեցին և վանքը լցվեց հավատացյալներով։

Վեհափառ Հայրապետը, հանդամանորեն ծանոթանալուց հետո վանքի ճարտարապետական առանձնահատկություններին, ճարտար և գեղեցիկ ագուցումներին և կառույցների վեհության ու վանքի ընդհանուր վիճակին, հավաքված հավատացյալներին դառնալով տվեց Իր հայրական օրհնություններն ու Ս. Էջմիածնի ողջույնները, հորդորելով վառ ռության համար՝ պատրաստված էր քոլորովին պատահաբար։ Ցնայած, որ աշտարակցիք ևս նախապես չգիտեին Վեհափառ Հայրապետի այցելության մասին, քանի որ այդ այցելությունը ձեռնարկված էր Մուղնու Ս. Գևորգ վանքը տեսնելու համար, բայց բավական էր եղած, որ Աշտարակից անցնելիս նկատվել էր Վեհափառ Հայրապետի ինքնաշարժը, որպեսզի այսքան հավատացյալներ հավաքվեին եկեղեցում։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄՈՒՂՆՈՒ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋ

ու կենդանի պահել հայ հավատը իրենց սրբտերում և միշտ հավատարիմ մնալ մեր հնամյա ավանդներին և սրբություններին։ Վեհափառ Հայրապետի խոսքը հաճախ ընդմիջվում էր ափառավորվե՞սս, ձերջանի՞կ մնասս, ձերկա՞ր ապրեսս բարեմաղթություններով։ Այս անակնկալ և սրտառուչ այցը Մուղնու Ս. Գևորդ հրաշալի վանքին և հանդիպումը հավատացյալների հետ վերջանում է աջահամբույրով և հուզիչ հրաժեշտով։

Վերադարձին, Աշտարակի զառիվայրը իջնելիս, ինքնաշարժի միջից տեսանելի էր Աշտարակի Ս. Աստվածածին եկեղեցին և բակում հավաքված ահագին բազմությունը։ Խանդավառ ծափահարությունների տակ ինքնաշարժը կանգ է առնում եկեղեցու բակում։ Այս գեղեցիկ անակնկալը Նորին Վեհափառությունը մտնում է եկեղեցի, մատուցում Իր սուրբ աղոթքը։ Հանում հավատացյալների, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանը ողջունում է Վեհափառ Հայրապետի անակնկալ, բայց խորապես հուզիչ այցելությունը, արտահայտելով հավատացյալների խորին հույզերն ու զգացումները՝ Հայ եկեղեցու, Ս. Էջմիածնի և Վեհափառ Հայրապետի նկատմամբ, բարեմաղթում Նորին Ս. Օծության երկար և արևաշատ կյանք՝ ի շինություն Հայ Եկեղեցու և ի մխիթարություն հայ հավատացյալների։

Ապա ողջույնի իր հուզիչ խոսքն է ասում Աշտարակի եկեղեցու քահանա, արժանապատիվ Տ. Գևորգ Փափազյանը։

Այնուհետև Իր հայրապետական օրհնություններն ու շերմագին ողջույնները հաղորդելով ներկա հավատացյալ բազմությանը, Վեհափառ Հայրապետն Իր խոսքի մեջ սրտագին գոհունակություն հայտնեց այս անակնալ, սակայն հուզումնալից ընդունելության համար։ Նորին Վեհափառությունը միաժամանակ հորդորեց բոլոր ներկաներին՝ հաստատուն մնալ իրենց պապերի հավատի վրա, հավատարիմ մնալ ազգային ավանդություններին ու սովորություններին և իրենց անձնվեր ու շինարար աշխատանքով սատարել Մայր Հայրենիքի վերելքին և մեր ժողովրդի բարօրության մեծ գործին։ Իր խոսքի վերջում, Նորին Ս. Օծությունը լավագույն հաջողություններ մաղթեց նրանց և Իր օծյալ Ս. Աշով օրհնելով բոլորին, հրաժեշտ առավ աշտարակցիներից։ Մինչ այդ որոտացին ծափահարությունները, եղան լավագույն բարեմաղթություններ և օդի մեջ թափահարվեցին աղավնիների ձյունանման թևերը։

Ամենուրեք հայ մարդը գրանիտյա ամրությամբ պահում է և պահպանում իր անխառն հավատարմությունը դեպի Հայ Եկեղեցին. Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Ամենայն Հայոց Հայրապետությունը։ Թո՛ղ Աստված միշտ օգնական լինի այդ հավատարմության առավել խորացման և անսասանության։

Վեհափառ Հայրապետն Իր շքախմբով վերադարձավ Մայր Աթոռ երեկոյան ժամը 4-ին լավագույն տպավորություններով Իր այս ոչ պաշտոնական այցելությունից։

Թո՛ղ Աստված միշտ զորավիգ լինի մեր ժողովրդանվեր և հավատավոր սիրելի Վեհափառ Հայրապետին։

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԹԱԲՅԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻՄ

ՀՈՐՆՎԱՐԻ 30-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ հերթական դասախոսություն։ Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի դասախոս Ա. Ադամյանը բանախոսեց «Նյութը և նրա կառուցվածքը» հետաքրքիր թեմայի շուրջ։ Դասախոսությունը լսվեց մեծ գոհունակությամբ։ Հարգելի դասախոսը վերջում պատասխանեց թեմային վերաբերյալ ուսանողության մի շարք հարցերին։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՆ, ՇԱԲԱԹ, երեկոյան ժամը 7-ին Հոգևոր Ճեմարանում նշվեց արևմտահայ տաղանդավոր բանաստեղծ Պետրոս Դուրյանի մահվան 86-ամյակը։ Վաղամեռիկ բանաստեղծի կյանքի և գրական ստեղծագործության նվիրված խնամված ինքնագիր շարադրությամբ հանդես եկավ Բ լսարանի ուսանող բարեշնորհ Խորեն սարկավագ Պալյանը։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 2-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Հուսիկ աբեղա Սանթուրյանը, «Ոչխարք իմ ձայնի իմում լսեն և ես ճանաչեմ զնոսա» ընթերցանով։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 6-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանում դասախոս Ա. Ադամյանը կարդաց իր երկրորդ բանախոսությունը «Երկրի արհեստական արբանյակները» թեմայի շուրջ։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 8-ԻՆ, ՇԱԲԱԹ, Ս. Իսահակ Պարթև Հայրապետի տոնի օրը, Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը կազմակերպել էր ընդունելություն, որին բարեհաճեց ներկա լինել Վեհափառ Հայրապետը և շնորհավորել Մայր Աթոռի լուսարարապետի և Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետի անվանակոչության տոնը։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 9-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 10—17 ՕՐԵՐԻՆ, Ս. Վարդանանց տոնի և Բարեկենդանի առիթով, արձակուրդ տրվեց Հոգևոր Ճեմարանի ուսանողության։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 11-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, տոն «Սրբոց Ղևոնդեանց քահանայիցն»։ Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 13-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, տոն «Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոյ հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին»։

Ազգային մեծ տոնի առիթով այսօր փակ էին Մայր Աթոռի բոլոր հիմնարկները։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 14-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, «Տեառնընդառաջ»։ Մայր Տաճարում եպիսկոպոսական հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը և քարոզեց «Արդ, արձակեա զծառայս քո, Տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց» ընթերցանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 15-ԻՆ, ՇԱԲԱԹ, երեկոյան ժամերգության ընթացքում, վարձատրվեցին Մայր Տաճարի սուրբ տեղանները Մեծ պահոց նախօրյակին։

Երեկոյան ժամը 8-ին, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, Հոգե-

վոր Ճեմարանի թատերական խնքնագործ խմբակը հանդիսության սրահում ներկայացրեց Սմբատ Բյուրատի «Ավարայրի արծիվը» թատերգությունը, վերատեսուչ գեղարվեստական Տ. Հայկազուն սրբազանի ուսուցմամբ և բարեշնորհ Սարգիս սարկավագի թեհրուդյանի բեմադրությամբ։

Ներկայացման ներկա էին Մայր Աթոռի միաբանները, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը և բազմաթիվ հրավիրյալներ։

Ներկայացումը անցավ հաջող, արժանանալով բոլոր հանդիսականների ջերմ գնահատման և քաջալերանքին։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 16-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Բուն Բարեկենդան։ Մայր Տաճարում վարագուրված սուրբ սեղանի առաջ պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։ «Հայր մեր»-ից առաջ քարոզեց լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը Մեծ պահոց խորհրդի և նշանակության մասին։

Երեկոյան ժամը 7-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճեց սեղանակից լինել միաբանության և ուսանողության վանական սեղանին, Բարեկենդանի ուրախ առիթով։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 17-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Մայր Աթոռ ժամանեցին Ադրբեջանի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը և Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը, թեմական գործերով։

Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել Տ. Հայրիկ և Տ. Տիրայր վարդապետներին։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 18-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանում վերսկսվեցին դասավանդությունները Բարեկենդանի արձակուրդից հետո։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 19-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Տաճարում Հոգևոր Ճեմարանի ուսանողների մասնակցությամբ կատարվեց հանդիսավոր Արևագալի ժամերգություն, որին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Մեծ պահոց օրերին, երկուշաբթի և ուրբաթ, երեկոյան կատարվելու են հանդիսավոր հսկումի արարողություններ, իսկ չորեքշաբթի և ուրբաթ՝ առավոտյան ժամերգության վերջում՝ հանդիսավոր Արևագալի ժամերգություն։ Ամեն օր առավոտյան ժամը 11-ին կատարվելու է Ճաշու ժամերգություն, Մեծ պահոց հատուկ աղոթքներով և ընթերցումներով։

Մեծ պահոց օրերին կքարոզեն Մայր Աթոռի միաբան հայրերը, հոգեպես մխիթարելով հավատացյալներին։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 20-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանում իր երրորդ դասախոսությունը կարդաց պր. Ա. Ադամյանը՝ «Ատոմական էներգիան» թեմայի շուրջ։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 22-ԻՆ, ՇԱԲԱԹ, երեկոյան ժամերգության ժամանակ Մայր Տաճարում քարոզեց Ս. Հռիփսիմյանց վանքի վանահայր հոգեշնորհ Տ. Նահապետ վարդապետ Նահապետյանը՝ «Ողորմեա ինձ, Աստուած» սաղմոսի բնաբանով։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 23-ԻՆ, ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց Հոգևոր Ճեմարանի վերակացու արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարությանը։ «Հայր մեր»-ից առաջ քարոզեց Ադրբեջանի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը՝ «Եւ զխորհուրդն, զոր խորհիր, խափանէ Տէր, զի Աստուած ընդ մեզ է» բնաբանով։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 27-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանում իր վերջին դասախոսությունը կարդաց Ա. Ադամյանը՝ «Արհեստական արեգակ ստանալու մասին» թեմայի շուրջ։

Դասախոսության ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՓԵՏՐՎԱՐԻ 28-ԻՆ, ՈՒՐԲԱԹ երեկոյան, հանդիսավոր հսկումի արարողություն կատարվեց Վեհափառ Հայրապետի նախագահությամբ։ Քարոզեց Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը։ Սուրբ արարողությունը և քարոզը ձայնասփռվեցին Երևանի ռադիոկայանից շաբաթ, մարտի 1-ի գիշերը։



ԳԵՐԱՊԱՏԻՎ Տ. ՎԱՐԴԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆ

Հունվարի 28-ին լրացավ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Մայր Աթոռի երիցագույն միաբան գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոսի ծննդյան 80 և քահանայության 55-ամյակը։

Գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոսի ծննդյան 80-ամյակի և քահանայության 55-ամյակի առիթով, հունվարի 28-ին, երեքշաբթի երեկոյան, Վեհարանում տրվեց ճաշկերույթ, որտեղ հոբելյարին ջերմ խոսքերով շնորհավորեցին Վեհափառ Հայրապետը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները և միաբան հայրերը։

Վարդան սրբազանը ծնվել է 1878 թվականին Ջրաբերդի (այժմյան Մարտակերտի) Գյուլյաթաղ գյուղում նահապետական քահանայական ընտանիքում։ Նրա հայրը եղել է Տ. Հուսիկ քահանան, նույն շրջանում պաշտոնավարած։

Ահա այսպիսի ընտանիքում հասակ է առել և դաստիարակվել սրբազանը։ Նա մանկական տարիքից մեծ ձգտում է ունեցել հոգևորական դառնալու։

Սրբազանը իր նախնական կրթությունն ստացել է Կուսապատ գյուղի դպրոցում։

18 տարեկան հասակում ընդունվում է Շուշի քաղաքի Ղարաբաղի թեմական դպրոցը, միջնորդությամբ Մակար արքեպիսկոպոս Բարխուդարյանի։ Հաջողությամբ ավարտելով դպրոցի դասընթացը, նշանակվում է Ջանյաթաղ գյուղի դպրոցի ուսուցիչ։

1904 թվականի հոկտեմբերի 31-ին ձեռնադրվում է քահանա՝ Ղարաբաղի առաջնորդ Գրիգորիս արքեպիսկոպոս Գառնակերյանի ձեռամբ, և պաշտոնավարում Հյուսիսային Կովկասի Գրոզնի քաղաքում, միաժամանակ զբաղվելով նաև ուսուցչությամբ։

Տ. Վարդան քահանան գործուն մասնակցություն է բերում նաև հասարակական-օրենսիրական աշխատանքների կազմակերպմանը։ Գրոզնիում պաշտոնավարում է մինչև 1929 թվականը։

Այնուհետև Տ. Վարդան քահանան տեղափոխվում է Բաքու, ուր պաշտոնավարում է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում մինչև 1952 թվականի հունվարի 8-ը։ Սույն թվականին էր, որ որպես այրիացյալ քահանա, Ս. Էջմիածնում ձեռնադրվում է վարդապետ և նշանակվում Թբիլիսիի Հայոց Ս. Գևորգ եկեղեցու վանահայր։

1954 թվականին, երկարատև և ազնիվ աշխատանքների համար, երջանկահիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսից ստանում է ծայրագույն վարդապետության աստիճան և նշանակվում Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի առաջնորդ։ Այդ պաշտոնով որպես պատվիրակ մասնակցում է 1955 թվականի սեպտեմբերի 25-ին կայացած Ազգային-

եկեղեցական ժողովին, և նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի ընտրության առթիվ, նորընտիր Վեհափառ Հայրապետի բարեհաճ հրամանագրությամբ, հոկտեմբերի 6-ին արժանանում է եպիսկոպոսական աստիճանի։ Գնահատելով սրբազանի երկարամյա գործունեությունը և Հայ Ազգային Եկեղեցուն մատուցած ծառայությունը, Ազգային-եկեղեցական ժողովը նրան ընտրում է Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ։

1955 թվականին Վարդան սրբազանը, որպես Մայր Աթոռի պատգամավոր, մեկնեց Անթիլիաս՝ մասնակցելու համար Կիլիկիայի կաթողիկոսական ընտրության, և ապա Վեհափառ Հայրապետին ընկերացավ մինչև Եգիպտոս, որտեղ մասնակցեց 1956 թվականի մարտ ամսում կայացած Կահիրեի Եպիսկոպոսական ժողովին։

Այնուհետև, Վեհափառ Հայրապետի հանձնությամբ, Վարդան սրբազանը մասնակցեց 1956 թվականի ապրիլ ամսում Մոսկվայում կայացած համաշխարհային կրոնական խորհրդակցության՝ որպես ներկայացուցիչը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի։ Ապա սրբազանը անցավ Թբիլիսի՝ առաջնորդական պաշտոնի, մինչև 1957 թվականի փետրվար ամիսը, որից հետո՝ իր ծերության և առողջության պատճառներով կանչվեց Մայր Աթոռ և անցավ հանգստյան թոշակի։

Բայց գերաշնորհ Տ. Վարդան սրբազանը, չնայած իր առաջացյալ տարիքին, մասնակցում է միաբանական կյանքին և Գերագույն Հոգևոր Խորհրդի աշխատանքներին։

Գերապատիվ Տ. Վարդան եպիսկոպոսին յանկանում ենք խաղաղ ծերություն։

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՈՍԿՅԱ ԱԴԱՄԱՆԴԱԿՈՒՌ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԴՈԿՏՈՐ ԺՈԶԵ ԴԵ ԱԶԵՐԵԴՈ ՊԵՐԴԻԿԱՈՅԻՆ

Հյուսիսային Ամերիկայի հարց Կալիֆոռնիայի թեմի նորընտիր առաջնորդ գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Վարժապետյանը, Մայր Աթոռից դեպի իր թեմը ճանապարհի վրա, Վեհափառ Հայրապետի հրամանով, կանգ է առնում Պորտուգալիայի մայրաքաղաք Լիսաբոնում, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դի Ազերեդո Պերդիկաոյին պատուոնապես հանձնելու Ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի ոսկյա ադամանդակուռ շքանշանը։

Սրբազանը դեկտեմբերի 20-ին ժամանում է Լիսաբոն և օդանավակայանում դիմավորվում է պատշաճ հարգանքով՝ որպես Վեհափառ Հայրապետի լիազոր պատվիրակը՝ Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հարգանուն երեք անդամների կողմից, գլխավորությամբ պր. Ռոբերտ Կյուլպենկյանի։

Դեկտեմբեր 20-ի երեկոյան ժամը 6-ին Բարգեն սրբազանը այցելում է Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերդիկաոյին և հանդիսավոր իրադրության մեջ, հոտնկայս, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության անդամներից պր. Լ. Նալյանի, պր. Ռոբերտ Կյուլպենկյանի և հիմնարկության հայկական բաժնի քարտուղար պր. Կորյուն Քեչիշյանի ներկայությամբ, կարդում է Վեհափառ Հայրապետի նոյեմբեր 25 թվակիր սրբատառ կոնդակը և ապա շքանշանը կախում պր. նախագահի կոծքին, որը հարգանքով հետևում էր Վեհափառ Հայրապետի կոնդակի պորտուգալերեն թարգմանությանը։

Ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի շքանշանը

Ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի ոսկյա ադամանդակուռ շքանշանն ստանալուց հետո դոկտ. Ժոզեն զգացված բառերով իր խորին շնորհակալությունն է հայտնում Վեհափառ Հայրապետին՝ իրեն շնորհված այդ բացառիկ և մեծ պատվի համար և ավելացնում, որ «այս մեծ պատիվը կերթա

առավել լափով հանգուցյալ Մեծ Բարեբարին, ինչպես նաև Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության մյուս անդամներին և ի մասնավորի պր. Գեորգ Ծսայանին, որուն կպարտինք մեր հաշտությունը։

Այնուհետև դոկտ. Ժոզեն ընդունում է բոլոր ներկաների սրտագին շնորհավորությունները։

Դեկտեմբերի 21-ին դոկտ. Ժոզեն կազմակերպում է ընդունելություն ի պատիվ Վեհափառ Հայրապետի լիազոր պատվիրակ դերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոսի։

Հանուն Վեհափառ Հայրապետի և Ս. Ծրուսաղեմի ու Կոստանդնուպոլսի Պատրիարքական Աթոռների, դերաշնորհ Տ. Բարգեն Եպիսկոպոսը շնորհակալություն է հայտնում Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության պր. նախագահին և պատվարժան անդամներին՝ ձիրենց հայանպաստ և եկեղեցասեր գործին համար։

Այնուհետև Վեհափառ Հայրապետի լիազոր պատվիրակը ներկա է լինում Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության վարչության երկու նիստերին, որտեղ քննության է առնվում «Հայանպաստ գործի ընդհանուր ծրագիրը»։

Գերաշնորհ Տ. Բարգեն Եպիսկոպոսը դեկտեմբերի 23-ին, լավագույն տպավորություններով, հրաժեշտ է առնում Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության պր. նախագահից և վարչության հարգարժան անդամներից՝ շարունակելու համար իր ճանապարհը դեպի իր թեմը՝ Կալիֆոռնիա։

***

Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ոսկյա ադամանդակուռ շքանշանի քնական բարձրությունն է 6 սմ., իսկ լայնությունը՝ 4,5 սմ.։

Շքանշանը ամբողջությամբ ոսկեզույն է։ Հայրապետական թագի, կոնքեռի և ներքևի թվականի ֆոնները կարմիր (գրենադ) էմալ են, եմիփորոնը և արծվի թևերի ներքևի պատերը՝ կապույտ էմալ։ Հայրապետական թագի խաչը և ճակատի մասը ոսկեն շորսական ադամանդ, իսկ կոնքեռի վրա կա 5 ադամանդ։ Եմիփորոնի վրա գրված են Վեհափառ Հայրապետի անվան սկզբնատառերը՝ Վ. Ա.։

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԴՊՐԵՎԱՆՔԻ ՆՈՐԱԿԵՐՏ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

1957 թվականի հունիսի 23-ին, Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնի առթիվ, Կոստանդնուպոլսում, Թուրքիայի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանի նախագահությամբ, սուրբ պատարագից հետո, կատարվում է պաշտոնական բացումը Ս. Խաչ դպրեվանքի նորակերտ ուսումնարանի։

Ուսումնարանի բացման հանդիսություններին ներկա են լինում Ստամբուլի կուսակալը, կենտրոնական վարչության և այլ պաշտոնական մարմինների ներկայացուցիչներ, ժողովրդի հոծ բազմություն, դպրեվանքի դասախոսական կազմը և ուսանողություն։

Բացման պաշտոնական արարողության ժամանակ պատրիարք սրբազան հայրը արտասանում է բացման խոսք։ Գր. կուսակալն ևս Հանդես է գալիս կրթության մասին ոգևորյալ ճառով։

Նոր ուսումնարանը, դպրեվանքի նախկին շենքի արևելյան մասում, երբ հարկանի գեղեցիկ շենք է, «ժտված ուսումնարանի հատուկ բոլոր հարմարություններով։ Նոր ուսումնարանը ունի 18 ընդարձակ և լուսավոր սենյակներ, որոնցից ինը դասարաններ են, իսկ մյուս սենյակները բնակարաններն են վերատեսչի, փոխ-տեսչի, քարտուղարի, հսկիչի. կան նաև լաբորատորիայի և սրահի հատկացված բաժիններ։ Նոր ուսումնարանի վերնահարկում կա մի ընդարձակ սրահ բեմով, 400 հանդիսականի համար։

Հոկտեմբերի 12-ին, շաբաթ օր, Սրբոց Թարգմանչաց տոնի առթիվ, պատարագել և քարոզել է դպրեվանքի փոխ-տեսուչ հոգեշնորհ Տ. Շահան վարդապետ Ովաճյանը։ Սուրբ պատարագին ներկա են եղել սրբազան պատրիարք հայրը և ժողովրդի մեծ բազմություն։ «Հայր մեր»-ից առաջ տեղի է ունեցել հոգեհանգստյան պաշտոն Արմաշի դպրեվանքի հանգուցյալ վանահայրերի և միաբանության ու հայ մշակույթի համեստ աշխատավորների հիշատակին։

Հոկտեմբերի 13-ին, կիրակի օր, մեծ շքով և հանդիսությամբ տոնվել է Ս. Խաչ դպրեվանքի բացման 5-րդ տարեդարձը, սրբազան պատրիարք հոր նախագահությամբ։ Պատարագել է դպրեվանքի վերատեսուչ հոգեշնորհ Տ. Գարեգին վարդապետ Գազանճյանը։ Կատարվել է հոգեհանգիստ ի հիշատակ Ս. Խաչ դպրեվանքի բարերարների հին և նոր ննջեցյալների հոգու։ Ապա սրբազան պատրիարք հայրը կարդացել է իր գրած «Օրհնություն Ս. Խաչ դպրեվանքի» աղոթքը։ Քարոզել է պատարագիչ հայր տուրը։

Սուրբ պատարագի ավարտից հետո, դպրեվանքի նորակերտ ուսումնարանի սրահում կազմակերպվել է ընդունելություն, որին ներկա են եղել մոտ 200 հարգելի հրավիրյալներ։ Պատրիարք հոր աղոթքով սկսվում է ճաշը։ Կատարվում են հայող արտասանություններ, երգ, խմբերգ՝ դպրեվանքի ուսանողության կողմից։ Նվիրված օրվա տոնին։ Վերատեսուչ հայր տուրը կարդում է մի տեղեկագիր դպրեվանքի կրոնական, կրթական և ներքին կյանքի շուրջ։

Ս. Խաչ դպրեվանքն այսօր ունի 110 ուսանող 5 դասարաններ վրա բաժնված, 3-ը միջնակարգ, 2-ը՝ լիցեյ։ Դպրեվանքում կազմակերպվել են հաճախ դրական երեկոներ։ Լիցեյի ուսանողները հրատարակում են

«Մանկունք Ս. Խաչի» անունով պարբերական հանդեսը։

Դպրեվանքին ամեն կերպ սրտագին օժանդակություն են ցույց տվել Դպրեվանքը խնամակալ վարչությունը, պատվարժան կենտրոնական վարչությունը և նորակազմ Տիկնանց հանձնախումբը։

Խնամակալության անունից բժիշկ Ս. Քեշիշյանը կարդում է մի մանրամասն տեղեկագիր Դպրեվանքի շինարարական և մատակարարական աշխատանքների մասին։ Հավաքույթում գնահատական խոսք է ասում նաև կենտրոնական վարչության ատենապետ պր. Մ. Շելլեֆյանը։

Ս. Խաչ Դպրեվանքի բացման 5-րդ տարեդարձին նվիրված հանդիսությունում սրբազան պատրիարք հայրը փակման խոսք է ասել, ծանրանալով հայ ժողովրդի նվիրման ոգու վրա և կոչ է արել տաանողության՝ դաստիարակվել և պատրաստվել այդ ոգով, լավագույնս ծառայելու համար «Եկեղեցիին, ժողովուրդին և Հայրենիքին»։

Սրբազան պատրիարք հոր «Պահպանիչ»-ով և սեղանակիցների երգաձայն «Հայր մեր»-ով փակվել է Ս. Խաչ դպրեվանքի բացման 5-րդ տարեդարձին նվիրված ճաշկերույթ-հանդիսությունը։

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ ՇՎԵՅՑԱՐԻԱՅՈՒՄ

Վեհափառ Հայրապետը և Մայր Աթոռը սրտագին հոգեվանքով և դժուռնակությամբ են լսել միշտ փյուռքում հայ դաղութների մեջ հայկական նոր եկեղեցիների շինության և եկեղեցու կազմակերպության և զորացման նվիրված ջանքերի և ձեռնարկների մասին։

Այսօր, դաղթաշխարհում, հայ ժողովրդի գոյությունն ու ապագան պահող ու պահպանող ամենաէական և միակ համագգային հաստատությունը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին է։ Գաղթաշխարհի հաղար տեսակ այլասերիչ ազդակների տակ վտանգված Հայ Եկեղեցու հավատարիմ զավակների համար Հայ Եկեղեցին փրկության նավահանգիստ է և ամրության վեմ։ Այդ իսկ պատճառով մի նոր եկեղեցու շինությունը անսահման ուրախություն է պատճառում Վեհափառ Հայրապետի սրտին։

Վերջերս Մայր Աթոռում ուրախությամբ լսվեց, որ Շվեյցարիայում հաստատված ընիկ կեսարացի (Թալասցի) բարեպաշտուհի տիկին Վարդուհի Ժոլին (Ծնյալ Այվազյան) ազնիվ գաղափարն է ունենում, հավերժացնելու համար հիշատակը իր հորեղբոր՝ Թալասի արժանապատիվ Այվազյան քահանայի, 10 000 000 ֆրանկ նվիրել՝ Շվեյցարիայի մայրաքաղաք Բեռնում հայկական առաջին եկեղեցու շինության համար։

Արևմտյան Եվրոպայում, Ֆրանսիայից և Անգլիայից հետո, ուր կան հայկական բազմաթիվ եկեղեցիներ, վերջերս Միլանոյի (Իտալիա) հավատացյալ հայ գաղութը հիմն է դրել արդեն հոյակապ մի տաճարի։ Բելգիայի հայերը ևս մտադրել են մոտ ժամանակներս ունենալ իրենց մասնավոր աղոթքի տունը։

Իտալիայի, Շվեյցարիայի և Բելգիայի հայ գաղութների հոգևոր կարիքները մատակարարվում են Փարիզի առաջնորդարանից ուղարկված այցելու հոգևոր հովիվներով։

Եվ ահա, Միլանոյի հայ գաղութից հետո, Շվեյցարիայի հայ գաղութը ևս ունենում է իր եկեղեցին, տիկին Վարդուհի Ժոլիի առատաձեռն նվիրատվությամբ։

Բարեբարուհին իր ծնողների հետ Կեսարիայից (Թալասից) գաղթում է Կովկաս և ապա որպես ուսանող մեկնում է Շվեյցարիա, և ընտանիք կազմելուց հետո վերջնականապես հաստատվում այնտեղ։ Իր ուշիմությամբ և աշխատասիրությամբ իրեն և ընտանիքի համար ապահովում է նյութական բարեկեցիկ կյանք։

Բարեպաշտ և ազնիվ հայուհու վաղուցվա սրբազան ուխտն է լինում՝ իր քահանա հորեղբոր հիշատակին կառուցել մի եկեղեցի։ Տիկնոջ հայասեր ամուսինը՝ ֆրանսիացի Ռոբերտ Ժոլին (հյուպատոս Շվեյցարիայում) ոչ միայն չի հակառակում, այլև քաջալերում է իր կնոջ բարի ցանկությունը։ Վարդուհի Ժոլին վաճառում է իր կալվածներից մին և նրա փոխարժեք 10 000 000 ֆրանկը հատկացնում է Շվեյցարիայում առաջին հայկական եկեղեցու շինության։

Հարգելի և բարեպաշտ տիկինը Շվեյցարիայում՝ Լենտերլակենի մեջ ունեցած իր մեկ ամառանոցն էլ տրամադիր է հատկացնելու որպես սանատորիա կարիք ունեցող հիվանդ հայերին, եկեղեցու շինությունից հետո։

«Ցիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի»։

ՌՈՒՍԵԻ ՀԱՅՈՑ «ԿՈՄԻՏԱՍ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ

Անցյալ տարի Բուլղարիայի Ռուսե քաղաքում նշվեց «Կոմիտաս» երգչախմբի 25-ամյակը։

1932 թվականի հոկտեմբեր ամսին, Ռուսեի հայ գաղութի նյութական ու բարոյական աջակցությամբ, հիմնադրվում է բուլղարահայ «Երևան» մշակութային միության Ռուսեի մասնաճյուղի «Կոմիտաս» երկսեռ երգչախումբը։

Սկզբնական շրջանում երգչախմբին անդամակցել են 25 երկսեռ երիտասարդներ։ Հաջորդ տարիներին, շնորհիվ երգչախմբի վարչության կողմից ձեռք առնված միջոցների, անդամների թիվը հասնում է 60-ի։ 1934 թվականի հունիսին, երգչախմբի խմբավար Մինչո Անգելովի ղեկավարությամբ, երգչախումբը տալիս է իր անդրանիկ համերգը Ռուսեում։ Այդ օրերին երգչախումբն իր համերգները կրկնում է Պլովդիվում և այլ հայաշատ կենտրոններում։

Երգչախումբը երկար տարիներ ստեղծագործական խաղաղ աշխատանք է կատարում Ռուսեի հայ գաղութում, հաճախ շատ անբարենպաստ պայմաններում, բայց միշտ մնալով իր կոչման ու դիրքի բարձրության վրա, նվիրված հայ երգի տարածման և ծանոթացման շնորհակալ աշխատանքին։

Երգչախումբն իր գործուն մասնակցությունն է բերում գաղութում հայ գրքերի գյուտին և Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1 500-ամյակին նվիրված հանդիսություններին։

1937 թվականի նոյեմբերին տեղի է ունենում «Կոմիտաս» երգչախմբի և տեղի «Հայ գուսան» երգչախմբի միացումը և ստեղծվում է կատարողական բարձր արվեստով օժտված մի երգչախումբ, անդամների ավելի մեծ թվով։

Հայրենական պատերազմի տարիների դժվարություններն անգամ չեն կարողանում ընկճել երգչախմբի անդամների կամքն ու եռանդը, և նրանք մեծ սիրով շարունակում են գործել։

Բուլղարիայի ազատագրումը Սովետական Բանակի կողմից 1944 թվականի սեպտեմբեր ամսին, երգչախմբի առաջ բաց է անում ավելի ազատ և լայն գործունեության հնարավորություններ։ Ռուսեում 1944 թվականին կազմակերպվում է «Երևան» մշակութային ընկերությունը։ «Կոմիտաս» երգչախումբն իր ամբողջ կազմով մտնում է «Երևան»-ի Ռուսեի մասնաճյուղի մեջ։ Սկսվում է երգչախմբի քառորդ դարի գործունեության երկրորդ փուլը, է՛լ ավելի նպաստավոր պայմաններում։

«Կոմիտաս» երգչախումբն այնուհետև համերգներ է տալիս Սոֆիայում, Վառնայում, Սիլիստրեում և այլուր, ամենուրեք արժանանալով ջերմ ընդունելության։

Երգչախումբը հատուկ համերգ է տալիս նաև Կոմիտաս վարդապետի հիշատակին, այնուհետև լինում է կոոպերատիվ գյուղատնտեսություններում, գյուղական ժողովներում, քաղաքային և այլ վայրերի էստրադաների վրա, արժանանալով պատվոգրերի և ժողովրդական գնահատության։

1952 թվականից ի վեր երգչախմբի սիրված ղեկավարն է խմբավար Լյուբեն Թինտը։ Երգչախմբի անդամների մեջ, իրենց կատարողական բարձր արվեստով և ձայնային հարուստ տվյալներով այժի են ընկնում մեներգիչներ Արփիկ Շահինյանը, Արշալույս Վարդանյանը, Վերժին Պողոսյանը, Մեսրոպ Ապաճյանը, Օննիկ Փափազյանը, Տիգրան Տյուկեբյանը և մանավանդ Թոթո Փափազյանը, Սերոբ Վարդանյանը, Գնունի Բաղտասարյանը։ Երգչախումբն այժմ ունի մոտ 100 անդամներ։

«Կոմիտաս» երգչախմբի գործունեության 25-ամյակի առթիվ, նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի անունից և նրա հանձնարարությամբ, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը սրտագին շնորհավորում է երգչախմբին և հետագա հաջողություններ է ցանկանում նրան։

ՊԼՈՎԴԻՎԻ ՀԱՅՈՑ «ՇՆՈՐՀԱԼԻ» ԵՐԳՉԱԽՄԲԻ 25-ԱՄՅԱԿԸ

Փետրվարի 9-ին, Բուլղարիայի Պլովդիվ քաղաքում, մեծ հանդիսությամբ նշվեց տեղի հայոց Ս. Գևորգ եկեղեցու «Շնորհալի» երգչախմբի գործունեության 25-ամյակը։

Վեհափառ Հայրապետը այդ երջանիկ առիթով Պլովդիվի հայոց եկեղեցու թաղական խորհրդի հասցեով հղեց շնորհավորական հետևյալ հեռագիրը.

«Ս. էջմիածնեն ջերմագին ողջույն «Շնորհալի» երգչախմբի 25-ամյա հորելյանին առիթով։

Կշնորհավորենք հիմնադիր-ղեկավար Կարապետ սարկավագ Փափազյանը՝ վաստակավոր և հավատարիմ ծառան Ս. եկեղեցվո, ինչպես նաև թաղական խորհուրդը և բոլոր երգիչները, մաղթելով բոլորին առողջություն և աստվածային շնորհք։

«Շնորհալի» երգչախմբին և Կարապետ Փափազյանին ուժ, եռանդ, երկար տարիներ փայլուն գործունեությամբ ի փառս Աստուծո և Ազգիս Հայոց։ «Ողջ լեռուք և օրհնեալ ի Մէնջ, ամէն»։

«Շնորհալի» երգչախումբը կազմվել է մոտավորապես 25 տարի առաջ Պլովդիվում, Բուլղարիայի հայոց նախկին առաջնորդ հանգուցյալ գերաշնորհ Տ. Երվանդ եպիսկոպոս Փելտաճյանի գովելի նախաձեռնությամբ։

Երգչախումբն ունի ավելի քան 40 անդամ, որոնք սիրով և շնորհալիորեն մասնակցում են եկեղեցում սուրբ պատարագի սրբազան երգեցողություններին՝ տոնական ու հանդիսավոր օրերին և այլ պաշտոնական առիթներով։

Երգչախմբի մնայուն ղեկավարն է բոլորից սիրված և հարգված արվեստագետ երաժիշտ պր. Սարգիս Պալթայանը, որի՝ որպես երգչախմբի ղեկավարի և հասարակական-մշակութային գործչի՝ 25-ամյակը տոնվել է 1956 թվականին։

«Շնորհալի» երգչախմբի հիմնադիր և ղեկավար դեմքերից մեկն է նաև Պլովդիվի հայոց եկեղեցու «վաստակավոր և հավատարիմ ծառան», բարեպաշտ Կարապետ սարկավագ Փափազյանը, որի ազգային-եկեղեցական փայլուն գործունեության 40-ամյա հանդիսությունը միացվել է «Շնորհալի» երգչախմբի 25-ամյակին նվիրված հանդիսություններին։

«Շնորհալի» երգչախումբը, իր քառորդ դար գործունեության ընթացքում, մեծապես նպաստել է Պլովդիվի հայոց Ս. Գևորգ եկեղեցու պայծառության գործին, գաղութի միասնականության և համերաշխության աշխատանքներին։

Ուրախությամբ պետք է այստեղ արձանագրել այն փաստը, որ այսօր էլ, երգչախմբի հիմնադրության օրից 25 տարի հետո, խմբի հիմնադիր անդամներից շատերը դեռ ապրում են և մասնակցում իրենց սիրելի երգչախմբի ազգաշեն ձեռնարկներին։ «Հարկ չկա նկարագրելու, թե ինչ աստիճանի բարեպաշտ ոգացումներով պետք է տոգորված լինել, հավատարիմ մնալու համար այս սուրբ գործին»— գրում են իրավամբ Վեհափառ Հայրապետին Պլովդիվի հայոց Ս. Գևորգ եկեղեցու վարչությունը և հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Գևորգ ավագ քահանա Սարյանը։



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻՆ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ*

«ԱՅՍՕՐ ԱՆՃԱՌ» ՊՈԵՄԸ

Աղուհացից կիրակիների և Ծաղկազարդի շարականներից հետո անհրաժեշտ է ծանոթանալ և վերլուծել Շնորհալու վերոհիշյալ հռչակավոր պոեմը և ապա «նորոգող տիեզերաց» երգը, որը ներքին ներդաշնակությամբ «Այսօր անճառ»-ի հետ մի գեղեցիկ ամբողջություն է կազմում Ավագ ուրբաթ օրվա շարականների մեջ։

«Այսօր անճառ» երգը մի սքանչելի վիպական պոեմ է մեր շարականների մեջ և այդ շարականների պսակը, գեղեցկություններ։ Այստեղ բանաստեղծը մեծ վարպետությամբ նկարագրում է խորհրդավոր ընթրիքի, ոտնալվայի և շարչարանաց հետ կապված դեպքերը։ Եթե Շնորհալին ուրիշ ոչ մի չափածո գործ չունենար և լիներ միայն «Այսօր անճառ»-ը, ապա այս բազմախորհուրդ վիպական ու տեղ-տեղ քնարական կոթողը անպայման նրան կհոչակեր մեծ բանաստեղծ։ «Այսօր անճառ»-ը ճանաչված ու սիրված շարական է եղել, ինչպես Շնորհալու Վարդանանց հիշատակին գրված «Նորահրաշ պսակաւորս»-ը, Ս. Սարգսի «Ամենասուրբ երյորդութեանս» օրհնությունը, «Առաւօտ լուսոյ» և «Աշխարհ ամենայնս ընտիր ու պարզ երգերը։

Այս խորհրդավոր պոեմը գրված է այբբենական տառերի կարգով. բաղկացած է 36 տնից և 6 մասից, ամեն մասը՝ 6 տնից։ Պոեմի ամեն մի մասը լույս ուրբաթ առավոտյան ժամին երգելուց հետո կարդացվում է հավուր պատշաճի ավետարան։ Մեջ ընդ մեջ, ավետարանների ընթերցումից հետո, պոեմի նյութը ծավալվում, զարգանում և ընդգրկում է վերջին ընթրիքի պատմությունից մինչև Քրիստոսի մահը՝ խաչափայտի վրա։ Այս վեց երգերը կազմում են շարականի կուռ բովանդակությունը՝ որպես մի ներդաշնակ, անբաժանելի միություն։ Բանաստեղծն իր գործի նյութը վերցրել է Ավետարանի մեջ հիշատակված Փրկչի վերջին օրերի դեպքերից, մշակել ու զարգացրել գեղարվեստորեն և այն դարձրել մի գեղեցիկ պոեմ։ Առաջին երգն սկսվում է «Այսօր անճառ» բառերով և դրա համար էլ այդ բառերը դարձել են գործի վերնագիրը։ Բանաստեղծը հիանում է այդ անճառ լույսի ծագմամբ, այդ լույսի՝ Հիսուսի մարդասիրությամբ ու խոնարհությամբ։ Նախքան ընթրիքը նա սրբիչ ու ջուր է վերցնում և ծառայի պես լվանում է իր աշակերտների ոտքերը.

«Նախ քան զընթրիսն խորհրդոյ
Սփածաւ ղենջակ արկողն լուսոյ.
Եւ ջուր առեալ ծառայարար
Զոտս լուանայր դաշակերտացն»[39],

* Տպագրված ամսագրի 1957 թվականի № Թ-ից և 1958 թվականի № Ա-ից։

[39] «Քարոզեալ շարական», էջ 219։

Նա, որի զգեստը լույս է ըստ բանաստեղծի, որ անտես է հրեշտակների համար անգամ, որոնք երկյուղածությամբ սպասավորում են Նրան. նա, այսօր հասարակ սպասավորի գոգնոց կապած՝ սպասավորում է հողեղեններին։

Պոեմի առաջին մասը վերջանում է նրանով, որ Քրիստոսը Իր աստվածային ձեռքերով կոնքի մեջ լվանում է աշակերտների ոտքերը, տրպելով Իր խոնարհությամբ հաղթի չար հպարտին։ Այստեղ բանաստեղծը դադարեցնում է վիպումը և քնարական զեղումով դիմում է Հիսուսին և խնդրում, որ նա մաքրի իրեն մեղքերից և բաց անի ճանապարհ դեպի երկինք.

«Զոր մաքրեցեր յաւազանին՝
Մաքուր ձեռօք զոտս նոցին.
Եւ ուսուցեր խոնարհութեամբ՝
Ցաղթող լինել չար հպարտին.
Եւ զիմ լուա զտիղմն մեղաց՝
Աղաչանօք սրբոյ գնդին.
Եւ զգենացս ուղղեա զոտին՝
Խոնարհութեամբ ելիւք յերկինս։

Պոեմի երկրորդ մասը բաղկացած է վեց տնից և հիմնված է Հովհաննու Ավետարանի հետևյալ խոսքերի վրա. «Հայրն իմ տայ ձեզ զհացն յերկնից ճշմարիտ, զի հաց Աստուծոյ է, որ իջանէ յերկնից և կեանս տայ աշխարհիս»[40], ու դրա համար էլ երկրորդ տան մեջ երգվում է՝

«Ընդ բաղարջին հաց անխմոր
Եւ զմարմին իւր զերկնատուր։

Շնորհալին, հիմնվելով ավետարանչի մեկնաբանության վրա, այդ հացը համարում է անխմոր, կենաց, երկնային և բանական հաց, որ

«Թագաւորն արարածոց
Զհացն կենաց եւ քաղցելոցս։

Ըստ պոեմի խորհրդի, Քրիստոսի արյունն էլ կենաց բաժակ է, որին փափագում է հացի ու երկնային սեղանի հետ վայելել բանաստեղծը, իհարկե մարդկության հետ միասին.

«Ընդ ոչխարին արեանն ուխտին
Եւ մեզ զարիւնն իւր ուխտ կրկինս։

Ոչխարի արեան փոխարեն, Քրիստոսը տվել է Իր արյունը, որպես նոր ուխտ. ահա այս մասին է, որ բանաստեղծը տասնմեկ առաքյալների հետ հավաքված խնդրում է.

«Ժողովեալքս ի քէն հայցեմք
Ընդ ժողովեալ մեւասանին,
Որ զկենարարդ քո մարմին
Բաշխեալ եւուր ընդ բաժակին.

Շնորհեա և մեզ, Տէր, ընդ նոսին
Հաղորդ լինել քում սեղանին,
Կենաց հացիդ, յոր փափագիմք
Եւ ըմպելոյդ, ում ծարաւիմք։

Երգի այս մասը վերջանում է Հուդայի մատնությամբ, որը 30 արծաթի համար մատնում է իր տիրոջը՝ Հիսուսին.

«Ի յընտրելոց աշակերտացն
Յուդաս մեկնեալ ի սուրբ դասանցն,
Զբարձող մեղաց դառն Աստուծոյ
Մատնէր ի մահ ընդ արծաթոյ։

Ապա բանաստեղծը այս տան մեջ արտահայտում է իր ատելությունը և զայրույթը մատնիչ ու նենգավոր Հուդայի վերաբերյալ.

«Ի յընթրիսն հոգւոր
Սերձի ժպիրհն և նենգաւորն.
Ուտելով ընդ վարդապետն
Ցաճախէ զխաբէութիւնս։

Բայց այդ նենգ ու մութ գործի մասին գիտեր ինքը՝ Վարդապետը և դրա համար էլ Նա դիմելով աշակերտներին՝

«Մի ոմն ի ձէնջ, ասէ, եղբարք,
Զիս մատնելոց է առ ի մահս։

Հիսուսի այս հայտարարությունը անհանգստացնում է աշակերտներին, նրանք խուճապվում են իրար և հարցնում մեկը մյուսին՝ «Թէ տվ իցէ դաւաճանող վարդապետին»։

Այսպես էլ վերջանում է պոեմի երկրորդ երգը։

Երրորդ մասը երգվում է Ղուկասի «Մերձեցաւ տօնն բաւերով սկսվող Ավետարանից հետո։ Այս գլխում էլ Շնորհալին շարունակում է խոսել Հուդայի մատնության մասին. իսկ Հիսուսը՝

«Թացեալ պատառ տայ Յուդայի,
Նշաւակեալ զդէղն մատնիչ.
Զոր առեալ և մերկացաւ
Յաստուածային հոգւոյն շնորհաց։

Ապա երգի այս մասում բանաստեղծը տալիս է, ճշմարտացի ու բնական կերպով, Փրկչի հուզումնալից ու ծանր ապրումները ընթրիքից հետո Գեթսեմանիի պարտեզում։ Նա քրտնել է, տանջվում է, Նրա մեջ խոսում է և՛ մարդկայինը և՛ աստվածայինը. Նա երեք անգամ առանձնանում է առաքյալների խմբից՝ Իր մտքերի ու ապրումների հետ մենակ լինելու համար.

«Հոգայր զկրիցն տրտմաբար
Երիւքն եղեալ առանձնաբար.
Փրկել զաշխարհս հոգիս յօժար,
Բայց է բնութիւն մարմնոյս տկար։

Այս պահին երկնի հրեշտակը մոտենում է Նրան, քաջալերում և ասում, որ մարգարեների ասածը պիտի կատարվի՝ մարդկու-

40 Հովհաննու Ավետարան, Զ 32—33։

թյունը փրկելու համար։ Երգի այս դեպքը Շնորհալին վերցրել է Հին Կտակարանի Երրորդ Օրինաց գրքից՝ «Եւ զօրացուցեն զնա ամենայն հրեշտակք Աստուծոյ»[41].

«Այսօր անճառ»-ի հետևյալ գլխում Շնորհալին երգում է, որ մատնիչ Հուդան փարիսեցիների դասի հետ անկանգնելի ընկան, կործանվեցին, ինչպես երկնից ընկած սատանաների դասը, որոնք հավիտյան դատապարտված են կորստյան։

Հուդան Հիսուսին համբուրելով է մատնում։ Եկողները բռնում են Հիսուսին։ Պետրոս առաքյալը սրով խփում և կտրում է Հիսուսին բռնողներից մեկի՝ Մալքոսի ականջը։ Հիսուսը բարկանում է Պետրոսի վրա, թե սուրդ տեղը դիր և բժշկում է կտրած ականջը։ Պոեմի այս մասը վերջանում է նրանով, որ Հիսուսին բռնած տանում են Կայիափա և Աննա քահանայապետների մոտ՝ դատվելու։ Մառաներից մեկը ապտակում է Հիսուսին, որից, ըստ բանաստեղծության, Սերովբեքն էին թևաքողվում։ Ուրիշները պիղծ բերանով թքում են նրա երեսին, որը մի ժամանակ թքով կույր աչքերին լույս է տվել.

«Մառայն զերեսն այն ապտակէր,
Ցորմէ Սերովբէն թեւաքողէր.
Թուք արձակեալ պիղծ բերանովն,
Ցայն որ կուրին լոյս ծագեաց թքովն»։

«Այսօր անճառ»-ի նախավերջին գլխում նկարագրված է, թե Քրիստոսի ամբողջ չարչարանքը նրա համար է, որ ջնջի Ադամի գործած մեղքը, ազատի մարդկությունը տանջանքներից ու դժոխքից։ Հիսուսը Ինքն է շալակել Իր խաչն ու գնում է Գողգոթա, ուր ըստ ավանդության ու Շնորհալու՝ թաղված է առաջին մարդը՝ Ադամը[42].

«Սոսկալին Սերովբէից
Բառնայր ինքեամբ զփայտ խաչին,
Մինչ ի տեղին Գողգոթային,
Ցորում եդեալ մարդն առաջին»։

Գողգոթայում մերկացնում են Քրիստոսին և բեռում փայտե խաչին՝ ծակելով Նրա ձեռն ու ոտը, և իրար մեջ բաժանում Նրա հանդերձները։ Այս գրությունը այնքան ցնցող է եղել, որ, ասում է բանաստեղծը, երկնաբնակ հրեշտակներն անգամ զարհուրել են, երբ տեսել են մերկ Տիրոջը՝ խաչի վրա.

«Վերնականքն զարհուրեալ՝
Տեսին զՏէրն մերկացեալ.
Եւ զհանդերձսն բաժանեալ.
Պատմուճանին վիճակ արկեալ.
Զձեռսն և զոտսն ծակեցին...
Ընդ փայտ խաչին բեռեցին...»։

Վերջին գլխում բանաստեղծը հակադրել է Ադամին և Հիսուսի արարքները. առաջինն իր արարքով մեղք ու անեծք բերեց մարդկությանը, աշխարհին. իսկ երկրորդը՝ Իր չարչարանքներով ու արյունով պիտի մաքրի ու ջնջի նախահոր հանցանքը և փրկի մարդկությունը, աշխարհը։

Այս երգի առաջին տունը փոխաբերական առումով այն իմաստն ունի, որ Քրիստոսի ձեռքերը խաչափայտի վրա տարածվեցին Եվայի ձեռքերի փոխարեն, որն օրինազանց կերպով մեկնեց դեպի գիտության ծառի պտուղը. ոտքերն էլ տարածվեցին ու գամվեցին նույնպես Եվայի ոտքերի փոխարեն, որոնք շարժվեցին դեպի ծառը, դեպի արգելված պտուղը։

Քրիստոսի փրկարար խաչն էլ հակադրվում է այն դառնապտուղ փայտին, որ կյանքը մահու հետ փոխարկեց։

Վերևում բերված հակադրություններից հետո բանաստեղծը պատկերավոր, վառ երևակայությամբ նկարագրում է, թե ինչ երևույթներ տեղի ունեցան Հիսուսի խաչելության և չարչարանքների ժամանակ։

Իսկ խաչի չարչարանքների ժամանակ Տիրամայրը խաչի մոտ կսկծից ու ցավից արցունք էր թափում, տրտում, մանավանդ, երբ լսում է, որ Որդին ծարավ է, ու Նրան չրի փոխարեն լեղի քացախ են տալիս։ Ահա այս ամենը տեսնելով նա ողբում ու տանջվում է.

«Ցողէր արտօսր ցաւագին
Մայր Տեառն որ կայր մերձ առ խաչին.
Ցորժամ լսէր զծարաւին
Բարբառելոյ իւր Միածնին։
Եւ զոտն քացախ խառնեալ լեղի
Այնմ, որ լուխեաց դեռ յԱդենի,
Եւ ի վիմէն վտակ բարի
Արբոյց տոհմին դառնացողին»։

Տանջվում է Քրիստոսը խաչափայտի վրա՝ «Էլի՛, Էլի՛»[43] առ Հայր գոչելով, հոգին կամավոր կերպով ավանդում է Հորը՝ մարդկանց հոգին փրկելու համար։ Պոեմի վերջում, երբ խաչափայտի վրա մահանում է Քրիստոսը, բանաստեղծը այս անգամ ավելի ուժեղ պատկերներ է ստեղծում, թե ինչ կատարվեց Փրկչի մահվան ժամին.

---

41 Աստվածաշունչ, Բ Օրինաց ԼԲ 43։

42 Ըստ ավանդության՝ նոյ Նահապետը ջրհեղեղի ժամանակ Ադամի ոսկորները ու գլուխը վերցրել է իր հետ տապանում, երբ ջրհեղեղը ցամաքում է, նոյը դուրս է գալիս տապանից և Ադամի գլուխն ու ոսկորները թաղում Գողգոթայում։ Գողգոթա—երրայեցերեն նշանակում է գլխի տեղ։

43 Էլի՛, Էլի՛— Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ (երրայեցերեն)։

«Երկիր հիմամբք սասանեցաւ
Եւ վարագոյրն ընդ մէջ հերձաւ.
Կէմք ի յինքեանց պատառեցան
Եւ գերեզմանք մահու բացանեն»

Այսպես է վերջանում Շնորհալու այս գնդեցիկ պոեմը, որը նվիրված է ոտնալվայի և խաչելության դեպքերի նկարագրությանը։

Շնորհալու «Այսօր անճառ»-ն ու «Ընդդոյդ տիեզերացը» իմաստի տեսակետից մի ամբողջություն են կազմում։ Երկուսն էլ ուրբաթ օրվան են վերաբերում՝ մեկը ցերեկային, իսկ մյուսը՝ գիշերային ժամերգության համար։ Երկուսի մեջ էլ նկարագրված են Քրիստոսի մատնությունը, չարչարանքները ու մահը։ Սակայն մի ամբողջություն կազմող այս երգերից ամեն մեկն ունի նաև իր ուրույն բնույթը. «Այսօր անճառ»-ի մեջ մեծ մասամբ պատմողական ձևով տրվում է Քրիստոսի խաչելությունը, իսկ «Ընդդոյդ տիեզերաց» երգի մեջ մեծ մասամբ երևում են բանաստեղծի անձը, նրա խնդրանքներն ու աղաչանքները՝ իհարկե դարձյալ կապված խաչելության և Հիսուսի չարչարանքների դեպքերի հետ։

«Ընդդոյդ տիեզերաց» կոչվող երգը բաղկացած է 4 մասից. ամեն մի մասն էլ՝ 4 տնից, բացի վերջին գլխից, որն ունի միայն 3 տուն։ Երգի անների սկզբնատառերը կազմում են «Ներսեսի է բանս այս» ծայրանունը։

Հենց երգի սկզբից բանաստեղծը աղաչանք և պաղատանք է անում Տիրոջը, հիշելով խաչելության չարչարանքների ամեն մի դեպքը՝ նմանեցնելով կամ հակադրելով իր հանցանքներին։ Հետո այն կապակցությամբ, որ տիեզերքի, կյանքի նորոգողին, մարդուն փառքի լույսը պատմուճան հագցնողին, որպես նախատինք կարմիր քղամիդ են հագցրել՝ ծրգիչը ապերասում է ողորմություն, մաքրություն իր մեղքերից, որոնք որպես քուրձ պարուրել են իր մարմինը։ Խնդրում է, որ այդ տրտմագին արյամբ ներկված հագուստի փոխարեն Փրկիչը հագցնի իրեն առաջին հագուստը, որը եղել է նախքան նախահոր խարվելը.

«Ընդդոյդ տիեզերաց,
Որ զգեցուցեր մեզ լոյս փառաց.
Արկար զքեզ ի դինուորաց,
Քղամիդ կարմիր նախատանաց.
Մերկեա յինէն զքուրձ մեղաց.
Զտրտմագինն արեամբ ներկած.
Եւ զգենցո զուրախալին,
Զպատմուճանն իմ պառաջին»։

Այսպես էլ հետևյալ տան մեջ է. առաջին տողերում երգվում է, թե ինչպես հրեական զինվորներն ու քահանաները ծաղրում էին Հիսուսին, հարվածում նրան եղեգով, դարձյալ այս կապակցությամբ խնդրում է, որ փրկի մարդուն, որ չդառնա չարի ձեռքին ծաղրանքի առարկա։

Նշանավոր է իր նոր մտքերով ու այլաբանություններով երգի վերջին տունը։ Խաչելության դեպքերը հիշելուց հետո հեղինակը դարձյալ մեջ է բերում իր անձը, իր անձնական ցանկությունները։ Նա խնդրում է, որ Քրիստոսը իր փշե պսակով հանի իր մեղքերի փուշը, որը խրել է նրա հոգում թշնամին, հանի ու բժշկի այդ խայթված վերքերը։ այն էլ այնպես բժշկի, առողջացնի, որ այդ վերքերի սպիներն անգամ ջնջվեն, այլևս չերևան.

«Զփուշ մեղաց հանցես յինէն,
Զոր յիս եհար իմ թշնամին,
Եւ ողջացո զխայթուած վիրին,
Զի սպիք մեղացն ջնջեսցին»։

Այս ոգով և ձևով էլ գրված է երգի երկրորդ մասը։ Այս երգի վերջում նա երանի է տալիս Քրիստոսի աջակողմյան խաչված ավազակին, որն իր ընկերոջը տեղին հանդիմանելու և Քրիստոսին պաշտպանելու համար արժանացել է դրախտին։

Երգի նախավերջին մասում, ինչպես «Այսօր անճառ»-ի մեջ, նկարագրված են այն բնական ու արտակարգ երևույթները, որոնք տեղի են ունեցել խաչի վրա Քրիստոսի հոգին ավանդելու պահին։ Պետք է նշել, որ այս նկարագիրներն իրար շատ նման են ու կրկնություն իրենց պատկերներով ու ձևով։

Վերջին երգի վերջին տունն ամբողջովին վերաբերում է իրեն՝ շարականի երգչին, ուր նա ջերմ զգացումներով դիմում է Փրկչին, սրտով խոսում է նրա հետ, որ նա այդ բոլոր տանջանքները կամավոր ու մարմնով կրել է՝ մարդուն ազատելու համար, ուստի Հիսուսի ձայնը թող լսելի լինի, երբ նա արքայություն կոչի արդարներին, որ այնտեղ բոլորի հետ միասին՝ երգի Փրկչի հավիտենական փառքը.

«Միրտ իմ ու քեզ ապաղակէ,
Թան որ ընդ Հօր ի սկզբանէ,
Որ կամաւոր վասն մարդկան՝
Կրեցիր մարմնով զայս ամենայն.
Ինձ լսելի արա զձայն
Յարքայութեանդ քո կոչման.
Ընդ ժողովոյն անդ անդրանկացն՝
Օրհնիլ զքեզ միշտ յաւիտեան»։

(Շարունակելի)

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼԱՄԳԱՐՅԱՆ

(Առաջնորդական փոխանորդ
Արարատյան թեմի)

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏՅԱՆ

Սանիններորդ դարի մեր մշակույթի զարգացման պատմության մեջ իր համեստ և պատվավոր տեղն ունի Մայր Աթոռի միաբանությունը իր կրոնաբարոյական, մանկավարժական և պատմա-բանասիրական վաստակով։

Տասնիններորդ դարի վերջին հիսնամյակում Մայր Աթոռի բազմարդյուն և երախտաշատ միաբանների շարքում իր գրական և բանասիրական վաստակով, իր ուսումնականությամբ և վանական-վարչական գործունեությամբ, շատ միաբանների հետ աչքի է ընկնում նաև հանգուցյալ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը։

Սմբատյանի ժամանակակից և Մայր Աթոռի միաբան Վահան վարդապետ Բաստամյանցը իր ձեռագիր «Տարեգրություններ»-ի մեջ նրա մասին գրել է հետևյալը. «Մեսրոպ եպիսկոպոս Սմբատյանց, հին նախիջևանցի, կարճահասակ և հաստակազմ մարդ. գիտե դրոց լեզու... տեղյակ է կրոնին և սրբազան պատմության, ընթերցասեր, բավական ժիր և գործունյա, բարեսիրտ...»[1]։

Իր կյանքի և գործունեության մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում նաև ինքը՝ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը իր «Ինկարագիր Շամախւոյ թեմիս» մեծածավալ աշխատության 555—567 էջերում։

Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը ծնվել է 1833 թվականի մարտի 10-ին Հին-Նախիջևանի գավառի Փորադաշտ գյուղում, քահանայի ընտանիքում։ Ս. Էջմիածնի ժառանգավորաց դպրոցն է ընդունվել 1847 թվականի մարտի 1-ին։ Ժառանգավորաց վարժարանում նրա ուսուցիչներն են եղել Մակար վարդապետը (ապա կաթողիկոս) և Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանը՝ դպրոցի վերատեսուչ։ Նույն դպրոցում ուսման ընթացքն ավարտելուց հետո 1851 թվականի սեպտեմբերի 16-ին նա ստանում է դպրության չորս աստիճանները Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, երջանկահիշատակ Տ. Ներսես Ե Աշտարակեցու ձեռամբ և 1856 թվականին ձեռնադրվում է սարկավագ Մակար եպիսկոպոսից։ Մի տարի հետո էլ, 1857 թվականի հունիսի 16-ին, Պողոս եպիսկոպոս Մալխասյանից ձեռնադրվում է կուսակրոն քահանա և վերանվանվում Մեսրոպ (աշխարհական անունը եղել է Գրիգոր)։

Կուսակրոն քահանա ձեռնադրվելուց հետո սկսում է Սմբատյանի վանական-վարչական և գրական գործունեությունը թե՛ Մայր Աթոռում և թե՛ գավառներում։ Նա 1859 թվականին նշանակվում է «Էջմիածնի գավառի գործակալ», հին սովորությամբ ասած, միաժամանակ Մուղնու Ս. Գևորգ վանքի վանահայր և Ս. Էջմիածնի վանական կառավարչության անդամ։

1862 թվականին կանչվում է ավելի պատասխանատու պաշտոնի, նշանակվելով Նոր Բայազետի և շրջակա 73 հայաբնակ գյուղերի գործակալ, իր հոգևոր իշխանության սահմանների մեջ ընդգրկելով Քանաքեռից մինչև Բասարգեչար տարածվող շրջանը։

Վերոհիշյալ կարևոր պաշտոնն ստանձնելիս, Մեսրոպ վարդապետը գրում է. «Ինձ հանձնված Գեղարքունյաց գործակալության պաշտոնը հարմար առիթ համարեցի իմ ցանկության, ուղևորությանս դիպվածները և

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ Գեղական մատենադարանի ձեռ. N 8899։

Գեղարքունյաց գավառի ստորագրությունը ի դիր առնելը[2]։

Եվ իսկապես, նույն թվականից նա պատնականի բարեխղճությամբ սկսում է նյութեր հավաքել իր «Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի» դրքի համար և հրատարակում այն 1875 թվականին Ս. Էջմիածնի տպարանում։ Սմբատյանի վերոհիշյալ դիրքը արժեքավոր է աղբյուրագրական-ուսումնական տեսակետից՝ Նոր Բայազետի պատմության ուսումնասիրության համար։ Գրքում մանրամասն և արժեքավոր տեղեկություններ կան ծովազարդ գավառի, վանքերի (Սևան), եկեղեցիների, ավանների, գյուղերի, դպրոցների, ժողովրդի սովորությունների, կենցաղի և նիստ ու կացի մասին։ Նա այդ դիրքը գրելիս օգտվում է մեր մատենագրությունից, ինչպես նաև Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանից և Մ. Թաղիադյանից։

Հայ պատմա-բանասիրական գրականության մեջ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանի անունը անխզելիորեն կապված է կովկասում բնեռագիր արձանագրությունների հավաքման և հրատարակության շնորհակալ աշխատանքի հետ։ Նա հայտնաբերել է և հավաքել 1862—1863 թվականներին Գեղարքունի ծովազարդ գավառի բնեռաձև արձանագրությունները, ինչպես նաև Էլարի, Ադամխանի և Ալիշալոյի արձանագրությունները և հրատարակել Մոսկվայում լույս տեսնող «Համբաւարեր Ռուսիոյ» հայ լրագրի մեջ 1863 թվականին։

Ամեն մի գավառ շրջելիս, նա բարեխղճորեն փնտռել է և հավաքել բնեռագիր արձա-

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏՅԱՆ

(Նուռանկարված 1895 թ.)

2 Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանց, «Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի», Էջմիածին, 1895 թ., էջ 4։

նագրություններ։ Այսպես նա հավաքել է նաև Արարատի, Ծղակերտի, Երևանդաշատի, Շիրակի և այլ վայրերի արձանագրությունները, և այդ բոլորն ի մի հավաքելով կազմել է «Բևեռագրություն Արարատեան նահանգի» անունով արժեքավոր աշխատությունը, որի համառոտ ռուսերեն թարգմանությունը հրատարակել է Մոսկվայի Կայսերական հնագիտական ժողովը 1895 թվականին։

Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը գիտական կապ է պահպանել նաև Փարիզի գիտնականների, ինչպես նաև Վենետիկի Մխիթարյան հայրերի հետ։ Փարիզում հայտնի բանասեր Կ. Բասմաջյանը իրավամբ սրբազանին անվանել է «անխոնջ հավաքող Կովկասի Տոսպյան բևեռաքանդակ արձանագրությանց»։ Բացի այդ, Սմբատյան սրբազանը իր գտած բևեռագիր արձանագրությունները հրատարակել է նույնպես «Արարատ» ամսագրի 1896 թվականի և «Բազմավէպ»-ի 1897 թվականի համարներում։

Զարմանալի մեծ է և շնորհակալ էջմիածնական մեծավաստակ գիտնականի անխոնջ աշխատանքը համաշխարհային բևեռաքանդակ գիտության մեջ։ Սմբատյանի վաստակը պատիվ է բերում Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և միաբանությանն։

Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը 1892 թվականին Մոսկվայի Կայսերական հնագիտական ժողովի կողմից ընտրվում է ընկերության անդամ։ Դա փոքր պատիվ չէր եկեղեցական գիտնականի համար։

Որպես առաջնորդ կամ վանահայր, որտեղ էլ գնացել է Սմբատյանը, նա միշտ աշխատել է և հավաքել անխոնջ, անձանձրույթ։

1865 թվականին Սմբատյանը նշանակվում է Նվիրակ՝ Ատրպատականի թեմական առաջնորդ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Վեհապետյանի կողմից։ Առիթից օգտվելով նա շրջագայություն է կատարում Խոյ, Սալմաստ, Ուրմիա, Մարաղա և թեմի հայաբնակ գյուղերը և ապա գրի է առնում իր տպավորությունները։ Վահան վարդապետ Բաստամյանն իր «Տարեգրություններ»-ի մեջ վկայում է այդ մասին. «Ասում են, թե սա (Սմբատյանը—Վ. Վ. Գ.) ունի գրած մի ճանապարհորդություն Պարսկաստանի մեջ կատարած, ուր շատ հետաքրքիր տեղեկություններ կան»[4]։

1866 թվականին Սմբատյանը նշանակվում է Տաթևի վանքի վանահայր, որտեղ և կազմում է Ստեփանոս եպիսկոպոս Օրբելյանի ձեռագիր պատմության հատուկ անունների ցանկը, ինչպես նաև վանքի ձեռագրերի ցուցակը և նույն վանքի վանահայրերի համառոտ «գավազանագիրքը», սկսած Գրիգոր Տաթևացուց մինչև իր ժամանակը։

1867 թվականին նա գտնվում է Նախիջևանի քաղաքում, այցելում է շրջանի 88 հայաբնակ գյուղերը և գրում է «Գաւառացոյց Նախիջևանայ» աշխատությունը, որի մասին Հ. Ղ. Ալիշանը գրում է հետևյալը. «...Գալով Ձեր Նախիջևանայ գաւառացուցին, դա իմ Այրարատէս դուրս մնաց, միայն Շարուր գաւառակը կը պարագրէ, որոյ վրայօք շատ տեղեկութիւն չունիմ. իսկ Ձեր նշանակեալ գաւառոց ծանօթութիւնքն ի փոռնք ճանապարհորդէն և ի թուրքաց (յորս չեն գտնուիր անուանք գիւղից և վանորէից, այլ միայն սովորական կամ կարաւանի ճամբու վրայ եղած են) ըստ կարի ջանամ հաւաքել, և յետ Ձմռակին առաքել...»[5]։

Երբ 1868 թվականին նշանակվում է Երևանի փոխ-թեմական, որպես ուսումնասեր մարդ, բարեկարգում է Երևանի թեմական դպրոցը[6]։

1870 թվականին Սմբատյանը Գևորգ Դ-ի կողմից նշանակվում է Սինոդի անդամ և 16 տարի շարունակ մնում է այդ պաշտոնում մինչև 1887 թվականը։ Բացի Սինոդի վարչական աշխատանքների կատարմանը մասնակցելուց, նա լծվում է նաև դրական աշխատանքի։ Գևորգ Դ-ը գնահատելով նրա վարչական և դրական աշխատանքները, արժանացնում է նրան եպիսկոպոսական աստիճանի 1877 թվականին։

Սմբատյանը ցուցակագրում է Մայր Աթոռի Ներսիսյան թանգարանի իրերը, իսկ 1881 թվականին, Գևորգ Դ-ի հրամանով և օշականցիների օժանդակությամբ, կառուցում է Օշականի Մեծ Սուրբի եկեղեցին։

Հ. Ղ. Ալիշանը միշտ նամակագրության մեջ է եղել նրա հետ։ Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանում գտնվում են Ալիշանի 22 նամակները, բոլորն էլ հասցեագրված Սմբատյանին և կրում են զուտ հայագիտական բանասիրական բնույթ։ Այդ նամակների ընթերցումով մեզ հայտնի է դառնում, որ Սմբատյանը Կովկասում հանդիսացել է Հ. Ղ. Ալիշանի պատմա-բանասիրական երկերի տարածողը։ Հ. Ղ. Ալիշանը գնահատել է նաև Սմբատյանի աշխատանքները հայագիտության ասպարեզում և նրանից

---

[3] Տե՛ս մանրամասն իր «Ընկարագիր Ս. Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա», Տփղիս, 1904 թ., էջ 538—555։

[4] Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռ. № 8888։

[5] Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Արխիվ Գյուտ եպիսկոպոսի, թղթապանակ 2, վավերագիր 3։

[6] Տե՛ս մանրամասն «Տիխնամեակ թեմական դպրոցին Երևանայ», 1868, 1869, 1870 թվերը, էջ 109—120։

խնդրել է նյութեր իր «Այրարատ»-ի և այլ երկասիրությունների համար»։

Մակար Ա կաթողիկոսի օրով, 1882—1886 թվականներին, Սմբատյանը նշանակվում է Գևորգյան ճեմարանի վերատեսուչ։

Մակար Ա երջանկահիշատակ կաթողիկոսի հրամանով Սմբատյանը 1887 թվականին նշանակվում է առաջնորդ «վիճակին հարց Շամախու» (Բաքվի և Անդրկասպյան աշխարհի)։ Առաջնորդական ծանր պաշտոնի մեջ, նա ժամանակ է գտնում թղթակցելու պրոֆ. Ք. Պատկանյանի հետ։ 1884 թվականին Քերովբե Պատկանյանը նամակագրության մեջ էր Սմբատյանի հետ։ Նա իր խորհուրդ հրատարակության կապակցությամբ խնդրել է նրանից հետևյալը. «Դիմում եմ դեպի Ձեզ, մի նոր խնդիրքով։ Դուք գիտեք, ես մի քանի տարի առաջ տպեցի Մովսես Խորենացու աշխարհագրությունը հանդերձ ռուս թարգմանությամբ, օրինակները պետք է լինեն այդտեղ (Էջմիածին—Վ. Վ. Գ.)[8], եվ, իսկապես, Սմբատյանն ուղարկել է նրան նյութեր։ Այդ ապացուցում են Մատենադարանում գտնված նրա նամակները։

Եվ ահա նրա բարեկամ պրոֆ. Ք. Պատկանյանը քաջալերում է նրան իր նոր պաշտոնում և հետևյալ խորհուրդն է տալիս. «Հուսալով, որ այդ նոր նշանակությունը չի հեռացնիլ Ձեր Սրբազնությունը այն սեպանկար խորագրերից և Ռուսաստանի սահմաններում գտած արձանագրություններից, որոնք հետ ընդմիշտ արդեն կապված է Ձեր անունը»[9]։

Հ. Ղ. Ալիշանն էլ է քաջալերում Սմբատյանին իր նոր պաշտոնում և խրախուսում նրան. «Երբ իմացայ Սրբութեանդ կարգումն ի դիտապետութիւն Շամախւոյ, փորձութիւն մի եկաւ ինձ՝ արդեօք շնորհատրեմ թէ չէ, տարակուսելով, թէ որ հաճոյ է Ձեզ, Էջմիածնի բնակութիւն՝ եթէ այդ նոր վիճակիդ, յետոյ ընթերցայ ի լրագիրս Տփխիսու, այցելութիւնները ընդարձակ թեմիդ, զոր հոգեջան խնամօք պայծառացնես և պայծառանաս»[10]։

Եվ իսկապես պրոֆ. Պատկանյանի և մեծավաստակ գիտնական Հ. Ղ. Ալիշանի հույսերն ի դերև չելան, և Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը, բացի իր առաջնորդական ոգնաջան պաշտոնից, ձեռնարկեց նաև «Նկարագիր Շամախւոյ թեմիս» մեծածավալ աշխատությանը, որը և տպագրեց 1896 թվականին, Թիֆլիսում։ Հիշյալ ուսումնասիրության մասին մեծ գովեստով է խոսում Ալիշանը իր նամակներից մեկում. «Սիրայօժիր շնորհակալութեամբ ընդունեցայ և հաճութեամբ ու զուարճութեամբ ընթերցայ Շամախիդ... Շատ տեսակ իրաց տեղեակ կ'ընէ և ծանուցիչ անձանց... Ես ինձ պիտանի տեղեկութիւնք գտայ ի դրքիդ և քանի մի բանի աւելի այլ փափագիմ և խնդրեմ, որոց մինը հիշածդ երես 86 Մինքայէլ կաթողիկոսի իր ժամանակին եղած հայոց վանքերուն թիւն, որ ոչէ գրուածքէ փափագիմ գաղափարը։

Եթէ գտնուին ի Ցայսմաւուրս յատուկ կողմանց յիշատակ կամ վկայաբանութիւնք նոր նահատակաց Տելիպի (երես 29) Սղիայի և Անդրէի (երես 143)։

Ցերես 467 յիշուած Նախիջևանի թումանը՝ ասել է շրջավայրերու, մասիկ սահմանները...»[11]։

Վերոգրյալ մեջբերումը ապացուցում է, որ Սմբատյանը մանրազնին ուսումնասիրել է Շամախու թեմի նկարագրությունը իր բոլոր նրբություններով, և նրավամբ բարձր գնահատականի է արժանացել նրա հիշյալ գործը բանասերների և հատկապես Հ. Ղ. Ալիշանի կողմից, իր բովանդակած հարուստ նյութերի համար։

Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը ունի տպագրած ազգագրական-բանասիրական մի աշխատություն ևս՝ «Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորաց», որը տպագրվել է Թիֆլիսում 1904 թվականին։ Սա ևս արժեքավոր աշխատություն է, որը պարունակում է Ս. Կարապետի մանրամասն պատմությունը իր հիմնադրման օրից մինչև մեր օրերը։ Սմբատյանն իրավացիորեն գրում է առաջաբանում. «Հրաւէր իմ կարդալ և իմանալ թէ՝ Երնջակայ Ս. Կարապետի վանքը ինչ մեծ ծառայութիւն է արել ազգին իբրև մեծահռչակ դպրոց, իմանալ թէ՝ ինչ արժանաւոր մարդիկ է առել եկեղեցւոյն, իմանալ թէ՝ ինչ մեծ աշխատութեամբ առաջն է առել ունիթոռական յարձակմանց...»[12]։

Ուշագրավ է Սմբատյանի անտիպ աշխատություններից «Ժամանակագրութիւն»-ը, որը գտնվում է Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանում № 449-ի տակ։ Նա իր «Նկարագիր Շամախւոյ թեմիս» աշխատության 564-րդ էջում «Ժամանակագրության մասին գրում է. «Պատմական ժամանակագրութիւն երևելի դիւցազ, անցից և գործոց, պատահարաց և այլն, սկսեալ ի 1800 ամի ցայս թիւ (1896) և շարունակի ցոյչափ Աստուած յաջողէ ինձ»։

[7] Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Արխիվ Գյուտ եպիսկոպոսի, թղթապանակ 2, վավերագիր 13։

[8] Նույն տեղում, վավերագիր 30։

[9] Նույն տեղում, վավերագիր 33։

[10] Նույն տեղում, վավերագիր 13։

[11] Նույն տեղում, վավերագիր 21։

[12] Մեսրոպ արքեպիսկ. Սմբատյան, «Նկարագիր Ս. Կարապետի վանից», էջ Ա։

Սմբատյանի «Ժամանակագրութիւն»-ը պատմական արժեք է ներկայացնում նրանով, որ մանրամասնորեն նկարագրում է իր ժամանակի դեպքերն ու դեմքերը, Մատթեոս Ա. Գեորգ Դ, Մակար Ա երջանկահիշատակ հայրապետների օրով Ս. Էջմիածնում կատարված իրողությունները, տալիս է սինոդականների, առաջնորդների անունները և այլ անցուդարձերի պատմությունը[13], նա Ճեմարանի մասին շատ ճիշտ գնահատական է տալիս. «Հայոց ազգն այժմ կարոտի ոչ միայն միոյ Ճեմարանի, այլ և բազմաց համալսարանաց, ճեմարանաց, դպրանոցաց և դպրոցաց»[14].

Սմբատյանի երազանքը իրականացավ մեր օրերում միայն, և հայ ժողովուրդն այսօր ունի բազում դպրոցներ, համալսարան։

Բացի հիշվածներից, Սմբատյանն ունի նաև ամսագրերում մասամբ կամ լրիվ տպագրված և կամ անտիպ մնացած հետևյալ աշխատությունները.

1) «Կենսագրութիւն պատմաբանաւորէն Սմբատ Ա թագաւորի Հայոց Բագրատունոյ»:

2) «Տիեզերագրութիւն Վաղարշապատայ, Օշականայ և Աշտարակայ» (միայն Օշականին վերաբերվող մասը հրատարակվել է «Ճռաքաղ» ամսագրում)։

3) «Սառագրութիւն Մոտնոյ Ս. Գէորգայ վանից, Յովհաննու վանից և Սաղմոսավանից»:

4) «Սառագրութիւն նիւ քաղաքացն Յոլակերտի, Երուանդակերտի, Երուանդաշատայ և Բագարանի» (տպագրվել է «Արարատ» ամսագրի 1870 թվականի № 2-ում)։

5) «Պատմութիւն Ս. Յակոբայ վանուց Արկոտոյ և նշանաւոր աղբիւրի ջրոյն» (տպագրվել է «Արարատ» ամսագրի 1870 թվականի № 2-ում)։

6) «Պաշար քաճանայից, որ է աշխարհաբար քարոզ տէրունական ծանուցեալ և հանդէսների համար»:

7) «Էջմիածին և շրջակայք իւր, որ է նկարագրութիւն Էջմիածնի (անցեալ և ներկայն) և շրջակայքի վանորէից»:

8) «Հրաւէր ժողովրդոց Նամախոյ թեմի», (տպված 1893 թվականին Բաքվում)։

Մեսրոպ սրբազանը, ինչպես ինքն է հաղորդում, ունեցել է նաև «...լրագրական յօդուածներ, գրուածքներ և այլն հարիւրատոր, սկսած 1860 թուականից, զանազան առարկայից վերաբերութեամբ այլ և այլ լրագրաց մէջ տպուած, զոր օրինակ. «Համբաւաբեր Ռուսիոյ», «Ճռաքաղ», «Արարատ» ամսագիր և այլն»[15].

Սմբատյանը, բանասիրական պրպտումներ կատարելու համար, 1910 թվականին մեկնել է Երուսաղեմ և 1911 թվականի փետրվարի 9-ին վախճանվել է տեղի գերմանական հիվանդանոցում։ Ս. Երուսաղեմի պատրիարքը և միաբանությունը նրան թաղել են արժանավայել շքով և հանդիսությամբ, եպիսկոպոսական հանգստարանում։

Մայր Աթոռի երիտասարդ հոգևորականներիս սրբազան պարտքն է միշտ վառ պահել մեր անցյալի բազմաբեղուն և երախտագետ միաբանների գիտության ջահը Մայր Աթոռում։

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի։ Ամեն։

13 Հայկական ՍՍՌ Գիտական մատենադարանի ձեռ. № 449։

14 Նույն տեղում։

15 Տե՛ս «Նկարագիր Նամախոյ թեմի», էջ 566։

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հայ ժողովուրդն իր բազմադարյան պատմության ընթացքում բազմաթիվ մեծ ու փոքր պատերազմներ է մղել, մերթ՝ իր երկրի ազատության և հաճախ՝ իր կյանքը, պատիվն ու ինքնուրույնությունը պաշտպանելու համար։ Այդ անվերջ և համարյա միշտ անհավասար կռիվների մեջ նա անհամար զոհեր է տվել և ունեցել բազմաթիվ հերոսներ, որոնք իրենց կյանքը զոհաբերել են Հայրենիքին։ Սակայն այս բոլոր պատերազմների և կռիվների մեջ, թե՛ իր բնույթով և թե՛ անմիջական արդյունքներով ու հետևանքներով, բացառիկ տեղ է գրավում Ավարայրի ճակատամարտը՝ Վարդանանց պատերազմը։ Դա, իրոք, մի համազգային պայքար էր ընդդեմ օտարի լծի։ Մազդեզական կրոնի մոլուցքով բռնված Սասանյան բռնակալ Հազկերտը ողջ հայության համար շղթաներ էր պատրաստել, որը փշրելու համար ոտքի կանգնեց հայ ժողովուրդը։ Ընդհարումը տեղի ունեցավ Ավարայրի դաշտում, 451 թվականի մայիսին. իրար դեմ դուրս եկած ուժերը չափազանց անհավասար էին թե՛ թվով և թե՛ որակով։ Հայերի կողմից նախարարության զինված ուժերի մի մասն էր միայն. կռվողների մեծ մասը պատահական զենքով զինված շինականներն էին։ Պարսիկները կռվի դաշտ էին բերել թվով գերազանց ուժեր։ Ցնցած կռվող կողմերի հսկայական այդ տարբերությանը, կռիվը կատաղի էր և տևեց երկար. պատճառը թույլ կողմին՝ հայերին ոգևորող գաղափարն էր. Հայրենիքի պաշտպանության գաղափարը։ Ի վերջո պատերազմի դաշտը մնաց պարսիկներին, որոնք անհամեմատ մեծ կորուստ ունեցան։ Հայ մարտիկները ցրվեցին։ Այդ կռվում ընկան հայկական բանակի և ազատամարտի զեկավարն ու ոգեշնչողը՝ Վարդան Մամիկոնյանը և շատ անվանի մարտիկներ, թե՛ նախարարական դասից և թե՛ շինականներից։

Քանի որ մեր նպատակը չէ Վարդանանց մեծ ազատամարտի պատմությունը գրել, բավականանանք այս կարճ նկարագրությամբ և համառոտակի հիշատակենք Ավարայրի ճակատամարտի անմիջական արդյունքի և հետևանքի մասին։

Պատմությունից հայտնի է, որ Ավարայրի ճակատամարտով դրա պատճառը եղող հարցը լուծվեց և կռիվը չվերջացավ։ Այդ ճակատամարտին մասնակցող մարտիկների մեծագույն մասը ցրվեց երկրի զանազան մասերը։ Այնուհետև ամբողջ երկրում ծայր առավ պարտիզանական կռիվը, որին այս անգամ մասնակցում էին ոչ միայն պրոֆեսիոնալ մարտիկները՝ երկրի նախարարական դասն իր զինվորներով, այլև կանայք, ծերերը, երեխաները, հոգևորականները, բոլորը, բոլորը, մի խոսքով ամբողջ ժողովուրդը, ամեն մարդ իր հնարավոր միջոցներով։ Կռիվ էր քաղաքներում, գյուղերում, լեռներում, ձորերում և դաշտերում։ Իհարկե այս երկարատև պայքարի ընթացքում, բացի անթիվ մարդկային զոհերից՝ սպանված, վիրավոր ու գերի, ավերվում և ամայանում էր երկիրը, որն զգալի հարված էր կռիվն սկսող Հայոց թագավորի համար։

Ի վերջո հաղթությունը շահեց պայքարող հայ ժողովուրդը և գոռոզ ու ինքնավստահ Հազկերտը ստիպված եղավ տեղի տալ և բավարարել իր իսկ պատճառով ըմբոստա-

ցած ժողովրդի պահանջների մեծագույն մասը։

Մեծ եղավ այս ազատամարտի նշանակությունը հայության համար։ Սերունդներ ոգեվորությամբ կարդացին Վարդանանց հերոսամարտի պատմությունը և կրթվեցին Ավարայրի ոգով։ Ավարայրում պարզված դրոշն անպարտ մնաց դարեր շարունակ և ոգեշնչող։ Ավարայրի հերոսները՝ Վարդանանք երբեք չմոռացվեցին։ Նրանց հիշատակին կառուցվեցին մատուռներ, եկեղեցիներ։ Ավարայրի ազատամարտում ընկած Վարդանանք հերոսների մի սովոր մասի շիրիմներ գտնվում են մեր Հանրապետության սահմաններում։ Վարդանանց հերոս-նահատակների այդ շիրիմների մասին խոսում է ԺԴ դարի պատմիչ Սյունյաց արքեպիսկոպոս Ստեփանոս Օրբելյանը, իր «Պատմութիւն նահանգին Սիսական» գրքում[1]։

Ստեփանոս Օրբելյանը մեր ճշմարտապատում պատմագիրներից մեկն է։ Նա իրեն համար սկզբունք է դարձրել պատմածը հաստատել ստույգ աղբյուրների վկայություններով, որքան այդ հնարավոր էր իր համար, արժանահավատ անձանց պատմածով, հին վավերագրերով, արձանագրություններով և այլն։ Մեզ հետաքրքրող խնդրի առթիվ նա գրում է. «Եւ ահա զայս ամենայն ծանեաք յիւրոց (հուշարձանների) արձանագրութեանցն, և այլն՝ որ էր ի գրոց, և էր որ ի տեղեացն և ի վկայիցն և յանուանցն և ի հաստատ աւանդութեանց հնոցն ծանեաք, և տեղեկացեալ ամենայնի ստուգիւ՝ աւանդեցաք ձեզ» (էջ 72)։

Սյունյաց պատմիչն իր պատմության ԺԴ գլխում գրում է Ավարայրի պատերազմից հետո նահանջող հայ մարտիկների և նրանց հետապնդող պարսից զորքերի ընդհարումների, դրանց տեղի և ընկած զոհերի մասին։ Պատմիչը հատկապես մանրամասնորեն որոշում է ընդհարումների տեղը, տալիս է այդ տեղերում ընկածների եղբայրական գերեզմանների վրա կառուցված հուշարձանների նկարագրությունը, հայտնում է, թե ովքեր են շինել այդ հուշարձանները և այլ մանրամասնություններ։ Ուշագրավ է այն, որ երկու տեղում հուշարձանների շինությունը նա վերագրում է հասարակ ժողովրդին, անվանելով դրանց «տեղի բնակիչներ» կամ «քրիստոնյաներ», որով ընդգծվում է ազատամարտի ժողովրդական-ազգային բնույթը։

Նկատի ունենալով, որ Ստեփանոս Օրբելյանի այս կարևոր վկայությունը շատերին անծանոթ է, և առհասարակ այս խնդրի վրա, որքան մեզ հայտնի է, որևէ ուշադրություն չի դարձվել, կարևոր ենք համարում այդ պատմության վերոհիշյալ ԺԴ գլխից կարևոր քաղվածքներ բերել։

«Ապա լեռ Սրբոյն Վարդանայ շրջէին ընդ ամենայն տեղիս զորն Պարսից. ոմանք զկնի փախստէիցն, ոմանք ի վերայ բերդից և ամրոցաց. և զանային և խնդրէին ի սպառ զնոցն և արմատախիլ անել զազգ Հայոց։ Սուրն վաղակաւոր կայր մերկացեալ ի վերայ ամենայն հայ զինուորի, և միայն խնդրէին բանիւ միով ուրանալ զՔրիստոս. և զլուխ կորացուցանել արեգագոն. և թէ ոչ՝ մեռանել առ ժամայն։ Վասն որոյ լի եղեն վկայիւք ամենայն առապարք և խորաձորք, հովիտք և բլուրք աշխարհիս Հայոց... Որպէս և ասա է տեսանել յաշխարհիս Սիսական ի գաւառս Վայոց ձորոյ. ուր եկեալ ի զօրացն Հայոց փախստեայ կամէին անցանել յամուր աշխարհն Առձախայ. որոց զկնի պնդեալ անցեալ Աթաշխուդային շարահնար զօրքն Պարսից. և հասեալ ի գաւառամէջն Վայոց ձորոյ մերձ ի բլուրն որ մեծամեծ վիմօք պատեալ էր վասն ամրութեան ի գետամիջին Եղեգեաց և Մոզանի. և մատուցեալ եդին արեան ճապաղիս. և կոտորեցին զբազումս և գեղեցիկս որ էր յազատ տոհմէ Հայոց վասն անուան Քրիստոսի։... Եւ ինքեանք պնդեցան զհետ այլոցն. և հասեալ կիսոց յատորոտ բերդաքարի միոյ ի նեղ ձորակի անդ՝ կոտորեցին, որոց գլխաւորին անուն Մարտիրէ. որ և տեղն կոչեցաւ Անգեղձոր։ Եւ անդ սասպատակ եդեալ հասին և 300 արանց ի շրկիցն որ Ոստինք կոչի և Արտարոյնք. և անդ գնոսա խողխողեցին. որոց վերայ յետոյ շինեցաւ եկեղեցի ի բնակչաց տեղեացն։

Եւ անտի սակաւ մի անցեալ Պարսկացն ի ձորագուռն որ ի ձախ կողմանէ որ հայի ի վեր յուխտն սուրբ Ցաղացքար կոչեցեալ, որ ի վերայ բարձրաւանդակին ի մէջ սահմանաց երկուց գեղջն, որ վերոյ ասացաւ. և անդ կոտորեալ յոյժ բազմութիւնք սեպուհ արանց և ընտիր զօրաց։ Եւ ինքեանք եկեալ ի շինամէջն բնակեցան խորանօք... որ և յետոյ երթեալ քրիստոնէիցն՝ ամփոփեցին զսուրբսն. և շինեցին մատուռն ի վերայ։ Իսկ զառաջին սուրբսն, որ կատարեցան առ բլրաւն, ի ժամուն ամփոփեցին ոմանք քրիստոնեայք։ Եւ յայնժամ կաթողիկոսն երանելին Գիւտ, զոր յուեալ հրամայէր շինել վկայարան մեծ ի վերայ սրբոցն։ Եւ ժողովեալ զոսկերսն նոցա ի վկայարան. ապա ձեռն ի գործ արկեալ Ցրև և Շահիրէտ և Արշէն երէց և Աբգիտ՝ հիմնարկին սրբոյ կաթողիկէին յինն երորդ ամի Գիւտոյ երանելւոյ՝ Հայոց կաթողիկոսի, յամարան ամսամտին, որ օր հինգ

[1] Ստեփանոս արքեպիսկոպոս Օրբէլեան, «Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1910 թ., էջ 68–72։

էր ամսոյն։ Եւ կատարեալ գնա մեծածախ գանձիւք կանգնեցին ճեմարան իմն երկնանման հրաշաքարտաշ շինուածովք երկամբէթս և եռախարանս. և յերկուց կողմանէ դափնս և սրահակս, վերնատունս սեամբք և սքանչելի յօրինուածովք շինեալ... Բայց այժմ չեմ աւերման տեղւոյն եղև շինանիստ

Այս լուսարձակ քաղվածքից տեղեկանում ենք, որ հին Վայոց Ձորի կենտրոնական մասում, նեղգեղձորի շրջանում, Երփա գետի ձորերում շորս տեղ Վարդանանց մարտիկների մի սովոր մասի եղբայրական գերեզմաններն են եղել, որոնցից երեքի վրա հուշարձաններ են կառուցվել անմիջապես

ՍՊԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

գեղեցկաց, և կոչեցաւ տեղին Խոտորավանք...» Պատմիչն այդ գլուխը վերջացնում է հիշատակելով, թե ինչ աղբյուրներից է քաղել վերոհիշյալ տեղեկությունները, որը մենք դրինք քաղվածքից առաջ։

նրանց զոհվելուց հետո, կամ քիչ անց, համենայն դեպս ե դարում։ Զոհված մարտիկների երկրորդ խմբի՝ Անգեղձորի նահատակների շիրիմների վրա հուշարձան կառուցվելու մասին պատմիչը չի հիշատակում։

Այժմ աշխատենք որոշել հայոց մեծ ազատամարտում ընկած այդ զոհերի շիրիմների տարարտում ընկած այդ զոհերի շիրիմների ճիշտ տեղը, դեկավարվելով Սյունյաց պատմիչի ցուցմունքով, և տեսնենք. թե ինչ է մնացել դրանց տեղերում։

Նահատակների առաջին խմբի կռվի և թաղվելու տեղը պատմիչը դնում է «ի գետամիջին Եղեգեաց և Մոզանին։ Դրանցից առաջինը՝ Եղեգյաց գետը՝ Արփա գետի հյուսիսային ճյուղն է, որն իր անունը ստացել է հին Եղեգնաձորից, որի միջով այդ գետն է անցնում։ Այժմ այդ ձորը կոչվում է Ալայազի ձոր։ Թերևս գետի անունը պատմական Եղեգիս գյուղաքաղաքից ևս առնված լինի, որը հնում Սյունյաց երկրի նշանավոր քաղաքական կենտրոններից մեկն էր, գետի ափին գտնվող ներկա Ալայազ գյուղի տեղում։ Մոզանը Արփայի հարավային ճյուղն է, որն այդպես է կոչվել Մալիշկա գյուղից մի քանի կիլոմետր հեռու, գետափին գտնվող և այժմ ավերակ Մոզան կամ Մոզ ավանի անունով։ Պատմիչը հիշատակում է, որ այդ տեղը «յետ աւերման տեղւոյն (պետք է հասկանալ «սաքանչելի յօրինուածովք շինեալ» եկեղեցու) եղև շինանիստ գեղջկաց և կոչեցաւ տեղին Խոտորաբերդ։ Այդ անունը չի պահված և հետևապես մեզ օգտակար լինել չի կարող։ Սակայն Օրբելյանը տալիս է տեղը որոշող մի այլ նշան՝ «մերձ ի բլուրն, որ մեծամեծ վիմօք պատեալ էր վասն ամրութեանն։ Այդպիսի մի բլուր, ավելի ճիշտ բլրակ, գտնվում է Եղեգնաձորի շրջանի շրջկենտրոնի՝ Միկոյան գյուղի՝ հարավ-արևմտյան ծայրին, անմիջապես ճանապարհի աջ (ձորակողմի) եզրին։ Այդ բարձր, ըստ երևույթին արհեստական բլրակը, որի ինչ լինելը որոշ չէ, իր ստորին մասում պատված է մի քանի շարք մեծամեծ քարերի անկյունավոր և կանոնավոր շարվածքով։ Գուցե այդ բլրակն է նկատի ունեցել պատմիչը։ Համենայն դեպս Գյուտ կաթողիկոսի հրամանով շինված հոյակապ կաթողիկեից որևէ հետք չի մնացել դրա տեղը որոշելու համար։ Մեր այդ տեղերում կատարած այցերի ժամանակ, սրանից 10—12 տարի առաջ, բլրակին մոտիկ, հարավակողմում, մի օրորաձև, կարմիր տուֆից շինված տապանաքար կար, որը, դատելով վրան կպցրած մոմերի շիթերից և մրից, պաշտամունքի տեղ է, սակայն քարը պատոպատս հետնագույն շրջանի է, և չի կարող կապ ունենալ մեզ հետաքրքրող խմբի հետ։ Շրջկենտրոնից մոտ 1 կիլոմետր հարավ-արևելք, գյուղի տակով անցնող հեղեղատի ձախափնյա թեք լանջին, հետնագույն ժամանակներում շինված մի հասարակ մատուռի պատերի մեջ և դրանց կից թափված մի քանի սրբատաշ և գեղեցիկ ձևավորում ունեցող քարերի բեկորներ կային։ Արդյոք դրանք Գյուտ կաթողիկոսի շինել տված եկեղեցու բեկորների՞ց էին, դժվարանում ենք ասել։ Համենայն դեպս այդ փշրանքներն էլ արժեք չունեն, որովհետև պարզապես ուրիշ՝ մոտակա՝ տեղից բերված են և բացի այդ մատուռի շրջակայքում հին շենքի հետք չկար։ Ճարտարապետության գործերի վարչության 1955 թվականին հրատարակված «Աղիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները» գրքույկում (էջ 46) ենթադրություն է արվում, թե մոտերքում, այսինքն Միկոյան գյուղում, կառուցված եկեղեցու հիմքը կարող է դրված լինել Գյուտ կաթողիկոսի շինած եկեղեցու տեղում։ Սակայն, առ այժմ, դա լոկ ենթադրություն է, որը կարիք ունի փաստարկման։

Անցնենք Անգեղաձոր՝ Վարդանանց մարտիկների երկրորդ խմբի նահատակության տեղը։ Այստեղ արդեն պատկերն այլ է։ Վերը տեսանք, որ Սյունյաց պատմիչն Անգեղաձորում հուշարձան կառուցվելու մասին որևէ բան չի հիշատակում։ Սակայն, ինչպես երևում է, այդտեղ ևս հուշարձան է եղել։ Վերը հիշված տեղագրության մեջ գրված է. «Անգղի կամ Նահատակի մատուռը գտնվում է Շատինից մեկ և կես կիլոմետր հարավ, Եղեգիս (Ալայազ) գետակի ձախ կողմում, փոքրիկ ձորակի աջ ափին։ Այս մատուռը վերը հիշված երկրորդ մարտում ընկած զինվորների դամբարանն է, որը կառուցվել է 5-րդ դարում և բազմիցս ենթարկվել վերանորոգումների՝ միանգամայն փոխելով իր սկզբնական ձևը։ 5-րդ դարից պահպանվել են միայն որոշ բեկորներ։ Վերջին վերանորոգումը կատարվել է 1871 թվականին։ ...Մատուռը փոքր է, ուղղանկյուն հատակագծով, ծածկը թաղակապ է։ Պատերը շարված են դեղնակարմրագույն և գորշագույն տուֆե տաշված քարերով՝ կրաշաղախով։»

Երրորդ խումբ նահատակների թաղման տեղը պատմիչը որոշակի ցույց է տալիս՝ «ի ջրկիցն որ Ոստինք կոչի և Արտաբոյնք... որոց վերայ յետոյ շինեցաւ եկեղեցի ի բնակչաց տեղեացն։ Արտաբույնքը դեռ մի քանի տարի առաջ կոչվում էր Երդափին, իսկ այժմ՝ Եղեգիս։ Ոստինքն այժմ կոչվում է Հոստուն, որը, բնակիչների Ալայազ գյուղը փոխադրվելու պատճառով, ներկայումս լքված է։ Պատմիչի նշած տեղում, այսինքն հիշյալ երկու գյուղերի մոտերքում, երկու գետակների միացման տեղում ընկած տարածության վրա, այդտեղով անցնող ճանապարհի տակ, գտնվում է մի փոքրիկ ավերակ եկեղեցի։ Ներկայումս գոյություն ունեցող շենքի պատերի մնացորդները կիսամշակ քարերից են շինված։ Սակայն, դրանց հիմքում, արևմուտ-

յան պատի հյուսիսային հատվածում, մենք տեսանք սրբատաշ գունավոր մեծ քարերից շարված, որը և պետք է լինի ի դարում կառուցված հուշարձանի (եկեղեցու) մնացորդը։ Վերոհիշյալ տեղագրության մեջ այդ կետն էլ է նշված, իբրև 300-ի նահատակության վայր։

Չորրորդ տեղը, որը պատմիչն անվանում է Մարանդ, մոտ է Ցախացքար տանող ճանապարհի մեջ գտնվող հին Արտաբույնը գյուղին։ Ահա թե ինչ է ասված հիշյալ տեղագրության 51-րդ էջում այդ տեղի մասին. «Հնագիտական հետազոտությունները ենթադրել են տալիս, որ ճակատամարտը տեղի պետք է ունեցած լինի գյուղից մոտ մեկ կիլոմետր հարավ, ճանապարհի եզրին, այգիների մեջ գտնվող փոքրիկ մատուռի վայրում։ Չնայած մատուռը կառուցված է 20-րդ դարի սկզբներին, բայց մեջը հավաքված հին քարե բեկորները, մանավանդ կից կանգնած կոթողը, որն անվիճելիորեն պատկանում է առնվազն 7-րդ դարին, վկայում են, որ հենց այդ նույն տեղում է եղել պատմության մեջ հիշվող մատուռը՝ հայ զինվորների գերեզմանը։

Այսպիսով, տեսանք, որ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի հիշատակած, հայոց մեծ ազատամարտի հերոսների հիշատակին, նրանց իսկ նահատակության վայրերում, դեռևս ի դարում կանգնեցրած չորս հուշարձաններից երեքի տեղը որոշ է, իսկ չորրորդինը (նահատակների առաջին խմբինը)՝ ենթադրելի։

Վերը հիշված հին հուշարձաններից երրորդը բարեհաջող բնական դիրք ունի. այնտեղ, ըստ Սյունյաց պատմիչի, Վարդանանց զինվորներից 300 հոգի են թաղվել։ Այդ հուշարձանը գտնվում է Եղեգիս գետակի և դրա Արտաբույնքի վտակի խառնարանին մոտ։ Նուրջը մի ընդարձակ և ազատ տարածություն է նիստաձև, որի ծայրն ուղղված է դեպի Շատին, իսկ թևերը՝ մի կողմից դեպի Եղեգիսի և մյուս կողմից դեպի Ցախացքար տանող խոր ձորերը։ Ընդարձակ ձորամիջի այդ հողամասը Շատինի կողմից աստիճանաբար բարձրանում է դեպի Սմբատաբերդի ժայռերը, որոնք սեպաձև խրվում են նետի թևերի մեջ իբրև դրա կոթը։ Նետի կենտրոնում, հողամասի թեքության բարձր կետին չհասած, տեղավորված է հուշարձանը։ Տեսարանը հոյակապ է և վեհ։ Եթե Շատինի մոտից դիտելու լինենք, աջից կտեսնենք այդ գյուղից դեպի վեր խոյացող ամրոցաձև ամեհի քարաժայռերը, որոնց շարունակությունն են կազմում Եղեգիս գետակի ձախափնյա գահավեժ, մինչև ձորի խորքը պատի պես իջնող հսկա քարափները։ Դիմացը՝ Սմբատաբերդն է իր անմատչելի ժայռերով, իսկ ձախ կողմից՝ Վարդենիսի լեռնաշղթայի ալիքաձև իջնող հարավային փեշերը։ Շատինի մոտից, Եղեգիս գետակի աջ ափով, Սելիմի լեռնանցքով իջնող ճանապարհն է անցնում, իսկ հուշարձանի կողքով, հիշյալ ճանապարհից բաժանվող և Սմբատաբերդի տակով, վերոհիշյալ ձորերով ընթացող գյուղամիջյան ուղիները։ Այդ ձորերը և դրանց կողերի սարալանջերը լի են պատմական անթիվ հուշարձաններով։ Հոստունը, հին Եղեգիս գյուղաքաղաքն իր ընդարձակ ավերակներով ու եկեղեցիներով, Սմբատաբերդը, Ցախացքարը, Կնեվանքը, Սրատեսի վանքը և այլ պատմական վայրեր, իրենց բազմաթիվ և անգնահատելի ճարտարապետական գանձերով։ Վայոց ձորի այդ մասն իսկական հնագիտական մի թանգարան է, Վարդանանց հերոսների հիշատակով էլ նվիրականացած։

ԹԱԴԵՈՍ ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ

ԶՎԱՐԹՆՈՑԻ ՇՈՒՐՋԸ*

4) «ԱՄԲՈԽՈՒԹԻՒՆ ԵՐԴՈՒՄԱՐԴԱՑ»

Հովհաննես Դրասխանակերտցին Զվարթնոցին զուգընթաց ու շրջակա շինարարությունների մասին գրում է.

«Շուրջանակի պատուար պարսպով փակէալ ամրացուցանէր՝ յօրինեալ ի նմա յարկս բնակութեան ինքեան հաստահեղոյս կոփածոյ քարամբք։ Այլ և կարգեալ կացուցանէր ի նմա ամբոխուրիւնս երդումարդաց ըստ պայմանի քաղաքականաց։

Այս ամբոխութիւնս երդումարդաց» բառերը բացատրելու փորձեր արել են Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանն ու Գարեգին Լևոնյանը։

Վերջինիս կարծիքով, «ներսեսաշեն այդ ընդարձակ տունը եղել է Իջևան ուխտի և մկրտվելու եկած քաղաքացիների համար, որոնք մկրտության ծեսը Զվարթնոցում կատարելուց հետո մի քանի օր մնում էին այդ սենյակներում և աղոթում այդ տան մեջ եղած փոքր եկեղեցում»[29]։

Տարիներ առաջ Օրմանյան «ամբոխութիւնս երդումարդաց» բառերի մասին գրել է, թե «մենք կիմանանք իրրև ուխտավորների հյուրանոցներ»[30]։

Իշպես Լևոնյանի, այնպես և Օրմանյանի ըմբռնման սխալ լինելու պատճառն այն է, որ նրանք ուշադրություն չեն դարձրել «երդումարդ» հատուկ տերմինի վրա։

Օրմանյանը հնարավորություն ուներ թեկուզ հենց միայն Հայկազյան Նոր Բառգրքին դիմելով՝ մոտավորապես ճիշտ իրազեկ լինելու, թե ինչ պետք է հասկանալ «ամբոխութիւնս երդումարդաց» ասելով։

Հայկազյան Նոր Բառգիրքը մի քանի օրինակներ բերելով ապացուցում է, որ «ամբոխութիւն» նշանակում նաև «ամբոխ, բազմութիւն»[31]։ Նույն ընտիր աղբյուրը համապատասխան վկայություններով հաստատում է, որ «երդումարդ» նշանակում է ոչ միայն «հարկ և բնակիչ» ընդհանրապես, այլ մասնավորաբար նաև «տուն և ընտանիք»[32]։ Ըստ այսմ, ուրեմն, այն նվազագույն մոտավոր իմաստը, որ պետք է հաներ Օրմանյանն «ամբոխութիւնս երդումարդաց» բառերից, կլիներ այն, թե ներսես Շինողը, բացի նյութական-ճարտարապետական ձեռնարկություններից (տաճար, բնակարան, առու, պարտեզ, պարիսպ), մի բան էլ է անում. նորակերտ Զվարթնոցի շուրջը բնակեցնում է «տուն ու ընտանիքների բազմություն», ուրիշ խոսքով՝ Զվարթնոցը դարձնում է ոչ միայն մենաստան, այլև աշխարհիկ շինանոց, որտեղ ժողովուրդ էլ պետք է ապրեր և ապրել է։

Այս բացատրությունը, որ բավարար կլիներ Հայկազյան Բառգրքի հրատարակության տարիներում, Օրմանյանից 75 ու մեզանից մոտ 90 տարի առաջ, այժմ արդեն թերի է և կարոտ լրացումների։ Պաուլ Լագարդի, Լեոյի ու Մանանդյանի երկերով հիմա արդեն հաստատված իրողություն պետք է համարել, որ «երդ» բառը հատուկ երկրագործական տերմին է եղել՝ համապատասխանելով հունարեն arovra բառին (լագարդ), նշանակելով «գյուղացիներին պատկանող ?—Թ. Ա.) հողաբաժիններ երդերի թվով (լեռ) կամ թե, ավելի ճիշտ, «հողաբաժիններ... որ ավանների և գաղթականների տրվել են «երդերին», այսինքն ծուխերին կամ տնտերին. ռուսական подворный надел-ի նման (Մանանդյան)[33]։

* Շարունակված ամսագրի 1958 թվականի № 4-ից։

29 «Տեղեկագիր», Բ, էջ 204։

30 Մաղաքիա տրեպիսկ. Օրմանյան, «Ազգապատում», Կոստանդնուպոլիս, հատ. Ա., 1912 թ., էջ 737, § 497։

31 «Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի», հատ. Ա, Վենետիկ, 1836 թ., էջ 57։

32 Նույն տեղում, էջ 674։

33 Հմմտ. Հ. Մանանդյան, «Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին մարզպանության շրջանում», Երևան, 1935 թ., էջ XIV—XV։

«Երդ» բառի այս նոր ըմբռնումը նոր իմաստ է տալիս նաև «երդումարդ» բառին, մի իմաստ, որ մինչև այժմ անտեսված է։

Եթե «երդ» նշանակում է նաև գյուղացիական հողաբաժին, ապա «երդումարդ» կնշանակի այս հողաբաժինները մշակող հրաբգործ մարդ։ «Երդումարդ» բառին մոտավորապես հոմանիշ է «երդավոր» բառը, որ ունի Սեբեոսը.

«Եւ հրաման ելանէ ի կայսերէ. «Սեբեոսն մազար հեծեալ վազեցակայ է, ասէ, իմ ի վերայ աշխարհին Հայոց։ Արդ ԼՌ երդաւոր ժողովեսցին ինձ անտի և նստուցին ի Թերակացւոց աշխարհին»[34]։

Այս «երդումարդ» տերմինի կողքին դնել կարելի է մի արտահայտություն, որ գտնում ենք Հովհաննավանքի 1283 թվականի մի արձանագրության մեջ.

«Ես Հասան իշխան, որդի Քրդին... և բարեպաշտ ամուսին իմ Արուս խաթուն... տուաք ի Սուրբ Կարապետս... զմեր գանձադին գեղն զԱհրամագեղ և զՂամագանցն իւրեանց ամէն հող ու ջրով և բնորդի մարտկաւք (=մարդիկաւք)[35]։

Այս հատվածներում «երդումարդ», «երդաւոր» ու «բնորդի մարդ» մոտավորապես հոմանիշ են՝ նշանակելով հարկատու, վերջում նաև ճորտ գյուղացի. այս դեպքերում «մարդ» բառն էլ ստանում է մոտավորապես նույն իմաստն, ինչ ռուսերենում ունեին «человек, люди» բառերը։ Երբ կալվածատերն ասում էր «мой человек» կամ «мои люди», այս չէր նշանակում տոկ մարդ ու մարդիկ ընդհանրապես, այլ կալվածատիրոջից իրավապես ու տնտեսապես կախյալ անձ ու անձինք, հարկատու գյուղացիներ ու նույն իսկ ճորտեր կամ ստրուկներ։

Դրասխանակերտցու այս խոսքի մեջ, թե «կարգեալ կացուցանէր ի նմա ամբոխութիւնս երդումարդաց ըստ պայմանի Քաղաքականաց», վերջին ընդգծված բառերն էլ պարզ չեն հասկացել։ Այս բառերի ազդեցությամբ Շահխաթունյանը դրել է Զվարթնոցի մասին.

«Պայծառացուցանէր զվայրն գեղեցիկ արարուածովք զօրէն քաղաքաց»[36]։

Այս անշուշտ սխալ է. «քաղաքական» բառը բացատրել է Հայկազյան Բառգիրքն իբրև «արուեստ և գիտութիւն բարեկարգութեան քաղաքի»[37]։ Բառի նեղ առումն է այս։ Մեր կարծիքով այն պետք է բացատրել նաև «իբրև արվեստ և գիտություն բարեկարգության աշխարհի»։ Սրա համաձայն էլ, «ըստ պայմանի քաղաքականաց» մենք թարգմանում ենք՝ «աշխարհավարական կանոնների համաձայն»։

Վերոգրյալից հետո պարզ է, որ «ուխտավորների հյուրանոցներ»-ի կամ մկրտվողների «թրջանոց»-ի մասին խոսք չի կարող լինել այլևս։

«Այլ և կարգեալ կացուցանէր ի նմա ամբոխութիւնս երդումարդաց ըստ պայմանի քաղաքականաց» նշանակում է. «Այլև կարգում և բնակեցնում էր այնտեղ շինականների բազմություն՝ աշխարհը բարեկարգելու (կամ աշխարհավարական) կանոնների համաձայն»։

Զվարթնոցի հիմնադիրն այնտեղ խմբում էր ոչ միայն «բանիւ աղոթող կրոնավորների խմբեր, այլև շինականների երդեր, որպեսզի սրանք «ըստ պայմանի քաղաքականաց» վար ու ցանք և կալ ու կուտ անեին՝ նրանց «հացիւ» ապրեցնելու համար։

Պատմիչ Օրբելյանի տերմինը գործածելով կարող ենք ասել, որ Զվարթնոցի շուրջը եղել է «շինականաց գեղջկաց»[38] կամ պարզապես գյուղ։

Պատմությունը պահել է նույն իսկ այս գյուղի անունը։

Ո՞րն է այն։

3) ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԳՅՈՒՂԸ

Է դարի վերջերին և Ը դարի սկզբներին կաթողիկոսություն արած Հովսեփ Բ-ի մասին Դրասխանակերտցին գրում է.

«Զկնի Գէորգայ զՅովսէփ ի գաւառէ Արագածոտան ի բնակչաց Սրբոյն Գրիգորի կացուցանեն ի հայրապետութեան»[39]։

Նույն իրողությունն Ասողիկը պատմել է այսպես.

«Տէր Յովսէփ... ի գաւառէ Արագածոտնէ ի գեղջէ Սուրբ Գրիգորի»[40]։

Շահխաթունյանը ժամանակին կարծել է, որ այստեղ հիշված Ս. Գրիգորը Փարպու հա-

34 «Սեբէոս», էջ 112։— Նոր Հայկազյան Բառգիրքը «երդաւոր» չունի. Առձեռնը բացատրում է «ասեցիք, տուն» (էջ 268)։

35 Կ. Կոստանյանց, «Վիմական տարեգիրք», Պետերբուրգ, 1913 թ., էջ 124։

36 Հովհաննես Եպիսկ. Շահխաթունյան. «Մատենագրութիւն էմիածնի», հատ. Ա, էջ 288։

37 «Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի», հատ. Բ, Վենետիկ, 1837 թ., էջ 969։

38 Օրբելեան. «Պատմութիւն Նահանգին Սիսական», Թիֆլիս, 1911 թ., էջ 72, գլ. ԺԹ։

39 «Դրասխանակերտցի», էջ 111։

40 «Ասողիկ», էջ 106։

մանում փոքրիկ, աննշան ու շատերին անհայտ մենաստանն է[41]։

Ալիշանը շարադրելով Շահխաթունյանի այս կարծիքը՝ տատանվելով ասում է.

«Թերևս ճահճոտագոյն իցէ զայս Ս. Գրիգորս համարել դաստակերտ Ներսիսի Գ կաթողիկոսի, թէև եկեղեցին այն հոյակապ աւերեալ էր յարաբացւոց յետս անդ Ը դարու (?—Թ. Ա.), յորում Յովսէփս այս եկաց կաթողիկոս իբր յամի 793»[42]։

Օրմանյանի կարծիքով, «եթէ լոկ ի բնակչաց բացատրութիւն ըլլար՝ կրնար Զվարթնոց Ս. Գրիգորի եկեղեցին վրա ալ իմացվի, այլ ի գեղչէն ըսելը Փարպին կմատնանշէ։ Ըստ այսմ և եկեղեցու այս պատմագիր գրում է «Տ. Յովսէփ Բ Փարպեցի»[43]։

Ինչպես տեսնում ենք, Հովսեփ Բ-ին Զվարթնոցի բնակիչ համարելու գլխավոր արգելքն էն, որ գրողներին հայտնի չէ, թե Զվարթնոցի մոտ գյուղ էլ է եղել, ուստի և նրան տանում ծնեցնում են մի այնպիսի շինանոց, որ գյուղ է և միաժամանակ եկեղեցի ունի Ս. Գրիգոր անունով։

Այժմ, որ մենք գիտենք, թե Զվարթնոցի շուրջը եղել է «ամրոխութիւնս երդումարդացս, այսինքն՝ զշինանիստ գեղչկացս կամ զգիւղս», Շահխաթունյանի ու Օրմանյանի պնդումները շրվում են և Ալիշանի տատանումը վերանում է։ Հովսեփ Բ-ը Զվարթնոցից էր։ Այս հաստատվում է Ալիշանի բերած հետևյալ վկայությամբ.

«Այլ գաւազանագիր յայտ առնէ զվանսն ասելով. «Տէր Յովսէփ յԱրագածոտնէ ի վայրաքաղաքէ Սրբոյն Գրիգորի»[44]։

Փարպու Ս. Գրիգորն, ինչպես ասացինք, բոլորովին աննշան մենաստան է եղել. մեծ վանքերին տրվող «մայրաքաղաք» մակդիրը նրան չի սազում[45]։ Ինչ վերաբերում է Զվարթնոցին, ապա այն ոչ միայն մեծ վանք էր, այլ մեծերի մեջ ամենանշանավորներից մեկը, հիրավի «մայրաքաղաք», ըստ միջնադարյան եկեղեցական տերմինաբանության։

Վերոգրյալով ոչ միայն լուծվում է Հովսեփ Բ-ի ծննդավայրի հարցն, այլև իմանում ենք, թե ինչ էր կոչվում Զվարթնոցի շուրջը եղած շինանոցը միջին դարերում։ Այս շինանոցի անունն էր, ըստ Ասողիկի, «Սուրբ Գրիգորի գյուղ (զի գեղչէ Սուրբ Գրիգորի». ուշադրություն. գրված է ոչ թե «Սրբոյ Գրիգորի», այլ «Սուրբ Գրիգորի», որն անշուշտ ժողովրդական լեզվի ու անվանակոչության հետք է). իսկ ըստ Դրասխանակերտցու՝ պարզապես «Սուրբ Գրիգոր» (ի բնակչացն Սրբոյն Գրիգորի»)։

Պատմիչների վկայություններն անտարակուսելի են։ Բայց հարց է ծագում և հետաքրքրական է, թե արդյոք հայոց մեջ եղե՞լ են և կամ կա՞ն գյուղեր սրբերի, կամ ավելի ճիշտ՝ վանքերի ու եկեղեցիների անունով։ Պատասխանը դրական է[46]։

Բացի հանրահայտ էջմիածին գյուղանունից, այլև Աստվածածին տեղանունից, բերենք հետևյալ օրինակները.

Ալիշանը Հին Բայազդի շրջակայքում գտնում է «Վերին և Ստորին Սիրպաղանս» գյուղեր՝ կցելով ծանոթություն, թե տեղեկություն չունենք, յոր կոչին և այլ գեօղք»[47]։

Ալիշանի նշած «Սիրպաղանս»-ին տեղացի (Բայազդի) թե՛ թուրք, թե՛ հայ և թե՛ քուրդ բնակչությունն ասում է Սրբահան՝ մատնելով անվան մեջ ասուրբ բառի գոյությունը և բառը մոտեցնելով Սուրբ Օհան ստուգաբանությանը։ ԺԸ դարի գրական աղբյուրները հաստատում են հիշյալ գյուղի այս ստուգաբանությունը։ «Ջամբռ»-ը նվիրապետական վիճակները թվարկելիս հիշատակում է «Բայազիտ քաղաքն... Զանկազոռ. Սուրբ Յոհան, Գիւրճիրուպախ և այլն»[48]։ «Սիմեոն կաթողիկոսի հիշատակարանի Ա հատորում 1765 թվականի տակ հիշատակված է, թե «աւարառուք ոմանք... աւարեցին զՍուրբ Յոհան գիւղն, որ է ի Բայազիտ»[49]։

Ասատուր Խաչատրյանից ժամանակին շնորհակալությամբ ստացանք հետևյալ տեղեկությունը. «Հասան Ղալայի հյուսիսային կողմը, Ս. Աստվածածնա վանքի դիմաց ձորի մեջ կա թուրք գյուղ Սրբահան անունով, որ Սուրբ Հոհան է անշուշտ, քանի որ այս թուրք գյուղի մոտ գտնվում են Սուրբ Հոհանու վանքի ավերակները»։

«Ջամբռը պահել է սրբի անունով մի այլ գյուղի անուն էլ։ Հավուց Թառի Ամենափրկիչ վանքի մլքատու գյուղերի ցանկի մեջ կարդում ենք ի միջի այլոց «Կոխգ, Մանկոա, Աւանիկ,

41 Հովհաննես եպիսկ. Նանխարունյան, «Ստորագրութիւն էջմիածնի», հատ. Բ, էջ 75—76։

42 Հ. Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 159։

43 Մատաթիա տարեգիրկ. Օրմանյան, «Ազգապատում», հատ. Ա, էջ 914, § 629։

44 Հ. Ղ. Ալիշան «Այրարատ», էջ 159։

45 Մայրաքաղաք = հոչակավոր մենաստան, մայր մենաստան. մայրավանք վկայությունները տե՛ս «Նոր Բառգիրք հայկազեան լեզուի», հատ. Բ, էջ 202։

46 Մաքենոցաց վանքի 901 թվականի արձանագրերի մեջ կարդում ենք. «... ես Սուփան, Սիւնեաց իշխան... նաու զսեփական տեղն մեր ի սա, որ ըստ անուան եկեղեցւոյս Աստուածածնի ասի (Կոստանյան, «Վիմական», էջ 5)։

47 Հ. Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 507։— Հմմտ. «Սիրպաղան» Արայքխում, «Այրարատ», էջ 489։

48 «Ջամբռ», էջ 46։ Հիշյալ գյուղերը մինչև հիմա էլ հայտնի են նույն անուններով.

49 «Դիւան հայոց պատմութեան», գիրք Գ, Թիֆլիս, 1894 թ., էջ 282։

Քաղբերթ և Սուրբ Սարգիս գեղորայքը»[50], Քիչ հետո իմանում ենք, որ ԺԸ դարի վերջերում «Նոխդ գեղջն... չէն էր, իսկ Մանկուս, Նևանիկ, Քաղբերթ և Սուրբ Սարգիս... ամենեին ամայի են... գեղորայքն խոպան»[51],

Այսպիսով Սուրբ Օհան ու Սուրբ Սարգիս գյուղերի անունները միանգամայն հաստատում են Զվարթնոց գյուղի Սուրբ Գրիգոր անունը, մի գյուղ, որ փոված պահվում է Ներսեսաշեն եկեղեցու շրջապատի հողի տակ և որի ավերակների պեղումները մեզ կտան Ը դարից մնացած գյուղի անկասկածելի մնացորդներ։

Բ) «ԲՆԱԿՈՒԹԻՒՆ ԻՆՔԵԱՆ»

Գանք Զվարթնոցի բուն շինքերին։ Գայթակղության քարերից մեկը Հովհաննես Դրասխանակերտցու վերոհիշյալ հատվածն է կրկին.

«Բայց հայրապետն Ներսէս պարապ անձին գտեալ՝ դարտաքոյս հրաշակերտ եկեղեցտյն, զոր իւր իսկ էր շինեալ, շուրջանակի պատուար պարսպով փակեալ ամրացուցանէր՝ յօրինեալ ի նմա յարկս բնակութեան ինքեան հաստահեղոյս կոփածոյ քարամբք։ Այլ և կարգեալ կացուցանէր ի նմա ամբոխուրիւս երդումարդաց ըստ պամանի քաղաքականաց[52]։

Գ. Լևոնյանն իրավամբ առարկում է, թե «բնակութիւն ինքեան» բառերի տակ չի կարելի Հայրապետական Աթոռ կամ բուն Կաթողիկոսարան հասկանալ, քանի որ կաթողիկոսի նստոցը է դարում Դվինն էր։ «Զվարթնոցի գործերով Ներսես հաճախ գալիս էր այնտեղ, կարող էր ունենալ յուր «բնակութիւնը», բնակարանը»[53], Լևոնյանի այս վերջին բացատրությունը միակ ճիշտն է, որ հաստատվում է ոչ միայն Հայկազյան Նոր Բառգրքի բերած բազմաթիվ օրինակներով, այլև միևնույն պատմագրի— Հովհաննես Դրասխանակերտցու մի շարք համանման ու ակներև հատվածներով։

«Հայրապետն Եզր վիայական Սրբոյն Գայիանեայ... ևս ընդարձակադոյն և պայծառագոյն շինեաց... և արտաքուստ յարդարէր կալանս բնակութեան քահանայական դասուց»[54], «Բարեպաշտ իշխանն Գրիգոր Մամիկոնեան... հիմնադրեալ դյքնաղագեղ եկեղեցին, որ ի դաստակերտին Արուճ, շինէ զնա... Եւ ապա հաստահեղոյս քարամբք և կրով պարսպեալ՝ կարգէ տուն բնակութեան իւրոյ»[55]։

«Շինէ (Գրիգոր Մամիկոնեան) նաև նուբրանոց ուխտի կրօնաւորական դասուց, յորում և եկեղեցի պայծառապաճոյճ... ըստ յարեւելից կուսէ դաստակերտին մեծի եղիվարդայ՝ տուն բնակութեան կուսակրօնից դնա հաստատէ»[56],

«Դաւիթ (ի գեղջէն Արամոնից) շինէ եկեղեցի ի գեղջն Արամոնս գեղեցկայարմար յարդարմամբ և դնէ շուրջանակի նորա տուն բնակութեան վայելուչ իմն յարմարեալ[57]», և այլն և այլն։

Զվարթնոցի շուրջը եղած շենքերի մասին Դրասխանակերտցու գրածը շատ ճիշտ հասկանում է Շահխաթունյանը, երբ մի քիչ զարգացնելով դրում է, թե Ներսեսը շինել է «զտուն բնակութեան ինքեան և հոգևորականն դասուց»[58]։ Իսկ Լևոնյանը, որ արդեն ճիշտ գլխի էր ընկել, հանկարծ ճանապարհը թեքում է բացատրելով, թե «Ներսեսաշեն այդ ընդարձակ տունը եղել է իշեռն ուխտի և մկրտվելու եկած քաղաքացիների համար, որոնք մկրտության ժեսը Զվարթնոցում կատարելուց հետո մի քանի օր մնում էին այդ սենյակներում և ապրում այդ տան մեջ եղած փոքր եկեղեցում»[59], նրա միածնի երբեմնի տերմինով ասած՝ Ներսեսաշեն տունը եղել է մի տեսակ «Ղաղարապատ»։

Է դարի «Ղաղարապատ»-ի այս ըմբռնումը չի կարող խարսխվել «բնակութիւն ինքեան» բառերի վրա։

«Կաթողիկոսն ինչ պիտի աներ այնտեղ 30-ից ավելի սենյակներ ու դահլիճներ»[60],— հարցնում է Լևոնյանը։

Մեզ թվում է, թե այս հարցումն ավելի շուտ պետք էր ուղղել Ներսես Շինողին ու իր ժամանակին, քան սրա շինածների մասին մեր օրերում գրողներին։ Եվ անտարակույս, ոչ միայն ինքը Տաթևի կաթողիկոսը, որ նստում-կանգնում էր Բյուզանդիոնի աշխարհակալի հետ, այլև ժամանակակիցները, որոնք լսել էին, թե հնում հայ կաթողիկոսը կենցաղավարել է 400 հոգևորականի շքախմբով, խիստ կկարմանային՝ լսելով, թե Կոստանդին կայսեր հայրագիր պատրիար-

50 «Քամբոս», էջ 276—277։

51 Նույն տեղում, էջ 278։

52 Յովհաննու Դրասխանակերտցւոյ «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912 թ., էջ 88։

53 «Տեղեկագիր», Բ, էջ 204։

54 Դրասխանակերտցի, էջ 80։

55 Նույն տեղում, էջ 91։

56 Նույն տեղում։

57 Նույն տեղում, էջ 105։

58 Հովհաննես եպիսկ. Շահխաթունյան, «Պատրաստութիւն էջմիածնի», հատ. Ա, էջ 288։

59 «Տեղեկագիր», Բ, էջ 204։

60 Նույն տեղում։

քի ու սրա շքախմբի, այլև վանահոր ու միաբանների համար շատ են համարվում Զվարթնոցի դահլիճներն ու սենյակները։

7) ԶՎԱՐԹՆՈՑԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Զվարթնոցի ու մասամբ էլ էջմիածնի ճարտարապետական ու այլ կողմերի պատմության համար կարևոր է պարզել, թե ինչ անուններով է կոչվել Ներսես Գ-ի շինած եկեղեցին։

Մինչև այժմ հայտնի անուններն են Զուարթնոց և Ս. Գրիգոր։ Բայց հիմա կարելի է մատնանշել մի քանի տվյալներ, որոնք բաց են անում հիշյալ եկեղեցու նորանոր անունների շարանի ճոթը։

ԺԶ դարի մատենագիր Սիմեոն Ապարանցու «Վիպասանութիւն սակս Պահլաւունեան զարմի և Մամիկոնեան սեռիս ոտանավոր պատմության մեջ, որը դժբախտաբար ընդհատվել է հենց Ներսես Շինողին վերաբերող էջերում, պատմվում է այս կաթողիկոսի մասին.

«Ապա եկեալ ի յԱյրարատ,
Շինեալ զտաճարս ի Վարդգէսին,
Զմինն ի վերայ պողոտային
Զտեսչեան տեղին Գրիգորին։
Զոր (այսպես) դիւրաբախքն Տրդատայ
Նլին ընդ յառաջ Լուսաւորչին,
Եւ զմիան ևս տեսչեան տեղին,
Ցորմէ զուարթնոցն յերկիր իջին։
Կնքեալ զանունն տաճարին
Հրեշտակապետք ըստ պատշաճին»[61]։

Այս մատենագրի ասելով տաճարը կոչվում էր Հրեշտակապետաց։

Ինճիճյանը «Հին Հայաստանի ստորագրության» մեջ և արանից էլ առնելով Հովհաննես եպիսկ. Շահխաթունյանն ու Թորամանյանը բերում են մի վկայություն «ի պատմութեանց ժողովոց հայոց», թե «երկասիրաբար յարդարեալ շինէ (Գ Ներսես կաթողիկոս) զսուրբ Շողակաթն ի [նոր] քաղաք (այն է Վաղարշապատ)»[62]։

Հովհաննես եպիսկ. Շահխաթունյանը եզրակացնում է, թե այս տողերը վերաբերում են էջմիածնի վանքին և նշանակում են, թե Ներսես Գ-ն այստեղ «արար... ինչ ինչ նորոգութիւնս»[63], Թորամանյանն էլ շփոթելով Շահխաթունյանի պնդումից, գրում է, թե «վերոհիշյալ «բնորոշ բառերը ցույց կուտան, թե Ներսեսի երկասիրություն համարվելու չափ նոր շինություններ և հավելումներ կատարվեցան անոր ձեռքով»։

Սրան պետք է առարկել, որ «ժողովոց պատմության» մեջ չի գրված, թե Ներսեսն արել է «ինչ ինչ նորոգութիւնս» կամ կառուցել է նոր շինություններ և հավելումներ», այլ պարզ ասված է, թե շինեց սուրբ Շողակաթ եկեղեցին։ Երկրորդ, Ներսեսից քիչ առաջ Կոմիտաս կաթողիկոսն արդեն նորոգել էր էջմիածինը[64]։ Այս նկատի ունենալով՝ Թորամանյանը գրում է. «Արդ, քանի որ ուրիշ մասեր բոլորովին նոր էին՝ կմնա ենթադրել, որ այդ հիշատակությունը կպատկանի ներքուստ սենյակները և արտիդները քանդվելուն և արտաքուստ նոր արտիդներ ավելցվելուն»։

Այս տողերի առթած տարակույսը ոչ միայն չի թուլանում, այլ տասնապատիկ ավելանում է, երբ քիչ հետո Թորամանյանը հանկարծակի նահանջում է գրելով. «Պետք է խոստովանիմ սակայն, որ դատելով Ներսեսի Զվարթնոցի մասին ունեցած ճաշակեն՝ էջմիածնի վրա չեմ գտներ այնպիսի մի մեծադրդ, որ Զվարթնոցը և կամ Ներսեսի ճաշակը հիշեցնե. թերևս գտնվին Ներսեսի ուրիշ երկասիրություններու վրա այս կասկածը փարատող նմուշներ, որոնք տակավին ինձի չեն հայտնված տեսնել»[65]։

Կասկածը փարատվում է հեշտությամբ, երբ մի բոպե կուահում ենք, որ խոսքը վերաբերում է ոչ թե էջմիածնին, այլ Զվարթնոցին, որը նույնպես Լուսավորչի տեսլյան թելադրությամբ էր շինված։

«Շինեաց անդ և եկեղեցի մի յանուն երկնաւոր Զուարթնոցն, որոց երևեալ ի տեսլեան Սրբոյն Գրիգորի բազմութիւն երկնաւոր զորացն»[66], իսկ Լուսավորչի տեսիլը հենց Շողակաթ է կոչվում։ Հին Տոնացույցի մեջ տոնը կոչվում է «Շարաթ, Շողակաթին տեսլեան Սրբոյն Գրիգորի»[67]։ Ըստ Հայկազյան Նոր Բառգրքի՝ «Շողակաթ=կաթուն կամ հոսուն շողոց լուսոյ ի տեղի էջմիածնի ի տեսլեան Լուսաւորչին»[68]։ Ըստ այսմ «ժողովոց պատմութիւն»-ում հիշված Շողակաթ եկե-

61 Սիմէոն Ապարանցի, «Վիպասանութիւն...», Վաղարշապատ, 1870 թ., էջ 128։

62 Հովհաննես եպիսկ. Շահխաթունյան, «Ստորագրութիւն էջմիածնի», հատ. Ա, էջ 22։— Թ. Թորամանյան, «Էջմիածնի տաճարը», «Ազգագրական հանդես», գիրք XIX, 1910 թ., էջ 181։

63 Հովհաննես եպիսկ. Շահխաթունյան, «Ստորագրութիւն էջմիածնի», հատ. Ա, էջ 23։

64 Դրասխանակերտցի, էջ 75։

65 Թ. Թորամանյան, «Էջմիածնի տաճարը», «Ազգագրական հանդես», գիրք XIX, 1910 թ., էջ 181։

66 «Սեբէոս», էջ 192։

67 Հովհաննես եպիսկ. Շահխաթունյան, «Ստորագրութիւն էջմիածնի», հատ. Ա, էջ 16։

68 «Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի», հատ. Բ, էջ 438։

ղեցին, որ շինել է Ներսես Գ-ը, ոչ թե Էջմիածինն է, որ նա չէր շինել և որի վրա նրա ճաշակի մասին վկայող հետքերը դժվարանում է գտնել հայ հարաբերակցության պատմագիրը, այլ Զվարթնոցն է, տեսլյան կամ Շողակաթի քարեղեն կոթողը։

Թող մեզ չշփոթեցնի այն, որ ասված է, թե Շողակաթը նա շինեց Նոր քաղաքում կամ Վաղարշապատում։ Այս չպետք է հասկանալ, տառացի, թե շինվել է Վաղարշապատի հետ միասին, այլ մոտերքը։ Տեղանվան ճիշտ ու ճիշտ նույնպիսի գործածության դեպք գտնում ենք ԺԹ դարում՝ ոչ թե մի համբակի կամ տգետի, այլ մեծանուն գիտնականի գրչի տակից եկած։ Քերովբե Պատկանյանը ծանոթություն դնելով Ղևոնդ պատմագրի այն տողերի համար, որտեղ հիշատակվում է «քահանայապետն Ներսէս՝ Շինող Սրբոյն Գրիգորի»[69], գրում է տառացի. «Այս խոսքերն այն եկեղեցու մասին են, որը նա շինեց Վաղարշապատ քաղաքում»[70]։

Պատկանյանն ասում է, թե Ներսեսը Զվարթնոցը կամ Գրիգորը շինել է Վաղարշապատ քաղաքում, և մենք չենք նեղրակացնում, թե նրա խոսքը պետք է տառացի իբրև Վաղարշապատի ներսում շինած հասկանալ, նույն կերպ էլ հարկավոր է «Ժողովոց պատմութիւն»-ում հիշված Շողակաթի Նոր քաղաքում կամ Վաղարշապատում շինված լինելու լայն առումով հասկանալ, և այսպիսով ակներև կլինի, որ տվյալ դեպքում Շողակաթ կոչված է ոչ թե Էջմիածինը, այլ Զվարթնոցը[71]։

Վերջում պետք է դիտենք, որ մինչև այժմ գործածական Զվարթնոց ու Ս. Գրիգոր անունները համարվել են տարբեր անուններ, և Զվարթնոցի փոխարեն Ս. Գրիգոր ասելը համարվել է է դարում Լուսավորչի մասունքների տեղափոխության ու Ներսեսաշեն եկեղեցում դնելու հետևանք։

Մեր կարծիքն այլ է։ Զվարթնոց ու Ս. Գրիգոր տարբեր անուններ չեն, այլ նույն անունն են մեկը հայերեն և մյուսը՝ հունարեն։ Հայ բանասիրության դյուխ-գործոցը՝ Նոր Հայկազյան Բառգիրքը փառավոր կովանոներ է տալիս այս թեզիսը հաստատելու։

Այս բառգրքում հայերեն «զուարթանամ» բառի դիմաց ի շարս այլ հունարեն բառերի դրված է նաև ՀՐՊՂՀՕՐԷՈ՝ «արթուն և զգաստ լինել» նշանակությամբ։ «Զուարթութիւն» բառի դիմաց դրված է ՀՐՊՂՀՕՐՊՏՍ՝ «հսկողութիւն, արթնութիւն մտաց» իմաստով, «արթնությամբ կամ զուարթությամբ» առումով՝ ՀՐՊՂՀՕՐՕՏԱՍ և վերջապես «զուարթուն» զուարթունք» բառերի դիմաց, որոնք նշանակում են «անուն հոգեղէն պաշտօնէից Աստուծոյ, այսինքն հրեշտակաց»՝ ՅՐՊՂՀՕՐԱՎ[72]։ Հունարեն այս բառերի հիմքն է ՀՐՊՂՀՕՐ բառը, սրա Ղ-ի Ւ-ի հնչյունի փոխվելը, որ սովորական ու հանրածանոթ երևույթ է, կտա ԳՐԻԳՕՐ=հայերեն ճիշտ Գրիգոր, և ուրիշ ոչինչ։

Լուսավորչին նվիրված մի հին եկեղեցական երգի մեջ՝ դիմում անելով Գրիգոր Պարթևին ասված է.

«Զարթիր, Զուարթուն անուն, էլ զարթո
զթմրեալսն ի մեղաց.
Արի, որ Ենչեսդ ի գերի, լուսատու լիցի քեզ
Քրիստոս»[73]։

Այս երգի «Զուարթուն» բառը հասկացվել է իբրև «Լուսավորչի Զվարթուն այլաբանական անուն»[74]։

Այնինչ, ինչպես տեսանք, «Զուարթուն» նույնն է, ինչ որ Գրիգոր[75] և ուրեմն Զվարթնոց կամ Զվարթանոց եկեղեցի ու Ս. Գրիգոր եկեղեցի հայերեն և հունարեն փոփոխակներ են լոկ միևնույն գաղափարի արտահայտության։

60 «Ղևոնդ», Դ, էջ 14։

70 Հմմտ. «Ղևոնդ», ծանոթագրություններ, էջ 178։

71 Հենց այստեղ էլ ասենք, որ Շողակաթ—Զվարթնոց թեզիսը հիմք ընդունելով նոր կերպ է բացատրվում Ասողիկի մի հատվածն էլ։ Այս պատմիչը գրում է, թե Աբրահամ ամիրան «եկեալ դՀռոմոսի վանքն այրեաց և զփրկական նշանն, որ ի վերայ Սրբոյ Շողակաթի գմբէթին կանգնեալ էր, ճապանօք ի վայր բերէր ի նՀԱ (982—983) թուականին» (Ասողիկ, էջ 188—189)։ Եթե ընդունենք, որ այս էլ վերաբերում է Զվարթնոցին և ոչ թե Էջմիածնին, ինչպես կարծվում է (Հովհաննես եպիսկ. Շահխաթունյան. «Մատենագրութիւն Էջմիածնի», հատ. Ա, էջ 16) ապա, վերջնիս պատմության համար ստանում ենք մի կարևոր տեղեկություն, թե այն դեռ կանգուն էր 982—983 թվականներին, և ուրեմն նրա փլուզման ժամանակամիջոցը սահմանները, որ առաջ դրվում էր Դրասխանակերտցու վերջին տարիներից (925—930) մինչև 1000—1001 թվականը (Մեսրոպ վրդ., «Էջմիածին և հայոց հնագույն եկեղեցիները», էջ 34) պետք է նեղացնել և դնել հայոց ՆՀԱ և Ռ թվականների արանքում (982—1000)։ (Հմմտ. «Ասողիկ», էջ 282)։

72 «Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի», հատ. Ա, էջ 743—744։

73 Լ. Ղ. Ալիշան. «Սրբազն լուսաւորութեան Հայոց», «Բազմավէպ», 1900 թ., էջ 404—405։— Հմմտ. Մեսրոպ վրդ., էջ 30։

74 Մեսրոպ վրդ., «Էջմիածին և հայոց հնագույն եկեղեցիները», էջ 20։

75 Հմմտ. վեմ= ΠΕΤΡΟΣ, Պետրոս (առաքյալ)։

(Շարունակելի)

Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ

ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՅԱՆ

աղանդավոր երգահան և խմբավար-մանկավարժ Մակար Եկմալյանը հայ իրականության մեջ որպես ստեղծագործող և երաժշտական-հասարակական եռանդուն գործիչ հանդես է եկել ԺԹ դարի վերջին քառորդում։ Հայկական երաժշտական ազգային արվեստի զարգացման պատմության մեջ այդ այն ժամանակաշրջանն էր, երբ հայ շատ խմբավարների, երաժիշտների, կատարողների և ստեղծագործողների ջանքերը ուղղված էին հայկական ժողովրդական ու հոգևոր երգերը ներդաշնակելու և բազմաձայն երգեցողությունը ժողովրդի մեջ տարածելու գովելի նպատակին։ Մյուս կողմից, այդ այն ժամանակաշրջանն էր, երբ մեր ժողովուրդը օրեցօր ավելի ու ավելի սուր կերպով էր զգում ազգային երաժշտության գիտակ և բարձրագույն կրթություն ստացած մասնագետ երաժիշտների պակասը։

Ստեղծագործական և խմբավարական-մանկավարժական բեղուն գործունեությամբ հանդես գալով հենց այս ժամանակաշրջանում, երգահան Մ. Եկմալյանը Հայ եկեղեցուն և ժողովրդին մատուցած իր ծառայություններով վաստակեց հայկական երաժշտության անդրանիկ մշակներից, ինչպես նաև նրա կարկառուն ներկայացուցիչներից մեկը լինելու համբավը։

Սակայն, դժբախտաբար, դեռևս ինչպես հարկն է ուսումասիրված չէ Եկմալյանի կյանքն ու ստեղծագործական աշխատանքը։

Օգտվելով նախասովետական և սովետական շրջանի հայկական պարբերական մամուլից, ինչպես նաև Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստների պատմության և տեսության բաժնում գտնվող Եկմալյանի արխիվից (որը դեռևս սպասում է վերջնական դասավորման, գիտական նկարագրության և լիակատար ուսումնասիրության), ցանկանում ենք «էջմիածին» ամսագրի ընթերցողներին այս հոդվածաշարքով ներկայացնել կոմպոզիտոր Մ. Եկմալյանի կյանքին ու ստեղծագործության նվիրված այս համեստ ուսումնասիրության փորձը։

***

Մակար Եկմալյանի պապը Վաղարշապատ էր ապաստանել իր միակ որդու՝ Գրիգորի հետ, Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի շրջանում գտնվող հայաբնակ Եկմալ գյուղի ավերումից հետո, ԺԹ դարի առաջին կեսին։ Նրա որդին՝ «Եկմալի Գրիգորը» (ինչպես անվանում էին նրան վաղարշապատցիները) հորից ու մորից որբացած, սկսում է բանվորություն անել ապրուստը հայթայթելու համար, և մի համեստ տնտեսություն է ստեղծում։ Հետո ամուսնանում է և ունենում երեխաներ՝ երկու տղա և մեկ աղջիկ։ Իսկ 1856 թվականի փետրվարի 2-ին, լույս աշխարհ է գալիս ապագա ականավոր կոմպոզիտոր Մակար Եկմալյանը։

Եկմալյանի մանկական տարիների կյանքից այն է միայն մեզ հայտնի, որ քանի հա-

սակ էր առնում փոքրիկ Մակարը՝ գգալուն ու հրազկոտ մի երեխա, այնքան ավելի վառ կերպով էին դրսևորվում նրա սերն ու հետաքրքրությունը ընդհանրապես դեպի գրելն ու կարդալը և մասնավորապես դեպի երգեցողությունն ու երաժշտությունը։ Նրա հայրը, սակայն, չէր էլ համաձայնվում Մակարին դպրոց ուղարկելու մասին մտածել, որովհետև ուսման վարձը պիտի չկարողանար վճարել։ Մակար Եկմալյանի երկու եղբայրները դպրոցից դուրս էին արդեն, արհեստ սովորելու համար։ Հերթը հասնում էր Մակարին, բայց հայրը վարանում էր։ Չէ՞ որ Մակարը սովորելու չափ ցանկություն և ընդունակություններ ուներ։

Եվ չգիտենք, թե ինչ բախտ կվիճակվեր Մակարին, եթե Եկմալյանների ունևոր և բարեսիրտ հարևաններից մեկը հանձն չառներ նրան իր ծախքով գյուղի ծխական դպրոցը ընդունել տալը։ Դպրոցում ի հայտ է գալիս Մակարի երաժշտական ձիրքը։ Նկատում են նրա գեղեցիկ ձայնը և խորհուրդ տալիս՝ եկեղեցում երգել։ Փոքրիկ Մակարը կիրակի օրերը եկեղեցում մեներգում է, մանկական թովիչ ձայնով շարժելով հավատացյալների սիրտը։

Այսպիսով՝ Եկմալյանի մանկական տարիների երաժշտական առաջին ապավորությունները կապվում են հայկական հոգևոր

ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՅԱՆ

հնագարյան մեղեդիների լուսապայծառ խորհրդին։

Ապա մեծ դժվարություններով Մակարը ընդունվում է Էջմիածնի ժառանգավորաց դպրոցը։ Մանավանդ Մակարի հորաքույրը ջանք չի խնայում այդ բանին հասնելու համար, համոզված լինելով, որ դրանով կլուծվի Եկմալյանի ապագայի հարցը։

Վերջապես Մակար Եկմալյանը, Էջմիածնի Սինոդի պրոկուրորի պաշտոնակատար բժիշկ Կարապետ Վասակյանի միջնորդությամբ, ըն-

գունվում է ժառանգավորաց դպրոցը։ Այս տեղ նա հնարավորություն է ունենում իր ժամանակի համար ընդհանուր բարձր կրթություն ստանալու, դաստիարակվելով ազգային հարազատ և հարուստ միջավայրում։ Հետագա տարիներում պատանու բնավորության և նկարագրի զարգացման ընթացքը ցույց է տալիս, որ լռակյաց, քիչ քաշվող, ինքնամփոփ բայց և ժրաջան Եկմալյանը էջմիածնում գտել է իր խառնվածքի և բնավորության հարազատ շրջապատ։ Եվ որ ամենակարևորն է, ժառանգավորաց դպրոցում զարգանում են նրա երաժշտական ընդունակությունները։ Եկմալյանը ավելի ու ավելի է տարվում երգեցողությամբ և երաժշտությամբ։ Այս տեսակետից նրա ինքնարուխ ձգտումը զարգացման բարենպաստ պայմաններ է գտնում Գևորգ Դ երաժշտասեր կաթողիկոսի Հայրապետական Գահ բարձրանալուց հետո։ Գևորգ Դ-ը, լինելով հայկական երաժշտական մշակույթի և հնադարյան ավանդությունների պահպանման նախանձախնդիրներից մեկը, նախաձեռնում է հայկական հոգևոր մեղեդիները ձայնագրել տալու աշխատանքին, փրկելու համար դրանք վերահաս կորստից, ինչպես նաև երգողների կամայականություններից։ Այս նպատակով նա 1873 թվականին Կոստանդնուպոլսից էջմիածին է հրավիրում հայ հմուտ շարականագետ և երաժիշտ-տեսաբան Նիկողայոս Թաշճյանին, պարտավորեցնելով նրան 1873—1874 ուսումնական տարվա ընթացքում ժառանգավորաց դպրոցի աշակերտներին հայկական ձայնագրությունը սովորեցնել, կովկասահայության մեջ այն տարածելու ընդունակ 25—30 սաներ պատրաստել, Պատարագը, ժամագիրքը, Շարականը ձայնագրել և հայկական ձայնագրության մի դասագիրք գրել։ Դրժվարին և մեծ գործ։ Սակայն, կրակոտ Թաշճյանը Կոստանդնուպոլսում թողնելով իր ընտանիքը, շտապում է գալ էջմիածին։ Օգտվելով այս առիթից, Եկմալյանը, Ն. Թաշճյանի ղեկավարությամբ, կատարելապես խորանում է հայկական երաժշտության տեսության մեջ և հայկական ձայնագրության սկզբունքներին և իր հերթին մեծ օժանդակություն ցույց տալիս վերոհիշյալ պարտավորություններով խիստ ծանրաբեռնված իր ուսուցչին, մանավանդ մեծածավալ Շարականի և ժամագրքի ձայնագրման գործում։ 1873—1874 ուսումնական տարվա վերջին, Ն. Թաշճյանն իր ստանձնած պարտավորությունները կատարելուց և հանձնարարված աշխատությունները տպագրության տալուց հետո վերադառնում է Կոստանդնուպոլիս։

Կասկածից դուրս է, որ Ն. Թաշճյանի հետ ունեցած պարապմունքների, ինչպես նաև նրա անմիջական օգնականն ու աշխատակիցը լինելու շնորհիվ, Եկմալյանը հայկական երաժշտության տեսության և հոգևոր մեղեդիների ուսումնասիրության բնագավառում ձեռք բերեց խոր և մնայուն գիտելիքներ։ Իր ուսուցչի մեկնելուց հետո Մակարը էջմիածնում վայելում էր «Թաշճյանի ամենաառաջադեմ աշակերտը» լինելու համբավը։ Եվ պատահական չէր, որ մի քանի տարի հետո Պատարագի ձայնագրությունը վերանայելու և այն երկրորդ տպագրության պատրաստելու աշխատանքը կաթողիկոսը հանձնարարեց Մ. Եկմալյանին։

1877 թվականին Մ. Եկմալյանը փայլուն կերպով ավարտում է Գևորգյան ճեմարանը (որը հիմնադրվել էր 2—3 տարի առաջ) և նույն թվականին նշանակվում է ճեմարանի երաժշտության դասատու։ Երկու տարի անց՝ ի նկատի ունենալով երիտասարդ երաժշտի ընդունակությունները, ջանասիրությունը և եկեղեցուն մատուցած ծառայությունները, Գևորգ Դ-ը, էջմիածնի հաշվին նրան ուղարկում է Պետերբուրգ՝ երաժշտանոցում մասնագիտական բարձրագույն կրթություն ստանալու համար։

Եկմալյանը էջմիածնից մեկնում է Պետերբուրգ որպես հայկական եկեղեցական երաժշտության, նրա ազգային առանձնահատկություններին ու հայկական ձայնագրության սկզբունքներին գիտակ, մանկավարժական որոշակի փորձ ձեռք բերած երաժիշտ, որը ականատեսն ու մասնակիցն էր եղել մեր հոգևոր երաժշտության զարգացման պատմության մեջ շրջադարձային նշանակություն ունեցող մի շարժման՝ դարերի խորքից ավանդաբար, բերնից բերան մեզ հասած հոգեղմայլ երգերի ու մեղեդիների ձայնագրման ու տպագրության մեծ գործին։ Որպես մարդ՝ խստակյաց, սակավախոս, ի՛ր հարուստ ներաշխարհով ապրող, բայց և ոսման ու գիտելիքների ծարավի, ժրաջան Եկմալյանը նկարագրի ու բնավորության հիմնական կողմերով արդեն կազմավորված մի երիտասարդ երաժիշտ էր։

1879 թվականի ամռանը Պետերբուրգում Մ. Եկլամյանը ընդունվում է կոնսերվատորիայի երաժշտական կոմպոզիցիայի տեսության բաժինը։ Այստեղ Եկմալյանը Ն. Ռիմսկի-Կորսակովի, Ն. Սոլովյովի և Ցու. Իոդանսենի ղեկավարությամբ եռանդուն աշխատանք է տանում եվրոպական երաժշտության տեսության և կոմպոզիտորական տեխնիկային տիրապետելու տեսակետից։ Նա արտադասարանական պարապմունքների շնորհիվ որոշ չափով տիրապետում է նաև

ջութակին, որը, ինչպես և դաշնամուրը, դառնում է կոմպոզիտորի կյանքի անբաժան ընկերը։ Եկմալյանը իր ջանասիրությամբ արժանանում է ոչ միայն իր անմիջական դասատուների (մասնավորապես Ռիմսկի-Կորսակովի), այլև կոնսերվատորիայի դիրեկտոր Ա. Ռուբինշտեյնի և նույնիսկ Պետերբուրգի կոնսերվատորիայում դեպքից դեպք միայն երևացող Չայկովսկու ուշադրության։

Հաջողությամբ ավարտելով կոնսերվատորիան, և տրպես դիպլոմային աշխատությունն «Վարդը» օպերա-կանտատան ներկայացնելուց հետո, 1888 թվականին Մ. Եկմալյանը ստանում է «ազատ արվեստագիտ»-ի վկայական։

Եկմալյանը Պետերբուրգի երաժշտանոցում սովորում է ինը տարի (1879—1888 թ. թ.)։ Նրա «Վարդը» օպերա-կանտատայից մի քանի հատվածներ են միայն հասել մեզ։ Բայց այդ մի քանի հատվածներից էլ երևում է, որ կոմպոզիտորը, կոնսերվատորիան ավարտելիս, ձեռք էր բերել սիմֆոնիկ նվագախմբի, մարդկային ձայնի (մենակատարների) և երգչախմբի գեղարվեստական-արտահայտչական հնարավորություններից հմտորեն օգտվելու իր կարողությունը։ Պետք է ավելացնել և այն, որ Պետերբուրգը, որպես մշակույթի մեծ կենտրոն, մեծ չափով նպաստել էր Մ. Եկմալյանի ընդհանուր մտահորիզոնի հետագա ընդարձակմանը։ Եկմալյանի անհատական խառնվածքի, նկարագրի և բնավորության մեջ, սակայն, Պետերբուրգի աշխարհիկ կյանքը ոչ մի հիմնական փոփոխություն չմտցրեց։ Այդ տեսակետից նա մնաց այն՝ ինչ էր էջմիածնի վանքից դուրս գալու ժամանակ։

Այսպես վերջանում են Մ. Եկմալյանի ուսման տարիները։ Դա կոմպոզիտորի կյանքի այն ժամանակաշրջանն է, որն ընթացել է կարծես ուղիղ ու հարթ ճանապարհով։ Այդ տարիներին հատուկ դժվարությունները հաղթահարվեցին շնորհիվ Եկմալյանի աշխատասիրության և տոկունության։ Բայց իր կյանքի երկրորդ՝ ինքնուրույն աշխատանքի և ստեղծագործության շրջանում, Եկմալյանը կանգնում է լուրջ դժվարությունների առաջ։ Մշտապես բարի, նրբազգաց, վերին աստիճանի ջանասեր, սկզբունքի տեր և իր անձի նկատմամբ խստապահանջ, ինքնամփոփ, մենակյաց, ի՛ր մտքերի, ի՛ր արվեստի սեփական աշխարհի մեջ խորասուզված, «կյանքից կտրված», բայց միշտ ուղղամի՛տ արվեստագետի խառնվածքի տեր Եկմալյանը կյանքում շատ դառնություններ է կրել։

Երաժշտանոցն ավարտելուց հետո, Եկմալյանը Պետերբուրգում սկսում է իր գործունեությունը։ Տեղի հայկական եկեղեցական խորհրդի հանձնարարությամբ երգեցիկ խումբ է կազմակերպում և միաժամանակ աշխատում է «Երգեցողությունք Ս. Պատարագի» արժեքավոր ստեղծագործության վրա։ Նրա առաջ ունենալով էջմիածնում տպագրված երկու Պատարագները (1874 և 1878 թ. թ.)։ Նա ձեռնամուխ է լինում մեղեդիների ընտրության, մշակման, դասավորման և ապա դրանց եռաձայն ներդաշնակության գործին։ Ըստ երևույթին, Եկմալյանը այդ մասին մտածում, գուցե և այդ ուղղությամբ նախապատրաստական որոշ աշխատանքներ էր կատարում դեռևս կոնսերվատորիայում սովորելու տարիներից, կամ նույնիսկ՝ դեռևս էջմիածնում պաշտոնավարելու ժամանակներից։ Ոչ մի կերպ չի կարելի բացառել նաև այն, որ Գևորգ Դ Կաթողիկոսն էր, որ Եկմալյանին ներշնչեց, երաժշտական բարձրագույն կրթություն ստանալուց հետո, Հայ Եկեղեցու Պատարագը մշակելու և այն ներդաշնակելու միտքը։ Եկմալյանը Պատարագի վրա սկսում է աշխատել մեծ եռանդով և սիրով։ Իր իսկ կազմակերպած երգեցիկ խումբը փորձնական նպատակների համար հիանալի ծառայություն է մատուցում կոմպոզիտորին։ Փորձնական բազմաթիվ կատարումների, այլևայլ սրբագրությունների, ճշգրտումների, վերանայումների ու փոփոխությունների բովից անցնելով Եկմալյանը կատարելագործում է Պատարագի եռաձայն ներդաշնակված երգեցողությունը։ Առաջինը Պետերբուրգի հայկական եկեղեցում երգվում են Եկմալյանի Պատարագից առանձին կտորներ, մեծ ոգևորություն առաջացնելով տեղի հայ հասարակության մեջ։ Պետերբուրգում ավարտվում է «Երգեցողությունք Ս. Պատարագի» եռաձայն ներդաշնակությունը։ Կոմպոզիտորը անշուշտ մի կողմից գոհ է իր աշխատանքի արդյունքներից։ Սակայն, երևան տանջում է ներքին հայրենասիրական մի զգացում։ Նա ձգտում է դեպի մի հայաշատ կենտրոն՝ ինչպիսին էր Թիֆլիսը։ Այդ էլ է հաջողվում Եկմալյանին։ Ստեփան Մալխասյանը Պետերբուրգի հայկական եկեղեցում ներդաշնակված Պատարագը մի քանի անգամ լսելուց հետո, հիացած, շտապում է ծանոթանալ կոմպոզիտորի հետ և այդ օրվանից հայկական մշակույթի երկու ակնավոր գործիչների միջև հաստատվում է մտերմություն։ Վերադառնալով Թիֆլիս, Մալխասյանը ջերմ խոսքերով է պատմում Եկմալյանի մասին՝ Ներսիսյան դպրոցի այն ժամանակվա տեսուչ Հովհ. Սպենդիարյանին։ Եվ 1891 թվականին, Մ. Եկմալյանը Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում որպես երա-

ժրշտության ուսուցիչ և երգեցիկ խմբի ղեկավար պաշտոնավարելու հրավեր է ստանում։

Թիֆլիսում՝ հատկապես Ներսիսյան դպրանոցում, Եկմալյանի համար սկսվում է գործունեության մի նոր շրջան։ Եկմալյանի պահանջով երաժշտության դասերը բոլոր դասարանների համար լինում են պարտադիր, շաբաթական երկու ժամ։ Իսկ երգեցիկ խմբի պարապմունքի ժամերը բարձրանում են շաբաթական վեց ժամի։ Մ. Եկմալյանը Ներսիսյան դպրանոցում առաջին անգամ երաժշտության ուսուցումը սկսում է եվրոպական ձայնագրության սկզբունքների դասավանդումից։ Միաժամանակ նա ձեռնամուխ է լինում Պատարագի քառաձայն ներդաշնակության աշխատանքներին։ Ներսիսյանի սաները սիրով և ոգևորությամբ են ընդունում այս նախաձեռնությունները։ Իր կատարումով աչքի է ընկնում դպրոցի երգեցիկ խումբը։

Ներսիսյան դպրանոցում ամեն ինչ հարթ ու հավասար չի ընթանում։ Հատկապես հին ուսուցչական կազմը, առաջին իսկ օրերից հանդես է բերում Եկմալյանի նկատմամբ ոչ մի բանով չարդարացված մի սառնություն, որը կամաց-կամաց վեր է ածվում լարվածության, իսկ հետագայում նույնիսկ թշնամության, մեծ վիշտ պատճառելով զգայուն արվեստագետին։

Եկմալյանի մոտիկ ընկեր և դպրոցի վարչության անդամ Ստեփան Մալխասյանը ամեն կերպ աշխատում էր թյուրիմացությունները փարատել ու դժվարությունները հարթել, և կոմպոզիտորին հնարավորություն տալ շարունակելու իր գործը։ Սակայն ի վերջո նա էլ չկարողացավ կասեցնել Եկմալյանի դեմ սկսված հալածանքը, և Ներսիսյանի ուսուցչական անձնակազմին և նոր տեսչին հաջողվեց հեռացնել Եկմալյանին։ Բայց սեփական արժանիքների գիտակցությամբ հպարտ Եկմալյանը կյանքի բազմաթիվ ու բազմապիսի հարվածներին միշտ ու ամեն դեպքում միայն մեկ ձևով է փորձում հակազդել. այն է՝ ինքն իր մեջ ամփոփվելով, խորասուզվել ստեղծագործական աշխատանքի մեջ։ Այս ժամանակաշրջանում էլ նրան տիսնում ենք գրեթե ամբողջովին կլանված պատարագի քառաձայն ներդաշնակության աշխատանքներով։ Սուրբ պատարագի երգերից «Հայր մերը», «Գոհանամք»-ը, «Օրհնեալ է Աստուածը» մեծ տպավորություն են թողնում ժողովրդի վրա և Եկմալյանի համբավը աճում է ամեն տեղ։

Ի դեպ, ավելորդ չի լինի նշել, որ վանքի մայր տաճարում Եկմալյանի երգչախումբը պատարագի քառաձայն ներդաշնակություն ունեցող համարները կատարում էր Վրաստանի և Իմերեթի հայոց թեմական առաջնորդ՝ Գեորգ արքեպիսկոպոս Սուրենյանի կողմնակի թույլտվությամբ միայն, որովհետև բազմաձայնությունը հայոց եկեղեցիներում դեռ պաշտոնապես ներմուծված չէր այդ ժամանակ։

Ավարտելով «Երգեցողություն Ս. Պատարագի» քառաձայն ներդաշնակությունն էլ, Եկմալյանը, 1893 թվականի հունվարին, մեկնում է Պետերբուրգ՝ երաժշտանոցի գեղարվեստական խորհրդի, ինչպես նաև Արքունական երաժշտական կապելայի առաջնություն հանձնելու համար տարինի տքնաջան աշխատանքից։ Պետերբուրգից Եկմալյանը վերադառնում է հաղթական և ոգևորված։ Շարունակելով իր գործը, նա այժմ իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացնում է երգչախմբի գեղարվեստական-կատարողական մակարդակը բարձրացնելու վրա։ Հետաքրքիր է նշել այն, որ Եկմալյանը երգչախմբի հետ շաբաթական վեց ժամ պարապելուց հետո, եկեղեցում կիրակնօրյա երգեցողության ընթացքում խումբը ինքը չէր ղեկավարում։ Հասարակության մեջ կանգնած, մեծ ուշադրությամբ հետևում էր խմբի կատարման և նշում սխալները։ Եվ պատահական չէ, որ նա մեկ-մեկ, հենց եկեղեցում հանդիմանում էր և՛ խմբավարին և՛ խմբի անդամներին։ Նա ձգտում էր կատարողական արվեստի անթերի բարձրության և սիրով ու մեծ համբերատարությամբ էր սովորեցնում աշակերտներին երգի նրբերանգների կատարման և ինտոնացիոն մաքրության պահպանման գաղտնիքները։

Հետագայում Եկմալյանի երգեցիկ խումբը մեծ համբավի հասավ։ Խումբը փայլում էր նաև իր մենակատարներով։ Դրանցից Արմենակ Շահմուրադյանը, Տիգրան Նալբանդյանը, Ներսես Շահմամյանը և ուրիշներ, հետագայում Մոսկվայի և Պետերբուրգի կոնսերվատորիաներում սովորելով, դարձան անվանի երգիչներ։ Մակար Եկմալյանի գործնական խորհուրդներից և ցուցումներից մեծապես օգտվելով, հետագայում իրենց կատարողական, խմբավարական և ստեղծագործական բեղուն գործունեությամբ հալ իրականության մեջ այժմ են ընկել նրա այս շրջանի աշակերտներ՝ Մ. Աղայանը, Ա. Մանուկյանը և Ա. Մայիլյանը։ Կոմպոզիտորի մոտ երաժշտության տեսության դասեր վերցնելու և նրա խմբավարական արվեստը

ուսումնասիրելու են գալիս նաև ապագա կարկառուն կոմպոզիտորներ Արմեն Տիգրանյանը և Կոմիտաս վարդապետը։

Վրաստանի առաջնորդ գերաշնորհ Տ. Գեվորգ արքեպիսկոպոս Աուրենյանցի մեջնորդության վրա, Խրիմյան Հայրիկը, 1895 թվականի հունիսի 7-ին, հայրապետական կոնդակով թույլատրում է Եկմալյանի Պատարագի տպագրությունը և Հայ Եկեղեցում նրա գործածությունը։

Այսպիսով, սուրբ պատարագի բազմաձայն կատարումը պաշտոնապես թույլատրվում է հայ եկեղեցիներում։ Դա պատմական նշանակություն ունեցող երևույթ էր ազգային եկեղեցական երաժշտության զարգացման գործում։

Մնում էր մտածել Պատարագի տպագրության մասին։ Այս հարցում նույնպես Եկմալյանին օգնության է հասնում Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցը, հարթելով տնտեսական մի շարք դժվարություններ։

Եվ ահա, շնորհիվ ձեռք առնված միջոցների, Եկմալյանի ձեռագրությունք Ս. Պատարագն» աշխատությունը լույս է տեսնում Լայպցիգում 1896 թվականին։ Դա Եկմալյանի տարիների քրտնաջան աշխատանքի և համառ կամքի հաղթանակն էր։ Ուրախ էին Եկմալյանը և հայ նրաժշտասեր հասարակությունը։ Կային և դժգոհներ այն բանից, որ Պատարագը եվրոպական ձայնանիշներով էր տպագրվել. այդ նրանք համարում էին սրբապղծություն։ Պատարագի տպագրության առթիվ, հայկական պարբերական մամուլում, ի պաշտպանություն Եկմալյանի, հանդես են եկել Ք. Կարա-Մուրզան, Ռ. Ղորղանյանը և Կոմիտաս վարդապետը։

Եկմալյանի Պատարագը տպագրվելուց հետո արագորեն տարածվում էր հայաբնակ շատ վայրերում։ Մի քանի տարի անց, էջմիածնի, Բաքվի, Նոր-Նախիջևանի, Աստրախանի, Եկատերինոսլավի, Մոսկվայի, Պետերբուրգի, Սիմֆերոպոլի, Արմավիրի, Գանձակի, Օդեսայի և այլ քաղաքների հայկական եկեղեցիներում արդեն երգվում էր այն։

Պատարագը տպագրության հանձնելուց հետո Եկմալյանն սկսեց աշխատել հոգևոր և ազգային-հայրենասիրական այլևայլ երգերի հավաքման ու ներդաշնակման վրա, և այդ բնագավառում նա գգայի հաջողությունների հասավ։ Բայց նրան տանջում էր արվեստի մնայուն գործ ստեղծելու ներքին մի անհաղթահարելի պահանջ։ Իհարկե, այդ տեսակետից Եկմալյանը իր Պատարագով էր մխիթարվում։ Բայց այդ քիչ էր։ Եկմալյանն ուներ ժողովրդական և աշուղական երգերի դրառման հետ կապված ստեղծագործական մեծ ծրագրեր։ Նրա բազմաթիվ ձեռագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կոմպոզիտորը ստեղծագործական որոնումների մի դժվարին ուղի է անցել ժողովրդական երգերի մշակման բնագավառում, չկարողանալով սակայն հասնել իր երազած բարձունքներին, չկատարելով իր մեծ առաքելությունն այդ բնագավառում։

Բացի արտաքին դժվարություններից, Եկմալյանն ստեղծագործում էր դանդաղ, երկարատև երկունքով։ Կոմպոզիտորի համար մեծ, բարդ խնդիր էր նաև ներդաշնակության եվրոպական սկզբունքները հայկական ժողովրդական երգերի ազգային առանձնահատկություններին պատշաճեցնելու հարցը։ Վերջապես, Եկմալյանին խանգարում էր իր ապրած միջավայրը, որը նրան չէր հասկանում և գնահատում, արագացնելով նրա առողջության քայքայումն ու մահը։ Սրանով է բացատրվում այն հանգամանքը, որ 1896-ից մինչև 1902 թվականը ստեղծագործական համառ ճիգեր ի գործ դրած Եկմալյանը, Պատարագի հրատարակությունից հետո, արվեստի մնայուն գործ չտվեց։ Այդ տարիները նրա համար եղան ստեղծագործական ամլության տարիներ, երբ նկատելի կերպով փոխվեց Եկմալյանը, դարձավ ցրային, դյուրաբորբոք, մռայլ ու լուռ։ Օրեցօր հյուծվում էր կոմպոզիտորը։ Հոգեպես նա վաղուց հանձնվել էր արգեն մեյամաղձոտության։ Նրան տանջում էին գլխավորապես իր միջավայրի ոչությունը, անտարբերությունը, ինտրիգները։ 1902 թվականի գարնան, ամբողջապես քայքայված առողջության ու հոգեկան ամենածանր տագնաների պայմաններում Մակար Եկմալյանը ստանում է ուղեղային կաթված։

Ինչպե՞ս էր նայում Թիֆլիսի ներսիսյան դպրանոցում Եկմալյանի հանդեպ ցույց տրված տմարդի վերաբերմունքին՝ էջմիածնի հոգևոր քարոզչուն իշխանությունը։ Եկմալյանի հիվանդանալուց հետո Խրիմյանի հրամանով ներսիսյան դարանոցի վարչությունը հեռացնում է ուսումնարանի տեսուչ Ս. Բալաչյանին՝ կոմպոզիտորի ամենակատաղի հակառակորդին։ Բայց արդեն ուշ էր, ձեռքից գնում էր մեծ արվեստագետը։ Ահա թե ինչ է գրում ներսիսյան դպրոցի հոգաբարձական դիվանի գործավար Ռ. Մելիք-Աղամյանը, 1905 թվականին Այնթապցորոյից «Տարազ»-ի խմբագրության ուղարկած իր նամակում Մ. Եկմալյանի հիվանդության մասին. «...Տրագիկական էին Եկմալյանի վերջին տարիները, նա դի-

տեմ այդ իբրև նախկին գործավար ներսիսյան դպրոցի հոգաբարձական դիվանատան (1893—1904)։ Այդ վերջին տարիներում հալածում, շարշարում էին Եկմալյանին, որովհետև հանգուցյալը հանդգնում էր փողոցում գլուխ չտալ այն ժամանակվա դպրոցի ուսումնական մասի «մեծավոր նայելիկներին...»։

Հանգուցյալի պաշտոնակիցները, հյուրանոցներում ժողովներ կազմելով, որոշեցին իսպառ խզել Եկմալյանի հետ հարաբերությունները, այսինքն չճանաչել նրան այլևս ընկեր և պաշտոնակից։

...Էլ չեմ խոսում այն բոթալից անցքի մասին, որ պատահեց հանգուցյալին մի չորեքշաբթի երեկո, հոգաբարձական ժողովում, դպրոցի երգեցիկ խմբի կառավարչի առթիվ. այդ վերջին հարված էր... ուրբաթ օրը Եկմալյանը արդեն խելագարված եկավ բնակարան...։

Վա՜յ ինձ, ինձ էր վիճակված «վերջին տարիներիս» աղետալի գործերը վարել և հոգաբարձական ժողովների օրակարգերը կազմել։ Ես էլ չդիմացա, ստիպվեցա փախչել։

...Չեմ կարող չհիշել հայտնի հոգեկան հիվանդությանց, իմ մոտիկ ազգականի խոսքերը՝ «Թեև Եկմալյանը հիվանդ էր, բայց եթե չլինեին վերջին հարվածները, նա դեռ կապրեր և կգործեր»։

Իսկ Եկմալյանի տարիների աշխատանքի համեստ խնայողությունները յուրացնում է նրա մտերիմ և ընկեր դաշնակահար Հովսեփ Տեր-Դավթյանը։

Գրիգոր Փանյանը Եկմալյանի մահվան հոբելյանին նվիրված իր հոդվածներից մեկում («Ընկերը», 1912 թ. № 14), արտահայտվելով Եկմալյանի տարիների համեստ խնայողության այդպիսի անամոթ յուրացման մասին, գրում է. «...Հայտնի երաժիշտներից մեկը (խոսքն անշուշտ դաշնակահար Հովսեփ Տեր-Դավթյանի մասին է—Ն. Թ.) բարձրացավ ամբիոն և ճառեց, թե Եկմալյանը քաղցած մեռավ..., մինչդեռ իրոք Եկմալյանի հազարները հենց ճառողի որովայնում և գրպանումն էին...»։

1904 թվականի վերջում Եկմալյանը բոլորովին կորցնում է հոգեկան հավասարակշռությունը։ Հիվանդությունը օրեցօր հյուծում է նրան։ Նրա Ադամ եղբայրը հիվանդին տանում է Էջմիածին, հուսալով, որ հայրենի օդն ու ջուրը թերևս կարողանան բուժել նրան, ապա Կարս, Ալեքսանդրապոլ, բայց իզուր։ Նույնիսկ Օդեսա և Խարկով քաղաքների հոգեբուժարաններն ու հայտնի հոգեբույժները օգտակար չեն կարողանում լինել Եկմալյանին։ Հուսահատ Ադամը եղբորը բերում է կրկին Թիֆլիս։ Եկմալյանը գիտակցական կարճատև թոպեների ընթացքում խոսում է միշտ երաժշտության մասին, հոլովելով իր սիրած կոմպոզիտորների անունները։ Ամեն առավոտ վեր կենալիս, իբրև առաջին պարտականություն մաքրում, սրբում է իր սենյակի միակ զարդերը՝ դաշնամուրն ու ջութակը։

Երեք տարվա հոգեկան ծանր, հյուծող հիվանդությունից հետո, 1905 թվականի մարտի 6-ին, Թիֆլիսում իր մահկանացուն է կնքում հայ երաժշտության ամենակարկառուն ներկայացուցիչներից մեկը՝ կոմպոզիտոր Մակար Եկմալյանը, մոռացված բոլորից և լքված ամենքից։ Նա թաղվում է Թիֆլիսի Խոջեվանքի գերեզմանատան մի համեստ անկյունում։

Եկմալյանի մահից հետո նրա հիշատակին փողեր են հավաքվում, «որոնք, ավա՜ղ, չգիտենք թե ո՞ւր մնացին և որի՞ գրպանը մտան»,— գրում է Փանյանը։ Կոմպոզիտորի ձեռագիր աշխատությունները, մեծ մասամբ ժողովրդական և աշուղական երգերի ու պարեղանակների մշակումներ, նրա մահից հետո յուրացվում են ուրիշների կողմից։ Եկմալյանի աշակերտներից Խ. Տեր-Ենոքյանը 1903 թվականին «Մշակ»-ի № 219-ում տպագրված «Մի՞թե չեք ամաչում» հոդվածում գրում է, որ կոմպոզիտորի բազմաթիվ անտիպ ստեղծագործությունները նրա աշակերտների սեփականությունն են դարձել, ավելացնելով, որ անհրաժեշտության դեպքում խմբագրության ինքը կարող է ուղարկել իր մոտ գտնվածները։ 1905 թվականին Կոմիտասին առաջարկում են կարգի բերել ու հրատարակության պատրաստել Եկմալյանի անտիպ ստեղծագործությունները, և Կոմիտասն էլ իր պատրաստակամությունն է հայտնում, սակայն ձեռագրերը նրան չեն հանձնվում։

Ամենատիպիկ խոսքերով ամփոփելով Եկմալյանի կյանքի ողբերգական ուղին, նրա աշակերտ Խ. Տեր-Ենոքյանը հետևյալն է գրում իր հոդվածներից մեկում. «...Այն ո՞ր խելագարը պիտի լինի, որ դեպի Եկմալյանը ցույց տրված մեր վերաբերմունքը տեսնելով՝ գա մեր մեջ գործի, որ կենդանի ժամանակ թուք ու մուր ուտի, ու հետո էլ գժանոցի բաժին դառնա, իսկ մտքի արտադրություններն էլ, տարիների աշխատանքը, գայլերի ու աղվեսների սեփականություն։

(Շարունակելի)



Ա. ԵՐԵՄՅԱՆ

ՄԻՋՆԱԴԱՐԻ ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՅՏ ԴՐՈՇԱԿԱԿԻՐՆԵՐԸ

Ա.

ԵՐԱԺՇՏԱԳԵՏ ՎԱՀՐԱՄ ՔԱՀԱՆԱ

(ԺԵ դար)

Սանահինգերորդ դարի երաժշտական արվեստի պատմության մեջ ցոլանում է տաղանդավոր երաժշտագետ Վահրամ քահանայի պայծառ կերպարը, որ իր գեղարվեստական գործունեությամբ միջնադարի հայ երաժշտության վարպետների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում։

Հայ երաժշտության պատմության դեռ անծանոթ այս վաստակավոր երաժշտապետի կյանքի հիմնական էջերը պատկերելու համար տեղեկություններ, դժբախտաբար, շատ քիչ ունենք։ Այդ տեսակետից մի թանկագին աղբյուր է ԺԵ դարում գրված մի ձեռագիր։ Դա ԺԴ—ԺԵ դարերի նշանավոր մատենագիր, եկեղեցական գործիչ և Հայաստանի ամենահռչակավոր ուսումնական հաստատության՝ Տաթևի[1] համալսարանի ղեկավար Գրիգոր Տաթևացու[2] «Գիրք հարցմանց» խորագրով գրչագիրն է, որի հիշատակարանում վաստակավոր արվեստագետ Վահրամի մասին արձանագրված են կենսագրական սեղմ տողեր, որոնք մասամբ պարզում են նրա կյանքի մի քանի հիմնական էջերը։ Այդ տողերը ցայտուն գաղափար

---

[1] Գորիսից (Սյունյաց երկրում) 28 վերստ հեռու, գեղի հարավ-արևմուտք, Որոտան գետի ահռելի ձորի ծայրին, պատմական Շնհեր, Եռոտ և Հալիձոր գյուղերի դիմաց, կանգնել է Տաթևի հռչակավոր վանքը, որ հիմնվել է 895 թվականին։

[2] Գրիգոր Տաթևացին Տաթևի հռչակավոր համալսարանի գլխավոր սյուներից մեկն է։ Դեռ նրա ղեկավարության շրջանում համալսարանը փայլում է երեք ուսումնական բաժիններով— նկարչական, գրչագրական և երաժշտական։ Մի ուսումնարանում Տաթևացին «ուսուցանէր զնախկին երգիչ վարդապետաց զերաժշտութիւն քաղցրալուր ձայնի եղանակաւ. մինչև անգամ յամենայն երկրէ և ի քաղաքաց եկեալ պարապէին առ նորա։ Եւ ի միումն՝ նկարագրութիւն պատկերահանութեան և զանազան նկարչութիւնս։ Եւ ի միւսումն զներքին և զարտաքին գրեանս։ Տաթևացին հարստացրել է նաև դարաշրջանի հայ մատենագրության էջերը։ Դեռ 1405 թվականին նա հայ դրականության նվիրել է «Մեկնութիւն սաղմոսաց», իսկ 1407 թվականին՝ «Ճարտարգիրք»։ Նույն թվականին նրան տեսնում ենք Սյունյաց աթոռի վրա, որպես տեղապահ։ Նա կրթել և հայ ժողովրդին է նվիրել բազմաթիվ աշակերտներ, որոնցից շատերն ընթացել են իրենց ուսուցչի գծած լուսավոր ճանապարհով։ Նրա գրչին են պատկանում նաև «Լուսաժամուց գծուարիմաց բանից ի մեկնութիւն Գրոցն Ցորայ» (1408 թ.) և ուրիշներ։

 են տալիս նախ նրա երաժշտական պատրաստության մասին։ Նա մեկն է ԺԵ դարի այն լուսավոր դեմքերից, որոնք խորապես հասկացել են, թե հոգևորականը պետք է ո՛չ միայն ընդհանուր զարգացում ունենա, այլև երաժշտական կրթություն, թե ժամերգության անթերի և ճիշտ կատարելու համար, պետք է ծանոթանալ մանրամասնությունների, զանձերի և շարականների էությանը։ Այդ գիտակցությամբ էլ նա խորապես տատամնահիրել է երաժշտական արվեստը և նրա գեղեցկություններն ու նրբությունները։

Թե երաժշտապետը Կիլիկիայի ո՞ր վանքում և ո՞ր տաղանդավոր երաժշտագետի մոտ է ստացել իր երաժշտական կրթությունը, հիշատակարանում, դժբախտաբար, փաստական տվյալներ չկան։ Պարզ է միայն, որ նա իր դարաշրջանում փայլել է իր երաժշտական հմտությամբ և վարպետությամբ։ Դրա ցայտուն ապացույցն այն է, որ նրա անունը ժողովրդի մեջ հռչակվել է որպես «երաժշտապետ պանծալի»։ Իր գեղարվեստական տաղանդով էլ նա առանձին երանգ է տվել ժամանակի երաժշտական մշակույթին։ Այս մասին 1421 թվականին գրված «Գիրք հարցմանց» խորագրով ձեռագրի հիշատակարանում կարդում ենք հետևյալ ուշագրավ տողերը. «Ո՛վ քահանայ Սուրբ Սիոնի և դասք ընթերցողաց, որք հանդիպիք սմա, կարդալով կամ ուրինակերով, յիշեցէք ի Քրիստոս զարբասնեալ և զարժանապատվեալ, ծաղկեալ այեաւք ծերունին, զգահագլուխ քահանայ զՏէր Վահրամն, որ էր երաժշտապետ պանծալի և փակակալ Սուրբ Լուսաւորչին Գրիգորիս։

Երևանի Պետական ձեռագրատանը գտնվող «Գիրք հարցմանց» ձեռագրի հիշատակարանն ուրույն արժեք է ներկայացնում նաև նրանով, որ ընդգծում է երաժշտապետ Վահրամի մի այլ գեղեցիկ հատկությունը, իր միջավայրի ժողովրդից նա սիրվել է ու հարգվել ո՛չ միայն որպես «պանծալի երաժշտապետ», այլև որպես իր կոչման բարձրության վրա կանգնած մի պարտաճանաչ հոգևորական, որպես «գահագլուխ քահանա», որ նվիրվել է Հայ Եկեղեցու պաշտամունքին ու բարեզարդությանը։ Դա այն շրջանն էր, երբ նա Կիլիկիայի «Գրիգոր Լուսաւորիչ»-ի փակակալն էր։

Մի այլ հանգամանք նույնպես արժեքավորում է երաժշտապետ Վահրամ քահանայի կերպարը։ Դա նրա հոգում իշխող գրչական արվեստի սերն է։ 1427 թվականին երաժշտապետը Կիլիկիայից ուխտի է գնացել Երուսաղեմ՝ Քրիստոսի գերեզմանը համբուրելու։ Այդ ժամանակ նա Երուսաղեմի միաբան Կարապետ աբեղայից գնել է Գրիգոր Տաթևացու 1407 թվականին գրած «Գիրք հարցմանց» ձեռագիրը և իր հետ բերել է Կիլիկիա։ Այս մասին ձեռագիր հիշատակարանում կարդում ենք. «...Քանզի յայսմ ամի, որ էր թվական հայոց ՊՀ (870+551=1421) ամ, գացեալ յՍրուսաղէմ յերկրպագութիւն սուրբ տնտրինականացն Քրիստոսի, և տեսեալ զմատեանս աստուածային, ծաղկաւէտ բուրաստանս որպէս դրախտ վայելուչ և գեղեցիկ, հաւաքեալ ի սմա ծաղիկս զանազանս, բերելով զսա[յ] ի հայրենեաց ի նոյն վերոյ յիշեալ Կարապետ աբեղա[յ]է, որ էր յայնժամ փակակալ և սպասաւոր սուրբ դամբարանի Յակոբայ առաքելոյն»։

Երաժշտապետ Վահրամն իր միջավայրում հայտնի է դարձել նաև որպես լավագույն մանկավարժ։ Նա կրթել է և դաստիարակել երաժշտասեր մի ամբողջ սերունդ և նրա հոգում վառ պահել հայ եկեղեցական և աշխարհիկ երաժշտության սերը։

1421 թվականին գրված «Գիրք հարցմանց» ձեռագրի հիշատակարանն ուշագրավ է նաև այս տեսակետից, որ ցայտուն գույներով գծել է ընտանիքի տիպար և օրինակելի հայր հանդիսացող երաժշտապետի ընտանեկան կյանքի պատկերը, ուր տեսնում ենք վաստակավոր քահանայի տիրուհին՝ «բարեհամբաւ Եղներ», նաղելի դուստրը՝ տիկին Մարիոն, փեսան՝ պարոն Թորոսը և «սրամիտ, մաքուր և անբիծ սարկաւագ Հեթում որդին, որ 1421 թվականին, 18 տարեկան հասակում, վախճանվել է։ Նրա վաղաժամ մահը խոր վիշտ, կսկիծ և «անփարատելի» տրտմություն է պատճառել թե՛ ծնողներին և թե՛ բոլոր հարազատներին։ Ահա հիշատակարանի վկայությունը. «Արդ, ազաչեմ զձեզ զամենեսեան... յիշեցէք ի յերկնաթռիչ աղաւթս ձեր զվերոյգրեալ քահանայն զՎահրամն, և զբարի համբաւ ուղակիցն իւր զտիկին Եղներ, և զիւր նազելի դուստրն՝ տիկին Մարիոնն, և զփեսայն իւր՝ զպարոն Թորոսն, և զաստուածապարգև զաւակն իւր։ Այլ և զհանգուցեալ սիրոն որդիսկն իւրեանց, զսրամիտ, զմաքուր և զամբիծ սարկաւագն, որոյ անուն յորջորջէր Հեթում, քանզի յայսմ ամի, որ է թվական հայոց ՊՀ (870+551=1421) ամ, ի յունիս ամսոյ ԺԱ (11) և պատկեր ատուն չորեքշաբթի, փոխեցաւ առ Քրիստոս յոյսն ամենեցուն և գնաց տարաժամ յաշխարհէս, զի էր ամաց Ժ և Ը-ից (18) և եթող մեծ սուգ և անփարատելի տրտմութիւն իւր ծնողացն և ամենայն զարմիցն, ևս առաւել մեզ, քանզի ի մանկութենէ ի վեր սնուցե[ա]լ էաք գորովալիր աղեսիւքս։

թէ ո՞ր թվականին է վախճանվել վաստակավոր երաժշտապետը և ո՞ր պատմական վանքի կամարների ներքո հանգչում են նրա աճյունները, ստույգ տեղեկություններ չկան։ Պարզ է միայն, որ նա ապրել է մինչև խորին ծերությունը և իր գեղարվեստական գործունեության ընթացքում հայ երաժշտական արվեստի ջահը միշտ վառ է պահել, միաժամանակ նպաստել է նոր սերընդի երաժշտական կրթության վեհ գործին։ Այդ էական հատկանիշներով էլ երաժշտապետ Վահրամ քահանան առանձնահատուկ տեղ է գրավում հայ երաժշտական արվեստի պատմության մեջ։

Բ

ԵՐԱԺՇՏԱՊԵՏ ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ

(ԺԵ դար)

ԺԵ դարի հայ երաժշտության պատմության էջերն ուսումնասիրելիս տեսնում ենք նաև երաժշտապետ Սահակ վարդապետի դիմապատկերը, որի մասին, սակայն, հայ գեղարվեստի պատմության մեջ մինչև օրս էլ դեռ որևէ տող չի արձանագրված։

Իր երաժշտական պատրաստությամբ և քաղցր ձայնով նա վայելել է իր ժամանակի ժողովրդի սերն ու հարգանքը, միաժամանակ հայտնի է դարձել որպես «կորովամիտ բանասէր» և լավագույն մանկավարժ։ Ամբողջ հոգով նա նվիրվել է նոր սերնդի երաժշտական կրթությանը և հայ ժողովրդին պարգևել է գեղարվեստասեր պատանիներ ու երիտասարդներ։ Նրա ներախտագետ աշակերտներից մեկն է վաստակավոր գրիչ Ավետիք վարդապետը, որի 1416 թվականին գրած «Ժողովածու մեկնութեանց» խորագրով ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «...Այլ և եղկելիս յամենայնի և թշուառացեալս ոգի, անարժանս և յեանեալս յամենայնի Աւետիք... գծող այսմ տառի... աղաչեմ յիշել ի Տէր զհոգևոր հայրս իմ և զյոյժ երախտաւոր ուսուցիչս իմ զՏէր Սահակ բանի սպասաւորս և զքաղցրաձայն երաժիշտս... ի թվականիս ՊԿԵ» (865+551=1416)։

Վաստակավոր երաժշտապետի գործունեության գլխավոր վայրը Երզնկայից դեպի արևմուտք փռված Կապոսի պատմական վանքը, որ եղել է իր ժամանակաշրջանի հայ մշակույթի և երաժշտական ու գրական արվեստների զարգացման մի գլխավոր կենտրոնը։ Դեռ 1412 թվականին վաստակավոր գրիչ Ոստակես Սեբաստացին Ավագ վանքում գրած «Լուծմունք իմաստասիրական գրոց Յովհաննու Որոտնեցւոյ» խորագրով ձեռագրի հիշատակարանում արձանագրել է Կապոսի վանքի անունը։ Ահա գրչի սեղմ տողերը. «...Ո՜հ, զի Աստուածածնին կրեցի զթուրթս ի յԱւագ վանքն և Ստուրբ Յակոբիս՝ ի Կափոսիս կուգրեմ, սառնասառոյց ցրտութեամբ»։

Երաժշտապետ Սահակ վարդապետը Կապոսի մենաստանում ապրել է գ դարն և ի ԺԵնեայ ժամանակին։ Դա 1425 թվականն է, երբ «Աւետման բէկն՝ տէրն Աթմայր, արշավում է Եզնկի վրա, հրդեհում է գյուղերն ու տվանները և ավերում է վանքերը։ Նա հրդեհում է նաև հռչակավոր Կապոսի վանքը։ Անասելի ծանր դրություն է ստեղծվում նաև ժողովրդի համար։ Ժամանակակից գրիչ Ավետիքը 1425 թվականին իր ստացած ձեռագիր Աստվածաշնչի հիշատակարանում ժամանակի տխուր անցքերն արձանագրել է հետևյալ բնորոշ տողերով. «...Տարտամս և տառապեալս ոգւով Աւետիք աշակերտ բանի, ի Դարանաղեաց գաւառէ, ի վաղուց հետէ փափագեալ ընծայի այսմ վայելուչ... Աստուածաշունչ Հին և Նոր Կտակարանացս... կամակցութեամբ և օժանդակութեամբ բազմերախտ հօրս իմոյ հոգևորի Տէր Սահակ կորովամիտ բանասիրի և երաժշտապետի... տեսեալ զտենչանս իմ առ այս անգին մարգարիտս՝ օգնական եղեալ յորդորեաց զմեզ... Արդ, որք ժառանգէք զսա յետ մեր... յիշման արժանի արարէք ի բարին։ Մանաւանդ... զուսուցիչն իմ զՏէր Սահակ... Եւ ստացաք զամենագով Աստուածաշունչս ի թուականիս հայոց ՊՀԴ (874+551=1425), ի դառն և ի դժնեայ ժամանակի սովի, զի մեծ պատուհաս պատահեցաւ նեղեալս ցաւառիս... եկն տէրն Աթմայ ի վերայ Եզնկիս, և... հրդեհեաց զգեղաւանսն առհասարակ և զվանս։ Ցայս, ընդ որ և հռչակելի մենաստանս մեր Կապոսու վանքս հրդեհեալ աւերեցաւ։ Եւ երեք ամ ի խստար պահեաց զքաղաքն, և առեալ ապա խաղաղացոյց, և խնամօքն Աստուծոյ սկիզբն եղև շինութեան գաւառիս։ Որ և մեք, ողորմութեամբն Աստուծոյ նորոգեցաք զսուրբ անապատս պայծառ շինուածով՝ առաւել քան զառաջինսս»։

1425 թվականին գրված ձեռագիր հիշատակարանի այս տողերը վկայում են, որ հայ ժողովուրդը նույն թվականին քաղաքական ծանր օրեր է ապրել։ Բայց երբ խաղաղություն է տիրել, հայ ժողովրդի շինարար ոգին

նորից վերականգնել է Կապոսի պատմական վանքը՝ նախկին շենքից ավելի պայծառ ճարտարապետական շինվածքով։

Թե 1425 թվականից հետո երաժշտապետ Սահակ վարդապետը պատմական Կապոսի վանքում ինչ գործունեություն է ունեցել և որտեղ է գտնվում նրա գերեզմանը, հայտնի չէ։ Պարզ է միայն այն, որ նա ԺԵ դարի նոր սերնդի և հայ երաժշտության զարգացման խնդրում ուշագրավ դեր է կատարել։

Գ

ԵՐԱԺՇՏԱՊԵՏ ՍԱՐԳԻՍ

(ԺԵ դար)

Պատմական Կապոսի վանքի հպարտությունն ու պարծանքն է կազմում աքաջ երաժշտապետ Սարգիսը, որի հայտնության համար պարտական ենք իր լավագույն աշակերտ և վաստակավոր գրիչ Գրիգորին, որ գրել 1416 թվականին, Կապոսի մենաստանում, իր երաժշտապետ ուսուցչի հորդորանքով, գրում է «Քարոզգիրք Գրիգորի Տաթևացւոյ» խորագրով ձեռագիրը, որի հիշատակարանն արժեքավոր է կրկնակի տեսակետից. նախ՝ հիշատակում է իր սիրելի արվեստագետ ուսուցչի անունը, հետո, որպես ականատես և ականջալուր, գծում է ժամանակի քաղաքական մռայլ դեպքերի պատկերը։ Ահա գրչի տվյալները. «Փառք... որոյ ողորմութեամբն սկսայ և ուգնականութեամբն նորին աւարտեցի զփափագելի և զտենչալի զգիրս զայս քարոզաց, արարեալ երիցս երանեալ մեծ հռետորին Գրիգորի բարունապատին... Զոր ես եղկելիս, թափուրս յամենայն բարեգործութենէ, ծոյլս և տարտամս յամենայնի, Գրիգոր բանի սպասաւորս... Գրեցի զսա, մանաւանդ յորդորմամբ և նպաստաւորութեամբ բազմերախտ և գորովագութ հօրս իմոյ հոգևորի ուսուցչի Տէր Սարգիս բան սիրողի և քաջ երաժշտապետի, զոր Տէր Յիսուս գրեսցէ զսա՝ իւրաքն հանդերձ ի գիրն կենաց անչնջելի... Արդ, գրեցաւ սա ի սուրբ մենաստանիս, որ յորջորջեալ կոչի Կափոսի... ի թվականութեան հայկազեան տումարիս յաբեթականս տոհմի Ըմ-ներորդի Կ և Ե յաւելորդի (1416), ի դառն և յանբարի ժամանակի, ի վերջ եկեալ անցաւորիս։ Նաև առ մեզ կատարի բանն տէրունի, թէ՝ յատուն յայնոսիկ յարիցէ ազգ յազգի վերայ և եղիցին սրածութիւնք և մահք տարաժամք, զոր ՝ն միոյն ականատես եղաք և միւսոյն ականջալուր։ Քանզի առ մեզ եղեալ մահ սաստիկ յեկեղեցաց գաւառիս, զոր ով կարասցէ ընդգրով արձանել զաղէտս տարակուսանացս։ Այլև գնացեալ անօրէն բռնաւորն Խարուսուֆ կոչեցեալ, վառեալ չարութեամբ, և մտեալ ի տունն Վրաց, և առեալ զքաղաքն Ցախլծխա, և զամենեսեան, առհասարակ, զարսն ի սուրն սուսերի մաշեալ, և զկանայս և զմանկունս գերի վարեալ. և այլ այդպիսի յոլովս գոյ տեսանելի հասեալ ժամուս։

Ահա այս դառն ժամանակում ապրել է աքաջ երաժշտապետն Սարգիսը, որի հասարակական գործունեությունը և գեղարվեստական պայծառ կերպարն արժեքավորվում է նրանով, որ նա Կապոսի վանքում կրթել և դաստիարակել է իր ժամանակի երաժշտական ձիրքով օժտված նոր սերունդը և նրա սրտում միշտ վառ է պահել երաժշտական արվեստի սերը։

Գրիգոր գրչի ձեռքով մեզանից 540 տարի առաջ գրված հիշատակարանի տողերն ընդգծում են մի այլ հանգամանք, որ արվեստագետ Սարգիսը իր դարաշրջանում փայլել է իր երաժշտական խոր հմտությամբ և հռչակվել է որպես աքաջ երաժշտապետ, իսկ գորովագութ բնավորությամբ սիրվել է և հարգվել թե՛ իր աշակերտներից, թե՛ Կապոսի վանքի միաբաններից և թե՛ ժամանակի արվեստասեր ժողովրդից։

Դ

ԵՐԱԺՇՏԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԵՍ

(ԺԵ դար)

Երևանի Պետական մատենադարանի ձեռագրատանը մեր անգին պապերից ավանդ մնացած բազմաթիվ թանկագին ձեռագրերի շարքում գուրգուրանքով պահվում է նաև 1423 թվականին գրված մի Շարակնոց, որը պատկանում է Հովհաննես Եպիսկոպոս Անեցու պշին։ Ձեռագիրն արժեքավոր է ո՛չ միայն երաժշտական արվեստի տեսակետից, այլև նրանով, որ հիշատակարանում արձանագրված է ԺԵ դարում ապրող և հայ երաժշտության պատմության դեռ անհայտ մի վաստակավոր երաժշտապետ-ուսուցչի անունը։ Դա արվեստագետ Հովհաննեսն է, որի կենսագրության համար, դժբախտաբար, փաստական տեղեկություններ չկան, իսկ ձեռագրի հիշատակարանում ընդգծված են հետևյալ տողերը. «Գրեցաւ եղանակաւոր սաղմոս ի թուականութեանս հայոց ՊՀԲ (872+

551=1423), ձեռամբ տխմար և փցուն գրչի Հով[հաննէս] եպիսկոպոսի Անոյ, ի թանգրոյ հոգելից և շնորհաց աւթարանի՝ աշակերտի քաջ բարոյական Դաւիթոյ և Ճրագնաչեաց հարազատի իւրոյ Յով[հ]աննու երաժշտապետի։

Այս տողերն էլ նշում են, որ արվեստագետ Հովհաննեսը միջնադարի հայ երաժշտական արվեստի վաստակավոր մշակներից մեկն է, որ ապրել և գործել է ԺԵ դարի առաջին շրջանում։ Իր դարաշրջանում նա հայտնի է դարձել իր երաժշտական լուրջ կրթությամբ և հռչակվել է որպես երաժշտապետ, Իր հասարակական գործունեության ընթացքում նա ամբողջապես նվիրվել է հայ երաժշտական արվեստի զարգացմանը, միաժամանակ նոր սերնդին երաժշտական կրթություն է տվել և նրանց սրտերում վառ է պահել հոգևոր երաժշտության սերը։ Ահա թե ինչու նա արժանի է ուշադրության և դնահատության։ Նշենք է. այն, որ ձեռագիր «Շարակնոց»-ը «ոսկեճաճանչ զարդուք և զանազան գունովք» ծաղկել է ԺԵ դարի մանրանկարիչ Հովհաննես քահանան։ Ահա իր տողերը. «Որ և ես ըստ կարի տկարութեան իմոյ յուսով անմահին և սիրով Հոգւոյն Սրբոյ ծաղկեցի զսա ոսկեճաճանչ զարդուք և զանազան գունովք, ի յիշատակ հոգւոյ իմոյ, ծնողաց իմոց Վարդանայ և Խոնձի...»։

Ե

ԵՐԱԺԻՇՏ ՍԱՐԿԱՎԱԳ
(ԺԵ դար)

Միջնադարի հայ երաժշտագետների պայծառ կերպարները գծելու համար ձեռագրերի հիշատակարանները թանկագին աղբյուրներ են։ Այդ տեսակետից մի արժեքավոր ավանդ է ԺԵ դարի վաստակավոր գրիչ՝ Թումա Կաֆայեցու[2] 1422 թվականին, Տաթևի պատմական վանքում, ընդօրինակած մի ձեռագրի հիշատակարանը, ուր ցոլանում է հայ երաժշտության դեռ անծանոթ երաժշտապետ Սարկավագի դիմանկարը։

Նա մեկն է ԺԵ դարի այն վաստակավոր երաժշտապետներից, որ Տաթևի վանքում պաշտոնավարել է որպես «վարժապետ և ուսուցիչ», և, որ կարևորն է, փայլել է որպես «անհաս երաժիշտ և քաղցրաձայն փիլիսոփայ»։ Այդ գեղեցիկ բարեմասնություններով էլ նա սիրվել է իր ժամանակի ո՛չ միայն ուսանողներից, այլև ժողովրդից և հռչակվել է «մեծ պարոն տիտղոսով»։

Տաղանդավոր երաժշտի լավագույն աշակերտներից մեկն է վաստակավոր գրիչ Թումա Կաֆայեցին, որ 1422 թվականին ընդօրինակած մի ձեռագրի հիշատակարանում իր ուսուցչի մասին արձանագրել է թանկագին տողեր։ Բացեք նաև տաղանդավոր բանասեր, հնախոս, պատմագետ և բանաստեղծ Հ. Ղևոնդ Ալիշանի «Սիսական»-ը (էջ 241) և այնտեղ պիտի կարդաք հետևյալ բնորոշ տողերը. «Վարժապետ և դուսուցիչն, զանհաս երաժիշտն և քաղցրաձայն փիլիսոփայն, զմեծ պարոն Սարկաւագն, զուսուցիչն մանկանց նոր Սիոնի»։ Նշենք և այն, որ Հ. Ղևոնդ Ալիշանն իր «Սիսական»-ում արձանագրել է, թե Թումա Կաֆայեցու Ձեռագրի հիշատակարանի Սարկավագ երաժշտապետը Գրիգոր Տաթևացու հաջորդ Մխիթար Տաթևացին է։ Բայց էականն այդ չէ, այլ երաժիշտ Սարկավագի կերպարը։ Անժխտելի է, որ վաստակավոր «անհաս երաժիշտ»-ը իր երաժշտական հմտությամբ գրավել է իր ժամանակի ժողովրդի ուշադրությունն ու համակրանքը, իսկ հռչակավոր Տաթևի վանքում քայլել է որպես լավագույն մանկավարժ։ Պատմական մենաստանումն էլ նա դաստիարակել է երաժշտական ձիրքով օժտված պատանիներին ու երիտասարդներին և նրանց պայծառ հոգիներում վառ է պահել երաժշտական արվեստի սերը։ Անժխտելի է և այն, որ Սարկավագի գեղարվեստական և մանկավարժական բեղմնավոր գործունեությունը կարևոր նշանակություն է ունեցել հայ երաժշտական արվեստի զարգացման գործում։

[2] Այս նյութի համար կարդացել ենք Երևանի Պետական թանգարանի պատմագրական բաժնի և Էջմիածնի թանգարանի ձեռագրերի հիշատակարանները։ Նույնպես ուսումնասիրել ենք Մ. Տեր-Մովսիսյանի կազմած «Հայերեն ձեռագրերի ցուցակը», Հ. Ղևոնդ Ալիշանի արժեքավոր երկերի հիշատակարանները, Նոր-Ջուղայի «Ամենափրկիչ» վանքի մատենադարանի հայկական ձեռագրերի հիշատակարանները։ Օգտագործել ենք նաև Հ. Հակոբոս Տաշյանի «Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա» (1895 թ.), Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանի «Հիշատակարանք ձեռագրաց»-ը, Լ. Մ. Խալիկյանի «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ը և ուրիշներ։